



Համայնքների  
ֆինանսիստների միավորում



# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(2015թ.)

Գիրք 8

Խմբագրությունը՝ ՏՆՏ. ԳԻՏ. ԹԵԿՆՍՏՈՒ  
ԴՆՎԻԹ ԹՈՒՐԱՆՆԱԻ

ԵՐԵՎԱՆ  
  
«Վայն Մոյս»  
2016

Սույն գիրքը հրատարակվել է Ամերիկայի  
ժողովրդի աջակցությամբ ԱՄՆ Միջազգային  
գարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով:  
Այստեղ արտահայտված տեսակետները միմիային  
հեղինակներին են և պարտադիր չէ, որ  
արտահայտեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության  
տեսակետները:

ՀՏԴ 342.25(479.25)  
ԳՄԴ 67.401 (5Հ)  
S 300

**S 300 Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2015թ.),**  
Գիրք 8/խմբ. Դավիթ Թումանյանի - Եր.: 2016, 232 էջ:

Գիրքը պարունակում է Հայաստանի տեղական ինքնակառավարման վիճակի մշտադիտարկման 2015 թվականի զեկույցը:

Գիրքը նախատեսված է ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բնագավառներում քաղաքականություն մշակողների ու որոշումներ ընդունող պաշտոնյաների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, այդ բնագավառներով հետաքրքրվող հասարակության լայն խավերի համար:

© Համայնքների ֆինանսիստների միավորում  
© Դավիթ Թումանյան

ISBN 978-9939-70-179-0

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ ..... 5

## ՁԵԿՈՒՅՑ

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2015թ.)..... 8

1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումը ..... 8

1.1 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը ..... 12

1.2 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը ..... 12

1.3 Արտաքին պարտավորությունների կատարումը ..... 14

2. Վարչատարածքային բաժանումը և միջհամայնքային համագործակցությունը ..... 16

2.1 Վարչատարածքային բաժանումը ..... 16

2.2 Միջհամայնքային համագործակցությունը ..... 25

3. ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը, քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ..... 27

3.1 ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը ..... 27

3.2 Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ..... 37

4. Համայնքների սեփականությունը, զարգացման ծրագրերը և ֆինանսական անկախությունը ..... 42

4.1 Համայնքների սեփականությունը ..... 42

4.2 Համայնքների զարգացման ծրագիրը և բյուջետավարումը ..... 46

4.3 Համայնքի բյուջեի եկամուտները ..... 47

4.4 Պարտքի կառավարումը ..... 53

4.5 Ֆինանսական հաշվետվողականությունը ..... 53

5. ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանությունը ..... 55

6. Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համապատասխանությունը, միջազգային աջակցությունը ..... 73

6.1 ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները ..... 73

6.2 Համայնքային ծառայությունը ..... 81

6.3. Համայնքային ծառայողների վերապատրաստումը ..... 87

6.4 Միջազգային աջակցությունը ..... 90

7. Համայնքային ծառայությունների մատուցումը ..... 99

7.1 Համայնքների կողմից մատուցվող հանրային ծառայությունները ..... 99

7.2 Համայնքային ծառայությունների կառավարումը ..... 114

Եզրակացություններ և առաջարկություններ ..... 117

Գրականություն ..... 122

## Հապավումների ցանկ

**ԱՄՆ** -Ամերիկայի Միացյալ Նահանգներ

**ԱՄՆ ՄԶԳ**-Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման

Գործակալություն

**ԲՀԿ**-«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

**ԵԽ**-Եվրոպայի խորհուրդ

**ԵՀՔ**-Եվրոպական հարևանության քաղաքականություն

**ԵՄ**-Եվրոպական միություն

**ՀԿ** - հասարակական կազմակերպություն

**ՀԿՏՀ**-համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր

**ՀՀ**-Հայաստանի Հանրապետություն

**ՀՀԿ**-Հայաստանի հանրապետական կուսակցություն

**ՀՀՄ**-Հայաստանի համայնքների միություն

**ՀՅԴ**-Հայ յեղափոխական դաշնակցություն

**ՀՆԱ**- համախառն ներքին արդյունք

**ՀՈԱԿ**-համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

**ՀՖՄ**-Համայնքների ֆինանսիստների միավորում

**ՏԻՄ**-տեղական ինքնակառավարման մարմիններ

**ՏԻ**-տեղական ինքնակառավարում

**ՓՄԶ**-փոքր և միջին ձեռնարկություններ

**ՓԲԸ**-փակ բաժնետիրական ընկերություն

## ԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը նվիրված է Հայաստանում տեղական ինքնակառավարման 2015 թվականի բարեփոխումների գնահատմանը, որը կատարվել է Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագետների մշակած մեթոդաբանության հիման վրա: Բարեփոխումների գնահատման համար հիմք են ընդունվել ՀՀ կառավարության ծրագրերի՝ տեղական ինքնակառավարմանը վերաբերող դրույթների կատարումը, տեղական ինքնակառավարման համակարգի վիճակը բնութագրող ցուցանիշները, ՏԲՄ-երի կատարած աշխատանքները և միջազգային կազմակերպություններում Հայաստանի ստանձնած՝ տեղական ինքնակառավարմանը վերաբերող պարտավորությունների կատարումը:

ՀՖՄ-ն մասնակցում և հետևում է Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքին այդ համակարգի ներդրման սկզբից՝ 1996 թվականից: Անցած տարիների ընթացքում ՀՖՄ-ն հրատարակել է յոթ գիրք, որոնցում տրվել է բարեփոխումների ընթացքի գնահատականը, ինչպես նաև՝ արվել են բարեփոխումների շարունակմանը վերաբերող բազմաթիվ առաջարկություններ: Առաջին՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. Քաղաքականության տարբերակներ և ուղիներ» (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) գիրքը հրատարակվել է 2004-ին: Այդ հրատարակությունում տեղ են գտել 1996-ից մինչև 2004 թվականն ընկած ժամանակահատվածում տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքը լուսաբանող հոդվածներ:

Երկրորդը՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004–2006 թթ.)», գիրք 2 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2008-ին: Մա վերաբերում է 2004–2006 թթ. տեղական ինքնակառավարման բարեփոխումների գնահատականին:

Երրորդը՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007 և 2008թթ.)», գիրք 3 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2009-ին: 2007 թվականից սկսած ՀՖՄ-ն տեղական ինքնակառավարման բարեփոխումների գնահատումը կատարում և հանրությանն է ներկայացնում զեկույցների ձևով: Դրանք կազմված են նույն ձևաչափով և պարունակում են բարեփոխումների գնահատականներն ըստ տեղական ինքնակառավարման առանձին բնագավառների. վարչատարածքա-

յին բաժանում և միջհամայնքային համագործակցություն, համայնքային սեփականություն, ֆինանսներ, ՏԻՄ-երի ընտրություններ և գործունեություն, տեղական ժողովրդավարություն, վարչական կառուցվածքներ և համայնքային ծառայությունների մատուցում:

Չորրորդը՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009 և 2010թթ.)», գիրք 4 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2011-ին:

Հինգերորդը՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011թ.)», գիրք 5 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2012-ին:

Վեցերորդը՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2012թ. և 2013թ.)», գիրք 6 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2015-ին:

Յոթերորդը՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2014թ.)», գիրք 7 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2015-ին:

Այս գիրքը Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների վերաբերյալ ՀՏՄ-ի ութերորդ հրատարակությունն է:

Գրքում, բացի Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների ընթացքի լուսաբանումից, տեղ են գտել նաև այդ ոլորտում առկա հիմնախնդիրները և արվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

# ՁԵԿՈՒՅՉ

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում  
(2015թ.)

Ձեկույցը պատրաստել են ՀՖՄ-ի փորձագիտական խմբի անդամներ  
Դավիթ Թումանյանը, Վահրամ Շահբազյանը,  
Զնարիկ Այվազովան (Արարյանը), Լևոն Թումանյանը,  
Վահե Սարգսյանը և Ռուբեն Հայրապետյանը

# 1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումը

## 1.1 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը

### *Սահմանադրական դրույթների օրենսդրական արտացոլումը*

Մինչև 2015 թվականի սկիզբը 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով նախատեսված տեղական ինքնակառավարմանը վերաբերող դրույթներին համապատասխան օրենսդրական փոփոխություններ չէին կատարվել կամ կատարվել էին մասնակիորեն: Դրանց թվում էին՝

- ա) Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով սահմանում է տեղական հարկեր (հոդված 107):
- բ) Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է օրենքով (հոդված 107):
- գ) Համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները սահմանվում են օրենքով (հոդված 110):
- դ) Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ (հոդված 110):

2015 թվականին էլ համայնքների ավագանիներին հնարավորություն չի տրվել սահմանել տեղական հարկեր: Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին», «Հարկերի մասին», և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքների՝ տեղական հարկեր էին սահմանված գույքահարկը, հողի հարկը և հյուրանոցային հարկը: «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքները գործում են վաղուց, և դրանցով են սահմանված այդ հարկերի դրույքաչափերը, չնայած դրանք անվանվել են տեղական հարկեր, իսկ համաձայն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ դրանց «...դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են սահմանել օրենքով նախատեսված շրջանակներում»<sup>1</sup>: Այս առումով, այդ օրենքները հակասում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, քանի որ տեղական հարկ անվանված գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերի սահմանման իրավունքը չի տրվել ՏԻՄ-երին: Համայնքի ավագանուն է տրվել միայն հյուրանոցային հարկի դրույքաչափի սահմանման իրավունքը, սակայն 2015-ի ընթացքում էլ չընդունվեց «Հյուրանոցային

<sup>1</sup> Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդված 9.3:



հարկի մասին» ՀՀ օրենքը<sup>2</sup>, որը հնարավորություն կտար համայնքների ավագանիներին՝ գործնականում իրացնել այդ իրավունքը:

Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգերը (այդ թվում, պարտադիր և պատվիրակված լիազորությունների մասով) օրենքով սահմանելը 2015-ին զարգացումներ չի ունեցել:

2015թ. որոշակի զարգացումներ եղան համայնքների խոշորացման ուղղությամբ: Այդ ժամանակ գործող Սահմանադրությամբ պարտադիր պահանջ էր խոշորացվող համայնքներում անցկացնել տեղական հանրաքվեներ: Համայնքների խոշորացման երեք փնջերի (Դիլիջանի, Թումանյանի և Տաթևի) համայնքներում նշանակվեցին տեղական հանրաքվեներ: 1915թ. մայիսի 17-ին այդ երեք փնջերում անցկացվեցին տեղական հանրաքվեներ (արդյունքները տրված են սույն զեկույցի «Վարչատարածքային բաժանումը և միջհամայնքային համագործակցությունը» բաժնում):

Համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները սահմանվեցին «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում կատարված լրացումներով:

Տարվա ընթացքում չընդունվեց միջհամայնքային միավորումների մասին օրենք:

Այսպիսով, սահմանադրական փոփոխություններով նախատեսված օրենսդրական փոփոխությունների իրականացման աշխատանքները 2015-ին, որոշ չափով, շարունակվել են, և գրանցվել է մեկ արդյունք:

Սակայն ՀՀ Սահմանադրության որոշ դրույթները օրենքներում այդպես էլ չարտացոլվեցին, որովհետև ղեկտեմբերի 6-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունվեց նոր Սահմանադրությունը, որում բացակայում են հին Սահմանադրության տեղական ինքնակառավարմանը վերաբերող շատ դրույթներ: Դրա փոխարեն այնտեղ տեղ են գտել նորերը:

Նոր Սահմանադրությունում հնից պահպանված դրույթները, որոնք պահանջում են օրենսդրական արտացոլումներ, հետևյալներն են՝

Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային Ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը (հոդված 190):

Տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու

<sup>2</sup> Դեռևս 2009-ի տարեվերջին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ՀՀ կառավարություն էր ներկայացրել ՀՖՄ-ի մշակած «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: 2010-ին ՀՀ կառավարությունը դա ետ էր ուղարկել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն շահագրգիռ կողմերի հետ լրացուցիչ քննարկելու համար: Քննարկումների արդյունքում, չնչին փոփոխություններով, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախագիծը տարվա վերջին կրկին ներկայացրել էր ՀՀ կառավարություն, սակայն օրինագծին ընթացք չի տրվել:

նպատակով համայնքների ավագանիները կարող են ստեղծել միջհամայնքային միավորումներ: Հանրային շահերից էլնելով՝ միջհամայնքային միավորումներ կարող են ստեղծվել նաև օրենքով՝ կառավարության առաջարկությամբ (հոդված 189.1):

Նոր Սահմանադրությունում տեղ գտած նոր դրույթները, որոնք պահանջում են օրենսդրական արտացոլումներ, հետևյալներն են՝

Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը սահմանվում է Ընտրական օրենսգրքով (հոդված 181):

Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով (հոդված 182.1):

Համայնքի ավագանին օրենքով սահմանված դրույքաչափերի շրջանակներում սահմանում է տեղական հարկեր (հոդված 185.3):

Համաձայն Սահմանադրության 210 հոդվածի՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցվում է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից, իսկ Ընտրական օրենսգիրքը ուժի մեջ է մտնում 2016թ. հունիսի 1-ից:

Նոր Սահմանադրության ընդունումից հետո մինչև 2015թ. վերջը քիչ ժամանակ էր մնացել և վերը նշված դրույթների օրենսդրական արտացոլում չի կատարվել:

2015-ին չի ընդունվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (հոդված 59) և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով (հոդված 30) նախատեսված համայնքային արժեթղթերի մասին օրենքը:

### ***Տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենքների փոփոխությունները և լրացումները***

2015 թվականին տեղական ինքնակառավարմանը վերաբերող նոր օրենքներ չեն ընդունվել, իսկ գործող օրենքներում կատարվել են մի շարք փոփոխություններ ու լրացումներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ Ազգային ժողովի կողմից ընդունված վեց օրենքներով: 2015թ. փետրվարի 26-ին ընդունված օրենքով լրացումներ կատարվեցին համայնքի ղեկավարի քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարությունների ծառայությունների բնագավառում ունեցած լիազորություններում, ինչպես նաև՝ ընդունվեցին սահմանափակումներ այն շենքերի և շինությունների համար, որտեղ իրականացվում են հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարությունների ծառայություններ, ապրիլի 29-ին ընդունված

օրենքով փոփոխություն կատարվեց համայնքի ղեկավարի՝ գերեզմանատների գործունեության կազմակերպման լիազորություններում, իսկ 2015թ. հունիսի 19-ին ընդունված օրենքով փոփոխություն և լրացում կատարվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, որով վարչական բնույթի լիազորություն տրվեց համայնքի ղեկավարին (տես՝ բաժին 3.1):

2015թ. նոյեմբերի 24-ին ընդունված օրենքով փոփոխություններ և լրացումներ կատարվեցին համայնքների խոշորացման գործընթացին առնչվող հարցերում՝ մասնավորապես սահմանվեցին նոր ձևավորված համայնքներում ՏԻՄ-երի ընտրության ժամկետները (տես՝ բաժին 2.1): Դեկտեմբերի 7-ին ընդունված օրենքով փոփոխություններ կատարվեցին համայնքի զարգացման քառամյա ծրագրին վերաբերող հոդվածում (տես՝ բաժին 4):

2015թ. դեկտեմբերի 21-ին ընդունված օրենքով՝ «առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման արգելքը 2016թ. -ից» հետո ձևակերպումը երկարացվեց 2021 թվականից հետո:

2015թ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում կատարվել են հինգ փոփոխություններ և լրացումներ: Դեկտեմբերի 7-ին ընդունված օրենքով փոփոխություններ են կատարվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում, որով հնարավորություն է տրվել համայնքի ավագանուն համայնքի տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների տարբերակված դրույքաչափեր՝ իր սահմանած գոտիավորմանը համապատասխան: Նոյեմբերի 24-ին ընդունված օրենքով կատարվել են խմբագրական բնույթի փոփոխություններ: Հունիսի 19-ին ընդունված օրենքով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում նույն օրը կատարված փոփոխությունը, որով վարչական բնույթի լիազորություն էր տրվել համայնքի ղեկավարին, արտացոլվեց նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում: Ապրիլի 29-ին ընդունված օրենքով փոփոխություններ կատարվեցին որոշ տեղական տուրքերի դրույքաչափերում: Փետրվարի 26-ին ընդունված օրենքով սահմանվեց նոր տեղական տուրք (տես՝ բաժին 4):

Մեկ փոփոխություն է կատարվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում (տես՝ բաժին 4-ը)՝ փոխվել են որոշ տարեթվեր:

«Հայաստանի Հանրապետության վաչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է նոյեմբերի 24-ին) կատարվեցին լրացումներ համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքների և կարգի վերաբերյալ (տես՝ բաժին 2.1):

Ազգային Ժողովի կողմից ընդունված երկու օրենքներով լրացումներ են կատարվել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում (տես՝ բաժին 3.1-ը):

## **1.2 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը**

2015-ին շարունակել է գործել 2014թ. մայիսի 22-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագիրը (տես՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում», 2014թ., գիրք 7, ներդիր 1): Այդ ծրագրով նախատեսված տեղական ինքնակառավարմանը վերաբերող բազմաթիվ գործողություններից քչերն են իրականացվել, որոնց թվում են համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերը, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով ՏԻՄ-երի կարողությունների զարգացումը, համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորումը: Ծրագրի որոշ գործողություններ սկսել են կատարվել:

ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442 – Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (տես՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում», 2014թ., գիրք 7, ներդիր 2) տեղական ինքնակառավարմանը նվիրված գործողություններից նույնպես քչերն են իրականացվել: Դրանք այն գործողություններն են, որոնք նախատեսված են նաև ՀՀ կառավարության ծրագրով:

### ***Տեղական ինքնակառավարման ոլորտի զարգացման համար պատասխանատու պետական մարմինների գործունեության գնահատումը***

Տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումների ու զարգացման համար պատասխանատու պետական մարմիններն են՝ ՀՀ Ազգային ժողովը և կառավարությունը:

ՀՀ Ազգային ժողովի Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովը 2015 թվականին գումարել է նիստեր և Ազգային ժողովի լիազույժ նիստերի օրակարգերում ընդգրկելու համար հավանություն տվել տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրինագծերի: Հանձնաժողովը, նախորդ տարիների նման, բավարարվել է ՀՀ կառավարության ներկայացրած օրինագծերի քննարկումների կազմակերպմամբ ու դրանց ընթացք տալով և տեղական ինքնակառավարման վերաբերյալ օրինագծերի մշակման նախաձեռնություն հանդես չի բերել:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ տեղական ինքնակառավարման ոլորտի պետական լիազորված մարմինը, 2015 թվականին աշխատանքներ է տարել օրենքների նախագծեր

մշակելու, մշակված օրենքների նախագծերի քննարկումներ կազմակերպելու, լրամշակելու և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ:

Հայաստանը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան վավերացրել է 2002թ.՝ բացառությամբ մի քանի հոդվածների (հոդվածներ 5 և 6, 7.2 և 10.3): ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը 2015-ին աշխատանքներ է տարել այդ հոդվածների վավերացման գործընթացի կազմակերպման ուղղությամբ (ՀՀ Ազգային Ժողովը դրանք վավերացրել է դեկտեմբերի 8-ին): Նախարարությունը մշակել է համայնքների խոշորացման երեք պիլոտային ծրագրերը, տեղական հանրաքվեների անցկացման որոշումների նախագծերը, համայնքների խոշորացմանը վերաբերող համապատասխան օրենքների նախագծերը, շարունակել է կոշտ կենցաղային թափոնների ոլորտի ծրագրերի իրականացումը:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը 2015թ. նոյեմբերի 10-ին Ջերմուկ քաղաքում կազմակերպել է գյուղական համայնքների 5-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցել են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Համաժողովի ընթացքում ներկայացվել են զեկուցումներ, քննարկվել են տեղական ինքնակառավարմանը վերաբերող հարցեր:

Տարվա ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը շարունակել է արդյունավետ համագործակցությունը միջազգային և տեղական կազմակերպությունների հետ:

Շարունակվել է նախարարության հրապարակային և թափանցիկ աշխատանքի բարելավումը: Տարվա ընթացքում ավելի են ուժեղացել նախարարություն – համայնքներ գործնական կապերը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին 2014թ. նոյեմբերի 17-ի ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՆՀ-602-Ն հրամանագրի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը վերակազմակերպվել էր՝ միացվելով ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը, իսկ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը վերանվանվել էր ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության: 2015թ. ցույց տվեց, որ այդ փոփոխությունը երկու նախարարությունների մեխանիկական միացում էր և որևէ դրական արդյունք չտվեց:

### 1.3. Արտաքին պարտավորությունների կատարումը

Հայաստանը, լինելով Եվրոպայի խորհրդի անդամ երկիր, որոշ պարտավորություններ ունի այդ կազմակերպության առջև՝ այդ թվում նաև տեղական ինքնակառավարման հարցերում: Պարտավորությունները վերաբերում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքները (խարտիան Հայաստանի օրենսդրության մաս է կազմում 2002թ. մայիսի 1-ից) և Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնարարականները Հայաստանի օրենսդրությունում ներառելուն և դրանց համապատասխան մեխանիզմները փաստացի կիրարկելուն: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների գործնական կիրարկման մասով Հայաստանում 2015-ին առաջընթաց չի արձանագրվել:

2013-ին Հայաստանը միացել է նաև Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությանը: Չնայած այդ նույն տարվա հունիսին ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որը վերաբերում էր տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությանը, սակայն 2015-ին գործնականում գրեթե չապահովվեց օրենսդրական դրույթների կիրարկումը:

2015-ին սկսել է գործել Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2015-2018թթ ծրագիրը, որի դրույթներից մեկը տեղական ինքնակառավարման բարեփոխումներին աջակցությունն է:

2015-ի դեկտեմբերի 11-ին Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը ընդունեց «Հետմոնիտորինգային Հայաստանի ճանապարհային քարտեզը», որում նշված է տեղական ինքնակառավարման ոլորտին առընչվող գործողությունների կատարումը:

Հայաստանը, ընդգրկված լինելով Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) և Արևելյան գործընկերության մեջ, որոշ պարտավորություններ ունի նաև Եվրամիության հանդեպ: Եվրամիություն-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրում որոշ դրույթներ են ամրագրված նաև տեղական ինքնակառավարման վերաբերյալ, որոնք Հայաստանի պարտավորություններն են՝ այդ ծրագրի իրականացման համատեքստում:

Նշված ծրագրի իրականացմանն է ուղղված ՀՀ Նախագահի 2014թ. ապրիլի 23-ի ՆԿ- 53-Ա կարգադրությամբ սահմանված ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015թթ. միջոցառումների ցանկը՝ ըստ տարիների (աղյուսակ 1): 2015-ի համար նախատեսված էր տեղական իշխանությունների մակարդակում ինտեգրացիայի զարգացումը, սակայն առանձնակի դրսևորում այն չի ստացել:

**Աղյուսակ 1. ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015 թվականներ ըի տեղական ինքնակառավարման զարգացմանն ուղղված միջոցառումների ցանկ**

Հ/Հ	Գերակա խնդիրները	Ակնկալվող արդյունքը	Իրականացման ենթակա միջոցառումները		Պասխանատու մարմինը
			2014թ.	2015թ.	
19.	Տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների իրականացում եվրոպական լավագույն փորձի կիրառմամբ	ՏԻՄ-երի կարողությունների զարգացում	Մասնակցություն Արևելյան գործընկերության տեղական ու տարածաշրջանային իշխանությունների հարթակի շրջանակներում իրականացվող միջոցառումներին	Տեղական իշխանությունների մակարդակում ինտեգրացիայի զարգացում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

Արևելյան գործընկերության շրջանակներում կարևոր հարթակ է Արևելյան գործընկերության տարածքային և տեղական իշխանությունների համաժողովը (CORLEAP), որում ընդգրկված են Արևելյան գործընկերության վեց երկրների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա) և Եվրամիության երկրների ներկայացուցիչներ: Համաժողովի նպատակները այդ երկրների տարածքային և տեղական իշխանությունների միջև համագործակցության զարգացումն ու այդ իշխանությունների կարողությունների հզորացումն են: Սեպտեմբերի 18-ին Երևանում կայացավ համաժողովի «Տեղական ժողովրդավարությունն Արևելյան գործընկերության անդամ երկրներում. հիմնական խնդիրները և ընթացիկ գործողությունները» միջազգային համաժողովը, որի ընթացքում ընդունվեց CORLEAP-ի գործողությունների 2016-2017թ.թ. պլանը:

## **2. Վարչատարածքային բաժանումը և միջհամայնքային Համագործակցությունը**

ՀՀ տարածքը 29 743 կմ<sup>2</sup> է, որի 68%-ը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, 11,2%-ը՝ անտառային, 11,1%-ը՝ հատուկ պահպանվող տարածքները և 8,8%-ը՝ այլ հողերը: ՀՀ տարածքի 36,6%-ը լեռներն են, բարձրավանդակներն ու այլ հողերը: Մնանա լճի հայելու մակերեսը՝ 1276,6 կմ<sup>2</sup> է:

Հայաստանի մշտական բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 2998,6 հազ. մարդ, որը 12,0 հազարով պակաս է նախորդ տարվա համեմատությամբ:

Համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, հանրապետության տարածքը բաժանված է 10 մարզերի և Երևանի քաղաքային համայնքի:

ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգում 2015թ. ընթացքում շարունակել են գործել 915 համայնքներ, որոնցից 866-ը՝ գյուղական, 49-ը քաղաքային:

### **2.1 Վարչատարածքային բաժանումը**

ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգում 2015թ. կատարվել են մի շարք էական, կարելի է ասել շրջադարձային փոփոխություններ: Վերջին տարիներին տարբեր ատյաններում շրջանառվում էր, որ գործող վարչատարածքային բաժանման համակարգը ոչ միայն չի նպաստում տեղական ինքնակառավարման ոլորտի զարգացմանը, այլև լուրջ խոչնդոտ է կառավարման համակարգի ապակենտրոնացման համար: Արդեն իսկ կարելի է արձանագրել, որ համայնքների խոշորացումը դառնում է իրողություն, ճիշտ է, դեռևս պիլոտային ծրագրերի տեսքով, սակայն փաստ է, որ վարչատարածքային բարեփոխումներն այլևս իրականություն են: 2015թ. նոյեմբերի 24-ին ընդունվել է «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը ներառում է բազմաբնակավայր համայնք հասկացությունը և դրա սահմանումը, համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, չափորոշիչները, նոր ձևավորված Թումանյան, Դիլիջան և Տաթև բազմաբնակավայր համայնքների կազմի մեջ մտնող բնակավայրերի ցանկը (աղյուսակ 2) և նրանց վարչական սահմանների նկարագրությունը:

Օրենքի 5-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Մեկից ավելի բնակավայր ընդգրկող համայնքի կենտրոնը և դրա անվանումը



սահմանվում են սույն օրենքով: Սույն օրենքի հավելված 2-ում նշված բազմաբնակավայր համայնքների կազմում նշված բնակավայրերի ցանկի առաջին տողում նշված բնակավայրը համարվում է համայնքային կենտրոն»:

**Աղյուսակ 2. Նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքները և նրանց կազմի մեջ մտնող Բնակավայրերը /Հոդված 6. Օրենքի հավելված 2-ի 2.5-րդ բաժնի 4-րդ, 2.8-րդ բաժնի 97-րդ, 2.10-րդ բաժնի 3-րդ կետերը/**

Մարզի անվանումը	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
Լոռի	4.Թումանյան	Թումանյան քաղաք
		Մարց գյուղ
		Քարինջ գյուղ
		Լորուտ գյուղ
		Շամուտ գյուղ
		Աթան գյուղ
		Ահնիձոր գյուղ
		Քոբեր գյուղ
		Սյունիք
Տաթև գյուղ		
Հալիձոր գյուղ		
Հարժիս գյուղ		
Սվարանց գյուղ		
Խոտ գյուղ		
Տանձատափ գյուղ		
Քաշունի գյուղ		
Տավուշ	3.Դիլիջան	Դիլիջան քաղաք
		Հաղարծին գյուղ
		Թեղուտ գյուղ
		Գոշ գյուղ
		Աղավնավանք գյուղ
		Հովք գյուղ
		Խաչարձան գյուղ
		Ճերմակավան գյուղ
		Գեղատափ գյուղ

Հողված 5.2-ով սահմանվել են համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները՝

1. տնտեսական նպատակահարմարությունը և զարգացման ապահովումը.
2. հանրային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը.
3. մարդկային/մասնագիտական/ ռեսուրսներով ապահովվածությունը.
4. տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության ապահովումը.
5. ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցների հասանելիության ապահովումը.
6. արդյունավետ կառավարման իրականացումը:

Համայնքների խոշորացման օրենսդրական փաթեթով, որում ընդգրկված նաև «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, համայնքների միավորման կամ բաժանման արդյունքում նոր ձևավորված համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրությունները նշանակվում են ՀՀ կառավարության որոշմամբ՝ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 40-օրյա ժամկետի վերջին կիրակի օրը՝ այսինքն 2016թ. փետրվարի 14-ին:

Վերը նշված օրենքով սահմանվեց, որ բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված, 100-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ համայնքի կենտրոնի, պետք է ունենա մեկ վարչական ներկայացուցիչ, իսկ 100-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրերում վարչական ներկայացուցչի լիազորություններից բխող գործառույթների իրականացումն ապահովում է աշխատակազմը<sup>3</sup>: Ընդ որում, վարչական ներկայացուցչի պաշտոնը հայեցողական պաշտոն է, իսկ վարչական ներկայացուցչի պահպանման ծախսերը պետք է առանձին տողով ներկայացվեն համայնքի բյուջեում:

Վարչական ներկայացուցիչը, բնակավայրի տարածքում գործելով համայնքի ղեկավարի անունից, պետք է հետևի բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ ներկայացնի համայնքի ղեկավարին: Նա նաև պարտավոր է աջակցել և կազմակերպել իր բնակավայրում համայնքի ավագանուն, համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին վերապահված լիազորությունների մի

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 91 (1180), Երևան, 2015, հոդված 5:

մասի իրականացումը: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է համայնքի բնակիչների ընդունելությանը, հանրային հանդիպումների ու քննարկումների կազմակերպմանը, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովմանը, տեղական հարկերի, տուրքերի և վճարների, ինչպես նաև համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը կազմակերպելուն և այլն<sup>4</sup>: Սակայն, բնականաբար, վարչական շրջանի ներկայացուցիչը տեղական ինքնակառավարման առանձին մարմին չէ, և հետևաբար համայնքի ղեկավարը բնակիչների առջև պատասխանատու է վարչական ներկայացուցչի գործունեության համար:

ՀՀ կառավարության 19.03.2015թ. 269-ն, 270-ն և 271-ն որոշումներով ՀՀ Լոռու մարզի Թումանյանի, Մարցի, Քարինջի, Լորուտի, Շամուտի, Աթանի, Ահնիձորի համայնքները միավորելու, ՀՀ Սյունիքի մարզի Շինուհայրի, Տաթևի, Հալիձորի, Հարժիսի, Սվարանցի, Խոտի, Տանձատափի, Քաշունի համայնքները միավորելու, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, Հաղարծնի, Թեղուտի, Գոշի, Աղավնավանքի, Հովքի, Խաչարձանի, Ճերմակավանի, Գեղատափի համայնքները միավորելու նպատակով 2015 թվականի մայիսի 17-ին նշանակվել են տեղական հանրաքվեներ:

Համաձայն ՀՀ ԿԸՀ տվյալների, ընդհանուր առմամբ բոլոր երեք փնջերում բնակչությունը գերակշիռ մեծամասնությամբ կողմ է քվեարկել նշված համայնքների միավորմանը (աղյուսակ 3):

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 21 (196), Երևան, 2002, հոդված 29.2:

**Աղյուսակ 3. Տեղական հանրաքվեների արդյունքներն ըստ համայնքների և փնջերի**

Համայնքների անվանումը	Բնակչության թիվը	Հանրաքվեին մասնակցությունը			Քվեարկության արդյունքները			
		Իրավունք ունեցող անձանց թիվը	Քվեարկության մասնակիցների թիվը	Կշիռը %	"ԱՅՈՒՄ" Քվեաթերթիկները		"ՈՉ" Քվեաթերթիկները	
					Թիվը	Կշիռը	Թիվը	Կշիռը
Թումանյանի փունջ	4698	3740	1482	39.63%	1007	67.95%	424	28.61%
Աթան	254	210	99	47.1%	42	42.4%	55	55.6%
Ահնիձոր	211	176	75	42.6%	33	44.0%	40	53.3%
Թումանյան	1896	1535	634	41.3%	576	90.9%	36	5.7%
Լորուտ	887	718	245	34.1%	125	51.0%	115	46.9%
Մարց	483	384	139	36.2%	99	71.2%	31	22.3%
Շամուտ	303	238	85	35.7%	19	22.4%	64	75.3%
Քարինջ	664	479	205	42.8%	113	55.1%	83	40.5%
Դիլիջանի փունջ	26577	20432	5651	27.6%	4140	73.26%	1291	22.85%
Աղավնավանք	344	267	159	59.5%	140	88.1%	17	10.7%
Գոշ	1137	815	296	36.3%	103	34.8%	172	58.1%
Դիլիջան	18675	14668	3778	25.8%	3317	87.8%	344	9.1%
Թեղուտ	1583	1138	415	36.5%	167	40.2%	222	53.5%
Խաչարձան	367	275	130	47.3%	94	72.3%	27	20.8%
Հաղարծին	4039	2950	720	24.4%	243	33.8%	444	61.7%
Հովք	432	319	153	47.9%	76	49.7%	65	42.5%
Տաթևի փունջ	6140	4396	2668	60.7%	2513	94.19%	118	4.42%
Խոտ	936	660	380	57.6%	365	96.1%	12	3.16%
Հայիձոր	600	443	229	51.7%	173	75.5%	38	16.6%
Հարժիս	784	570	334	58.6%	304	91.0%	30	8.9%
Շինուհայր	2584	1766	1098	62.1%	1079	98.3%	15	1.4%
Սվարանց	289	224	145	64.7%	140	96.6%	2	1.4%
Տաթև	842	651	418	64.2%	389	93.1%	21	5.0%
Տանձատափ	85	64	48	75.0%	47	97.9%	0	0.0%
Քաշունի	20	18	16	88.9%	16	100.0%	0	0.0%

Սակայն եղել են նաև առանձին համայնքներ, որոնք դեմ են արտահայտվել միավորմանը (Թումանյանի փնջում՝ Աթան, Ահնիձոր և Շամուտ, Դիլիջանի փնջում՝ Գոշ, Թեղուտ և Հաղարծին): Եթե ակտիվությամբ աչքի են ընկել Տաթևի փնջի համայնքները, որտեղ քվեարկությանը մասնակցել է ընտրելու իրավունք ունեցողների 60,69%-ը, ապա նույնը չի կարելի ասել Թումանյանի և Դիլիջանի փնջերի մասին, որտեղ տեղական հանրաքվեներին մասնակցել են ընտրելու իրավունք ունեցողների համապատասխանաբար՝ 39,63%-ը և 27,8%-ը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ համայնքների բնակիչները հիմնականում այնքան էլ դրականորեն չեն վերաբերվում խոշորացմանը, և եթե սրան ավելացնենք, որ փոփոխությունների նկատմամբ մեր երկրում կա հավատի և վստահության պակաս, ապա պարզ է դառնում այդ գործընթացի առաջիկա դժվարությունները:

Հայաստանի մեկ համայնքին ընկնող միջին տարածքը (ընդգրկված չէ միայն Սևանա լճի մակերեսը) 2015թ. ընթացքում չի փոխվել և 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 31,1 կմ<sup>2</sup>, առանց Երևան համայնքի՝ 30,9 կմ<sup>2</sup>, իսկ ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի 22,4 կմ<sup>2</sup>, առանց Երևան համայնքի՝ 22,2 կմ<sup>2</sup>: Մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվը կազմել է 3277 մարդ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 13-ով, իսկ առանց Երևան համայնքի՝ 2105 մարդ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 40-ով: Մեկ համայնքին ընկնող միջին տարածքի և բնակչության ցուցանիշներով Հայաստանը Եվրոպայի խորհրդի երկրների մեջ դեռևս վերջին շարքերում է:

Հայաստանի համայնքների 30,0%-ը ունի 500-ից պակաս բնակչություն, 49,3%-ը՝ 1000-ից պակաս, 42,7%-ը՝ 1001-5000, 5%-ը՝ 5001-10000, իսկ 3%-ը՝ 10001-ից ավելի բնակիչ (աղյուսակ 4): Մեկ միլիոնից ավելի բնակչություն ունի միայն Երևան համայնքը (2016թ հունվարի 1-ի դրությամբ՝ 1074,3 հազ. մարդ, որը 2,8 հազարով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ) որը չի մտնում որևէ մարզի տարածքի մեջ: 100 000-ից ավելի բնակչություն ունի միայն Շիրակի մարզի Գյումրի քաղաքը:

**Աղյուսակ 4. ՀՀ համայնքների թիվը (այդ թվում քաղաքային/գյուղական) ըստ մարզերի և բնակչության ընտրված միջակայքերի (01.01.2016թ. դրությամբ)**

Մարզերը	Մինչև 500	501-1000	1001-5000	5001-10000	10001-15000	15001-50000	50001-100000	100001-100000	Ընդամենը
Արագածոտն քաղաք/գյուղ	36	37	36	4		1			114
	0/36	0/37	0/36	2/2		1/0			3/111
Արարատ քաղաք/գյուղ	4	13	70	6	1	3			97
	0/4	0/13	0/70	0/6	1/0	3/0			4/93
Արմավիր քաղաք/գյուղ	5	6	80	4		2			97
	0/5	0/6	0/80	1/3		2/0			3/94
Գեղարքունիք քաղաք/գյուղ	28	18	31	11	2	2			92
	0/28	0/18	0/31	1/10	2/0	2/0			5/87
Լոռի քաղաք/գյուղ	46	17	42	4	3		1		113
	0/46	1/17	2/40	1/3	3/0		1/0		8/105
Կոտայք քաղաք/գյուղ	7	12	35	9	1	3			67
	0/7	0/12	1/34	2/7	1/0	3/0			7/60
Շիրակ քաղաք/գյուղ	42	31	41	3		1		1	119
	0/42	0/31	0/41	1/2		1/0		1/0	3/116
Սյունիք քաղաք/գյուղ	72	18	15	1	1	2			109
	1/71	0/18	2/13	1/0	1/0	2/0			7/102
Վայոց Ձոր քաղաք/գյուղ	21	5	15	3					44
	0/21	0/5	0/15	3/0					3/41
Տավուշ քաղաք/գյուղ	12	16	30	2		2			62
	0/12	0/16	1/29	2/0		2/0			5/57
<b>Ընդամենը քաղաք/գյուղ</b>	<b>273</b>	<b>173</b>	<b>395</b>	<b>47</b>	<b>8</b>	<b>16</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>914</b>
	<b>1/274</b>	<b>1/175</b>	<b>6/385</b>	<b>14/32</b>	<b>8/0</b>	<b>16/0</b>	<b>1/0</b>	<b>1/0</b>	<b>48/866</b>

Աղյուսակ 5-ում, 6-ում և 7-ում ցույց է տրված նախադպրոցական, կրթական, մարզական, առողջապահական, սննդի անվտազության, անասնաբուժական, արտակարգ իրավիճակների կազմակերպությունների, ինպես նաև մանրածախ առևտրի օբյեկտների տեղաբաշխումն ըստ մարզերի:

2015թ. ընթացքում երաժշտական, արհեստագործական, միջին մասնագիտական, մարզական, սննդի անվտանգության, անասնաբուժական և արտակարգ իրավիճակների կազմակերպությունների թիվը և տեղաբաշխումը ըստ մարզերի էական փոփոխությունների չեն ենթարկվել: Ավելացել է նախադպրոցական կազմակերպությունների թիվը Երևան քաղաքում և Շիրակի մարզում, իսկ Լոռու մարզում մի փոքր նվազել է, ավելացել է նաև հանրակրթական դպրոցների թիվը՝ հիմնականում Երևան քաղաքում, նվազել է Շիրակի և Վայոց Ձորի մարզերում: Երեքով նվազել է ԲՈՒՀ-երի թիվը՝ Կոտայքի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում: Նվազել է նաև ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների թիվը՝ հիմնականում Սյունիքի մարզում, իսկ Երևան քաղաքում մի փոքր ավելացել է:

Նշենք, որ կարևոր ծառայություններ մատուցող կազմակերպությունները հիմնականում կենտրոնացած են քաղաքներում՝ մարզային և նախկին շրջանային կենտրոններում: Քիչ են այն գյուղական համայնքները, որտեղ գործում են առողջապահական, մարզական, երաժշտական և արվեստի դպրոցներ:

**Աղյուսակ 5. Նախադպրոցական հաստատությունների, հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցների, արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, բուհ-երի և մարզական կազմակերպությունների թիվը՝ ըստ մարզերի**

Մարզերը	Նախադպրոցական	Հանրակրթական	Երաժշտական և արվեստի	Արհեստագործական	Միջին մասնագիտական	Բուհեր	Մարզական
ք. Երևան	214	257	49	12	37	51	55
Արագածոտն	23	122	10	2	1	-	7
Արարատ	77	112	23	1	4	-	7
Արմավիր	57	123	14	1	5	2	6
Գեղարքունիք	44	126	15	3	9	2	9
Լոռի	64	168	17	4	9	2	18
Կոտայք	54	105	25	8	6	1	16
Շիրակ	51	171	28	5	12	2	36
Սյունիք	51	121	18	4	7	2	10
Վայոց Ձոր	18	50	8	1	3	-	4
Տավուշ	60	82	19	3	6	-	4
<b>Ընդամենը</b>	<b>713</b>	<b>1437</b>	<b>226</b>	<b>44</b>	<b>99</b>	<b>62</b>	<b>172</b>

**Աղյուսակ 6. Առողջապահական (ամբուլատոր պոլիկլինիկական) հիմնարկների և հիվանդանոցային մահճակալների քանակը, սննդի անվտանգության, անասնաբուժական և արտակարգ իրավիճակների կազմակերպությունների թիվը**

Մարզերը	Ամբուլատոր պոլիկլինիկականներ	Հիվանդանոցային մահճակալներ	Սննդի անվտանգության	Անասնաբուժական	Արտակարգ իրավիճակների
ք. Երևան	150	7835	12	12	12
Արագածոտն	24	210	4	4	4
Արարատ	59	538	4	4	4
Արմավիր	61	377	3	3	3
Գեղարքունիք	40	750	5	5	5
Լոռի	45	486	6	6	7
Կոտայք	45	658	4	4	4
Շիրակ	33	878	7	7	8
Սյունիք	18.	429	5	5	5
Վայոց Ձոր	8	80	3	3	3
Տավուշ	26	273	4	4	4
<b>Ընդամենը</b>	<b>509</b>	<b>12514</b>	<b>57</b>	<b>57</b>	<b>59</b>



## Աղյուսակ 7. Մանրաձախ առևտրի օբյեկտները

Մարզերը	Խանութներ	Կրպակներ	Գյուղ. արտադր. շուկաներ Սպառող	ակն ապրանքների շուկաներ	Առևտրի այլ օբյեկտներ	Ընդամենը
Երևան	8149	819	7	32	117	<b>9124</b>
Արագածոտն	190	243	2	2	69	<b>506</b>
Արարատ	1037	75	1	3	68	<b>1184</b>
Արմավիր	175	140	2	4	48	<b>369</b>
Գեղարքունիք	288	144	2	2	62	<b>498</b>
Լոռի	271	623	2	3	40	<b>939</b>
Կոտայք	854	280	2	4	53	<b>1193</b>
Շիրակ	674	374	2	5	37	<b>1092</b>
Սյունիք	201	151	-	7	40	<b>399</b>
Վայոց Ձոր	249	43	1	-	20	<b>313</b>
Տավուշ	698	290	1	1	35	<b>1025</b>
<b>Ընդամենը</b>	<b>12786</b>	<b>3182</b>	<b>22</b>	<b>63</b>	<b>589</b>	<b>16642</b>

## 2.2 Միջհամայնքային համագործակցություն

2015թ. միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել՝ պայմանավորված հիմնականում իրավական դաշտի անկատարությամբ: Շարունակվել են աշխատանքները այդ ուղղությամբ, կատարվել են վերլուծություններ, մշակվել հայեցակարգեր, կազմակերպվել քննարկումներ և լսումներ:

2015թ.-ի ընթացքում նոր համայնքների միություններ չեն գրանցվել և չեն լուծարվել, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված էին մնում 25 համայնքների միություններ, որոնց կազմում ընդգրկված էին 495 համայնքներ: Նրանց համագործակցության շրջանակները մնացել են նույնը և, ինչպես նախորդ տարիներին, դրանք ակտիվությամբ առանձնապես աչքի չեն ընկել:

Միջհամայնքային համագործակցությունը հիմնականում մնում է համայնքների կողմից ստեղծված կառույցների և նրանց միջև ուղղակի կնքվող պայմանագրերի միջոցով գույքահարկի և հողի հարկի բազաների վարման և հավաքագրման իրականացումը: Այդ կառույցների և նրանց կողմից սպասարկվող համայնքների թիվը 2015թ. ընթացքում չեն փոխվել և 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 68 և 427:

2015թ. ընթացքում շարունակվել է տեղական ինքնակառավարման զարգացմանն ուղղված համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

Միջսահմանային համագործակցության մասով նույնպես զարգացումներ չկան՝ փակ են մնում Ադրբեջանի և Թուրքիայի հետ սահմանները, իսկ Իրանի հետ համագործակցության օրինակներ դեռևս չկան: Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության շրջանակներում շարունակվել են հայ-վրացական սահմանամերձ տարածաշրջաններում տարածքային զարգացման ծրագրերի իրականացման աշխատանքները Էկոլոգիական, փոքր և միջին բիզնեսի խրախուսման և տուրիզմի զարգացման ուղղություններով:

2015թ. ընթացքում միջհամայնքային համագործակցության առանձնակի զարգացումներ չեն եղել, իսկ գործող համայնքների միությունների գործունեությունը հիմնականում մնացել է պասիվ՝ ՏԻՄ-երի շահերի պաշտպանության հարցերում:

### **3. ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը, քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը**

#### **3.1 ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը**

2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով համայնքի ղեկավարի և ավագանու պաշտոնավարման ժամկետը սահմանվել է հինգ տարի (նախկին չորս տարվա փոխարեն): Բացի այդ, սահմանադրական փոփոխությունները նախատեսում են, որ Ընտրական օրենսգրքով կարող են սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություններ: Սակայն, 2015թ. տարեվերջի դրությամբ, սահմանադրական այս դրույթները դեռևս արտացոլում չեն ստացել համապատասխան օրենսդրության մեջ: 2015-ին տեղական ինքնակառավարման մարմինների թեկնածուների առաջադրման կարգը մնացել է անփոփոխ:

2015-ին Հայաստանի մարզերում անց են կացվել համայնքի ղեկավարի 97 և ավագանու 41 ընտրություններ (աղյուսակ 8): Համայնքի ղեկավարի ընտրություններն անց են կացվել հիմնականում գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքներում (ընդամենը 90 համայնք) և Վայք, Արմավիր, Իջևան, Մարալիկ, Արտաշատ, Ալավերդի ու Արովյան քաղաքային բնակավայրերն ընդգրկող համայնքներում (ընդամենը 7 համայնք):

**Աղյուսակ 8. 2015-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների թիվն ըստ մարզերի<sup>5</sup>**

Հ/հ	Մարզ	Համայնքի ղեկավարի ընտրություններ			Համայնքի ավագանու ընտրություններ		
		Ընդամենը	Քաղաքային բնակավայրեր ընդգրկող համայնքներ	Գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքներ	Ընդամենը	Քաղաքային բնակավայրեր ընդգրկող համայնքներ	Գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքներ
1	Արագածոտն	12	-	12	4	-	4
2	Արարատ	3	1	2	2	-	2
3	Արմավիր	15	1	14	1	-	1
4	Գեղարքունիք	13	-	13	5	-	5
5	Լոռի	9	1	8	5	-	5
6	Կոտայք	8	1	7	1	-	1
7	Շիրակ	18	1	17	10	-	10
8	Սյունիք	11	-	11	7	-	7
9	Վայոց Ձոր	3	1	2	1	-	1
10	Տավուշ	5	1	4	5	1	4
	<i>Ընդամենը</i>	<i>97</i>	<i>7</i>	<i>90</i>	<i>41</i>	<i>1</i>	<i>40</i>

2015-ին մարզերում համայնքի ղեկավարի ընտրությունները, ինչպես և նախորդ տարիներին, անց են կացվել հիմնականում ցածր մրցակցության պայմաններում: Առաջադրված թեկնածուների առավելագույն թիվը եղել է 5՝ ընդամենը 2 համայնքում: Մեկ համայնքում մրցակցել են 4 թեկնածուներ, 8 համայնքներում՝ 3 թեկնածուներ, 38 համայնքներում՝ 2 թեկնածուներ: 48 համայնքներում, կարելի է ասել, բացակայել է մրցակցային միջավայրը, քանի որ այս համայնքներում եղել է ընդամենը 1 թեկնածու:

2015թ. տարեվերջի դրությամբ փոփոխվել է ՀՀ մարզերում համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելիության պատկերը: Ավելի քան երեք անգամ նվազել է համայնքների ղեկավարների կազմում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչների թիվը՝ կազմելով 23, նախորդ տարվա 76-ի փոխարեն: Զգալիորեն ավելացել է անկուսակցականների թիվը՝ նախորդ տարվա 132-ի փոխարեն կազմելով 182: Արդյունքում, ՀՀ մարզերում համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելիությունն ունի հետևյալ պատկերը՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչներ՝ 71.9%, անկուսակցականներ՝ 19.9%: Մնացյալ 8.2%-ը բաշխվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, Հայ Յեղափոխական դաշնակցու-

<sup>5</sup> Աղբյուրը՝ [www.elections.am](http://www.elections.am):

թյան, «Օրինաց երկիր» կուսակցության, Հայաստանի Կոմունիստական կուսակցության, «Ժողովրդավարություն և աշխատանք» կուսակցության և Ազգային ինքնորոշում միավորման միջև (աղյուսակ 9):

**Աղյուսակ 9. Համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելությունը<sup>6</sup> (2015 թ. տարեվերջի դրությամբ)**

Հ/հ	Մարզ	Կուսակցություն							
		Հայաստանի Հանրապետական Կուսակցություն (ՀՀԿ)	«Բարգավաճ Հայաստան» Կուսակցություն (ԲՀԿ)	Հայ Յեղավիթական Դաշնակցություն (ՀՅԴ)	«Օրինաց երկիր» Կուսակցություն (ՕԵԿ)	Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն (ՀԿԿ)	Ժողովրդավարություն և Աշխատանք Կուսակցություն (ԺԱԿ)	Ազգային Ինքնորոշում Միավորում (ԱԻՄ)	Անկուսակցական
1	Արագածոտն	88	1	6	2	-	-	-	17
2	Արարատ	69	8	4	-	-	-	-	16
3	Արմավիր	83	1	4	-	-	-	-	9
4	Գեղարքունիք	67	4	1	-	1	2	-	17
5	Լոռի	74	1	3	-	1	-	-	34
6	Կոտայք	27	-	1	-	-	-	-	39
7	Շիրակ	71	2	10	7	-	-	-	29
8	Սյունիք	92	4	3	-	-	-	-	10
9	Վայոց Ձոր	34	-	1	-	-	-	-	9
10	Տավուշ	52	2	4	1	-	-	1	2
	<b>Ընդամենը</b>	<b>657</b>	<b>23</b>	<b>37</b>	<b>10</b>	<b>2</b>	<b>2</b>	<b>1</b>	<b>182</b>

2015թ. ՀՀ կառավարության որոշումներով վաղաժամկետ դադարեցվել են 11 համայնքների ղեկավարների լիազորություններ<sup>7</sup>: Հինգ համայնքների ղեկավարների լիազորությունները դադարեցվել են նրանց հրաժարական տալու և 6-ինը՝ նրանց մահվան պատճառներով: 2015թ. համայնքի ավագանու լիազորությունների դադարեցման դեպք չի եղել:

2015-ին համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու դեպք չի գրանցվել:

<sup>6</sup> Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

<sup>7</sup> Այդ համայնքներն են՝ Ուրասար, Աբովյան, Սպանդարյան, Խաչատրյան, Մալուտ, Լուսաղբյուր, Հարթաշեն, Զառ, Դարպաս, Սղարթ և Թլիկ:

## **ՏԻՄ-երի իրավասությունները և լիազորությունները**

2015-ին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված մի շարք փոփոխությունների և լրացումների արդյունքում, փոփոխություններ և լրացումներ են կատարվել համայնքի ավագանու և ղեկավարի իրավասությունների և լիազորությունների ցանկում:

Համայնքի ավագանու իրավասություններն ավելացել են հետևյալ երկուսով.

- ✓ Սահմանում է այն շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, որտեղ իրականացվում են և (կամ) մատուցվում են քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ<sup>8</sup>: Ճիշտ նույն ձևակերպմամբ իրավասություն է ավելացել նաև Երևանի ավագանու իրավասությունների կազմում<sup>9</sup>:
- ✓ Հաստատում է համայնքի ղեկավարի ներկայացրած, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցիչների թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգը<sup>10</sup>:

Լրացվել է համայնքի ավագանու՝ պետական լիազորված մարմին համայնքի անվանափոխության վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու կամ համաձայնություն տալու իրավասությունը: Արդյունքում, անվանափոխության վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու կամ համաձայնություն տալու իրավասությունը վերաբերում է ոչ միայն համայնքին, այլ նաև համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրին<sup>11</sup>:

Քաղաքային և գյուղական համայնքներ հասկացությունների ուժը կորցնելու արդյունքում անհրաժեշտություն է առաջացել օրենքից հանել «քաղաքային համայնք» և «գյուղական համայնք» բառերը: Այդ պատճառով, համապատասխան փոփոխության է ենթարկվել համայնքի ավագանու իրավասություններից մեկը<sup>12</sup>:

Համայնքի ղեկավարի իրավասություններն ավելացել են երկուսով.

- ✓ Սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու

<sup>8</sup> «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 26 փետրվարի 2015թ.:

<sup>9</sup> «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 26 փետրվարի 2015 թ.:

<sup>10</sup> «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 24 նոյեմբերի 2015թ.:

<sup>11</sup> «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 24 նոյեմբերի 2015թ.:

<sup>12</sup> «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 24 նոյեմբերի 2015թ.:

թույլտվություն<sup>13</sup>: Այս իրավասությունը ներառվել է նաև Երևանի քաղաքապետի լիազորությունների ընդհանուր բնութագրի մեջ<sup>14</sup>:

- ✓ Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգին համապատասխան նշանակում է վարչական ներկայացուցիչ<sup>15</sup>:

Լրացվել է համայնքի ղեկավարի համայնքի ղեկավարի տեղակալին, աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային և առանձնցված ստորաբաժանումների ղեկավարներին նշանակելու և ազատելու իրավասությունը ներառելով նաև վարչական ներկայացուցիչներին<sup>16</sup>:

Համայնքի ղեկավարին, իսկ Երևանում վարչական շրջանի ղեկավարին, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում ամրագրվել է հետևյալ նոր պարտադիր լիազորությունը

- ✓ Կառուցման ավարտի գրանցում չունեցող այն բազմաբնակարան շենքերի, որոնց ստորաբաժանված միավորներն առանձին վկայականներով գրանցված են որպես 100 տոկոսից ցածր ավարտվածություն ունեցող անավարտ շինություններ, կառուցման ավարտի գրանցման նպատակներով աջակցում է կառուցապատողի գործառույթների իրականացման համար սեփականատերերի կողմից համապատասխան կազմակերպության ընտրության գործընթացին կամ կառուցապատողի գործառույթների իրականացումը վերապահում է համայնքում գործող բազմաբնակարան շենքի կառավարմանը որևէ մարմնի, որն իրականացնում է կառուցապատողի գործառույթներ առանձնացված միավորների սեփականատերերի միջոցներով<sup>17</sup>:

Նույն ոլորտի «սահմանված կարգով ձևակերպում է ավարտված շինարարության շահագործման փաստագրումը» պարտադիր լիազորությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «սահմանված կարգով ձևակերպում է շինարարության ավարտական ակտ, ինչպես նաև տրամադրում է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվություն»<sup>18</sup>: Վերաշարադրվել է

<sup>13</sup> «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 26 փետրվարի 2015թ.:

<sup>14</sup> «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 26 փետրվարի 2015 թ.:

<sup>15</sup> «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 24 նոյեմբերի 2015թ.:

<sup>16</sup> «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 24 նոյեմբերի 2015թ.:

<sup>17</sup> «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 19 հունիսի 2015 թ., «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 19 հունիսի 2015թ.:

<sup>18</sup> «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 19 հունիսի 2015թ.:

նան «կազմակերպում է գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները» պարտադիր լիազորությունը՝ ձևակերպելով «կազմակերպում է համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները, իրականացնում է «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ»<sup>19</sup>:

Ամփոփ կերպով կարելի է նշել, որ 2015 թվականի տարեվերջի դրությամբ համայնքի ղեկավարներին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վարապահված պարտադիր լիազորությունների թիվը կազմել է 68, պատվիրակված լիազորություններինը՝ 23, իսկ կամավոր լիազորություններինը՝ 24 (աղյուսակ 10):

**Աղյուսակ 10. ՏԻՄ-երի լիազորությունների քանակական տվյալներն ըստ առանձին տեսակների և բնագավառների (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)**

Հ/հ	Բնագավառ	Պարտադիր լիազորություններ		Պատվիրակված լիազորություններ		Կամավոր լիազորություններ	
		ՀՀ այլ ՏԻՄ-եր	Երևանի ՏԻՄ-եր	ՀՀ այլ ՏԻՄ-եր	Երևանի ՏԻՄ-եր	ՀՀ այլ ՏԻՄ-եր	Երևանի ՏԻՄ-եր
1	Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն	8	0	8	0	0	0
2	Բնակիչների մասնակցություն տեղական ինքնակառավարմանը	4	0	0	0	0	0
3	Ֆինանսներ	8	7	0	0	0	0
4	Հասարակական կարգի պահպանություն	0	4	2	0	0	0
5	Պաշտպանության կազմակերպում	3	3	0	0	3	3
6	Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	21	14	0	1	5	0
7	Հողօգտագործում	5	1	3	4	2	0
8	Տրանսպորտ (և ճանապարհաշինություն)*	4	4	1	2	1	0
9	Առևտուր և ծառայություններ (սպասարկում)*	9	2	0	0	0	0

<sup>19</sup> «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 29 ապրիլի 2015թ.:



10	Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	1	2	1	1	5	3
11	Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ	1	3	0	4	3	3
12	Աշխատանք և սոցիալական պաշտպանություն (սոցիալական պաշտպանություն)*	0	1	1	1	2	1
13	Գյուղատնտեսություն	2	0	0	0	3	0
14	Անասնաբուժություն և բուժսանիտարիա	1	0	5	4	0	0
15	Բնության և շրջակա միջավայրի պահպանություն (բնապահպանություն)*	1	4	2	2	0	1
16	Ավագանու հետ հարաբերություններ*	0	10	0	0	0	0
17	Գործադիր իշխանության հանրապետական մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ հարաբերություններ*	0	5	0	0	0	0
18	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ*	0	2	0	0	0	0
19	Էլեկտրոնային հաղորդակցություն, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, գազամատակարարում*	0	2	0	0	0	0
	<b>Ընդամենը</b>	<b>68</b>	<b>64</b>	<b>23</b>	<b>19</b>	<b>24</b>	<b>11</b>

\*) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բերված ՏԻՄ-երի լիազորությունների բնագավառների անվանումները տարբերվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բերված բնագավառների անվանումներից: Այն դեպքում, երբ այդ անվանումները շատ չեն տարբերվում, տարբերությունները նշվել են փակագծերում: Հակառակ դեպքում դրանք ձևակերպվել են որպես առանձին բնագավառներ:

2015թ. ընթացքում ընդլայնվել է այն համայնքների շրջանակը, որոնք ընդունել են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով պահանջվող բնակիչների մասնակցությունն ապահովող 3 կարգերը: Օրինակ, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագրի շրջանակներում ընդգրկված բոլոր 35 պիլոտային

համայնքներում այդ կարգերը 2015թ. տարեվերջի դրությամբ ընդունված են:

2015թ. ընթացքում համայնքներում օրենքով պահանջվող նոր «Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցիչների թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգը» չի ընդունվել: Պատճառն օբյեկտիվ է. կարգը վերաբերում է բազմաբնակավայր համայնքներին, իսկ համայնքների խոշորացման արդյունքում նոր բազմաբնակավայր համայնքներ նախատեսվում է ձևավորել 2016թ.: Նախատեսվում է, որ այդ կարգերը կընդունվեն 2016թ. ընթացքում:

2015թ. ընթացքում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման նոր կարգեր չեն ընդունվել:

### ***Որոշումների կայացումը համայնքներում***

2015-ին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրավական հսկողություն է իրականացվել Երևանի ավագանու կողմից ընդունված 232 որոշումների նկատմամբ: Հսկողության արդյունքների հիման վրա արձանագրվել են իրավական տեխնիկայի պահանջների չկատարման մի շարք դեպքեր<sup>20</sup>:

2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների տվյալներով, նախորդ տարվա համեմատությամբ, առանձնապես չի փոփոխվել ավագանու աշխատանքները կազմակերպելու համար առանձնացված աշխատասենյակներ ունեցող համայնքների թիվը: Առաջին եռամսյակում նման համայնքների թիվը կազմել է 728, 2-րդ եռամսյակում՝ 694, իսկ 3-րդ եռամսյակում՝ 695: Մարզային կտրվածքով դիտարկելիս կարելի է նկատել, որ ինչպես և նախորդ տարի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի բոլոր համայնքներում առկա են այդպիսի աշխատասենյակներ: Իսկ Արագածոտնի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում 2015թ. 3-րդ եռամսյակի տվյալներով ավագանու գործունեության համար առանձնացված աշխատասենյակ ունեցող համայնքների տեսակարար կշիռներն ամենացածրն են եղել՝ կազմելով համապատասխանաբար 43%, 54.5% և 45.2%<sup>21</sup>:

2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների տվյալներով համայնքների ղեկավարների և ավագանու անդամների մոտ քաղաքացիների ընդունելության վիճակագրությունն ունի հետևյալ պատկերը. ՀՀ մարզերում համայնքի ղեկավարների մոտ ընդունելության են մասնակցել 84173 քաղաքացիներ, իսկ ավագանու անդամների մոտ՝ 17456 քաղաքացիներ (հավելված 1): Համայնքի

<sup>20</sup> Աղյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2015թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

<sup>21</sup> Աղբյուրը՝ [www.mta.gov.am](http://www.mta.gov.am), Ամփոփ տեղեկանքներ 2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության վերաբերյալ:

ղեկավարների մոտ ընդունելության է մասնակցել ընդունելության դիմած քաղաքացիների 98.2%-ը, իսկ ավագանու անդամների մոտ՝ 94.0%-ը: 2015թ. ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը առաջին երեք եռամսյակներում տատանվել է 803-ից մինչև 814-ի սահմաններում: Ինչպես և նախորդ տարիներին, 2015-ին ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը ամենացածրն է եղել Սյունիքի մարզում՝ առաջին երեք եռամսյակներում կազմելով մարզի համայնքների թվի 35.8%-ից 14.7%-ը:

2015թ. մայիսի 17-ին ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի պատմության մեջ առաջին անգամ անց են կացվել տեղական հանրաքվեներ: Դրանք տեղի են ունեցել համայնքների խոշորացման ծրագրի շրջանակներում, ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, ՀՀ Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի 22 համայնքներում<sup>22</sup>: Տեղական հանրաքվեները կազմակերպվել և անց են կացվել էլնելով սահմանադրական պահանջից, համաձայն որի, նախքան համայնքների միավորման օրենսդրական նախաձեռնության ներկայացումը, կառավարությունը համապատասխան համայնքներում պետք է նշանակի տեղական հանրաքվեներ:

Տեղական հանրաքվեների նկատմամբ «Համայնքների ֆինանսիստների միավորում» (ՀՖՄ) և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունները՝ համատեղ ուժերով, դիտորդական առաքելությամբ իրականացրել են մշտադիտարկում (մոնիթորինգ): Մշտադիտարկման որոշ արդյունքներ ներկայացված են ստորև.

- ✓ որոշ համայնքների (օրինակ, Սվարանց, Տաթև, Աթան, Ահնիձոր) ընտրական տեղամասերը գտնվել են գյուղապետարանի կամ ակումբի ոչ բարվոք վիճակում գտնվող շենքերում և կահավորված չեն եղել պատշաճ մակարդակով, որն իր որոշակի բացասական ազդեցությունն է ունեցել ընտրողների՝ հանրաքվեին մասնակցայնության վրա,
- ✓ ընտրողները հատկապես ակտիվ են եղել Տաթևի փնջի բոլոր համայնքներում, Թումանյանի փնջի Թումանյան և Քարինջ համայնքներում, Դիլիջանի փնջի Աղավնավանք և Խաչարձան համայնքներում, մնացած համայնքներում նկատվել է ընտրողների որոշակի պասիվություն ու աստրբերություն,
- ✓ տեղական ընտրական հանձնաժողովների անդամները հիմնականում տիրապետել են ընտրական գործընթացներին, մշտադիտարկում իրականացրած վերոնշյալ ՀԿ-ների ներկայացուցիչների տպավորությամբ, տեղական հանրաքվեները կազմակերպվել և անցկացվել են օրինա-

<sup>22</sup> Դրանք են՝ Թումանյանի փնջի 7 համայնքները (ք. Թումանյան, Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Շամուտ, Քարինջ), Տաթևի փնջի 8 համայնքները (Խոտ, Հայիձոր, Հարժիս, Շինուկայր, Սվարանց, Տաթև, Տանձատափ, Քաշունի) և Դիլիջանի փնջի 7 համայնքները (ք. Դիլիջան, Աղավնավանք, Գոշ, Թեղուտ, Խաչարձան, Հաղարծին, Հովք):

կանության, հանգիստ և ընտրական գործընթացների մասնակիցների փոխադարձ հարգանքի մթնոլորտում,

- ✓ տեղական հանրաքվեներին նկատելի քիչ է եղել դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների թիվը, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների, հասարակական կառույցների, զանգվածային լրատվամիջոցների և այլն, այսինքն՝ տեղական հանրաքվեները հանրության կողմից չեն ստացել այն ուշադրությունը և հնչեղությունը, ինչը նկատելի է եղել ծրագրի ընդդիմախոսների կողմից մինչև հանրաքվեների անցկացումը՝ նախորդ մի քանի ամիսների ընթացքում<sup>23</sup>:

Տեղական հանրաքվեի արդյունքները ներկայացված են սույն զեկույցի «Վարչատարածքային բարեփոխումները և միջհամայնքային համագործակցությունը» բաժնում:

2015թ. մարզերում վարչական հսկողություն է իրականացվել 312 համայնքներում: Արձանագրված խախտումները, ինչպես և նախորդ տարիներին, հիմնականում վերաբերել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և ՀՀ այլ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը<sup>24</sup>:

Հետաքրքիր է դիտարկել, թե ինչպես է ընկալվում ՏԻՄ-երի գործունեությունը բնակչության կողմից: Այսպես, 2015թ. ընթացքում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամի իրականացրած սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով<sup>25</sup>, ՏԻՄ-երի աշխատանքից «շատ» կամ «լիովին» բավարարված է Հայաստանի տասը քաղաքացիներից մեկը՝ 11.6 %-ը: ՏԻՄ-երի աշխատանքից «շատ քիչ» բավարարվածները կամ «ամենին» չբավարարվածները եռապատիկ շատ են՝ 36 %-ը: Հայաստանցիների գրեթե կեսը՝ 46.8 %-ը, «որոշ չափով» է գոհ ՏԻՄ-երի աշխատանքից:

Հարցված հայաստանցիների զգալի մասը՝ 43 %-ը, դժվարացել է պատասխանել «Արդյոք գոյություն ունե՞ն ավագանու այնպիսի անդամներ, որոնք արժանի չեն իրենց պաշտոնին» հարցին: Հարցվածների 40.7 %-ը հայտարարել է, որ ավագանու բոլոր անդամներն արժանի են: Հարցվածների 16.3 %-ը, այնուամենայնիվ, կարծիք է հայտնել, որ գոյություն ունեն ավագանու անդամներ, որոնք արժանի չեն իրենց պաշտոնին:

Հարցված հայաստանցիների չնչին մասն է հայտարարել, որ ՏԻՄ-երում պաշտոնյաներին նվերներ տալու պրակտիկան հաճախակի հանդիպող երևույթ է, իսկ կեսից փոքր-ինչ ավելին պարզապես խուսափել է պատասխա-

<sup>23</sup> Աղբյուրը՝ Համայնքների ֆինանսիստների միավորում:

<sup>24</sup> Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2015թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

<sup>25</sup> Այն հիմնված է Հայաստանի ողջ տարածքում պատահականորեն ընտրված 1443 տնային տնտեսություններից հավաքագրված և հանրային կարծիքն արտացոլող տվյալների վրա:

նել նվիրատվությունների վերաբերյալ հարցին: Մարդկանց մի սովորական գված վստահ չէ, որ ՏԻՄ-երում նվիրատվության պրակտիկան գոյություն չունի: Այս ենթադրությունն ամրապնդվում է հարցման մեկ այլ արդյունքով. մասնավորապես, հարցվածների 58.6%-ի համոզմամբ, կաշառքը քաղաքացիների կարող է «շատ» կամ «որոշ չափով» օգնել իրենց խնդիրները ՏԻՄ-երի միջոցով լուծելու համար («կաշառքի» և պաշտոնյային մատուցվող «նվերի» տարբերությունն իրականում դժվար է որոշել):

Հարցվածների մոտ կեսը՝ 47.4 %-ը, «վատ» կամ «շատ վատ» է գնահատել ՏԻՄ-երի աշխատանքը՝ տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացի մեջ բնակիչներին ներգրավելու ուղղությամբ: Տասը հայաստանցիներից ընդամենը մեկն է այդ աշխատանքին տվել «լավ» կամ «շատ լավ» գնահատականը: Հարցված հայաստանցիների 9.7 %-ն է գոհ կամ շատ գոհ եղել այն բանից, թե ինչպես են ՏԻՄ-երը խորհրդակցում բնակիչների հետ հանրային ռեսուրսների (օրինակ՝ հողեր, անտառներ, շենքեր) օգտագործման, վարձակալության և վաճառքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Հայաստանցիների 39.6 %-ը նշված հանրային ռեսուրսների կառավարման հարցում բնակիչների կարծիքը լսելու ՏԻՄ-երի ջանքերը գնահատել է «վատ» կամ «շատ վատ», 20.3 %-ը՝ «ոչ լավ, ոչ վատ»<sup>26</sup>:

### 3.2 Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված են եղել քաղաքացիական հասարակության սուբյեկտներ հանդիսացող 4375 հասարակական կազմակերպություն (նախորդ տարվա համեմատ ավելացել է 6.0 %-ով), 975 հիմնադրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 6.3 %-ով), 765 արհեստակցական կազմակերպություն (նախորդ տարվա համեմատ ավելացել է 3.2 %-ով) և 79 կուսակցություն (նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.6 %-ով): ԶԼՄ-ներից 2016թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառված է եղել 861 թերթ, 448 ամսագիր<sup>27</sup>:

Տեղական ինքնակառավարման ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների թվի և տարածքային տեղաբաշխվածության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չկա: Պաշտոնական տեղեկատվություն չկա

<sup>26</sup> Աղբյուրը՝ «Բարեփոխումների երկար ճանապարհին. ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը քաղաքացիների աչքերով» գեկույց, Երևան 2016, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ:

<sup>27</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

նան ԶԼՄ-ների տարածքային տեղաբաշխվածության վերաբերյալ: 2015թ. տեղական ինքնակառավարման ոլորտում շարունակել են գործել նախորդ տարիների զեկույցներում նշված կազմակերպությունները:

«Ֆրիդոմ Հաուս» իրավապաշտպան կազմակերպության զեկույցի համաձայն, 2015թ. անփոփոխ է մնացել Հայաստանի ժողովրդավարության առաջընթացի գնահատականը՝ 2013 թվականից ի վեր կազմելով 5.36 միավոր (գնահատականները տրված են 7 բալանոց սանդղակով, որտեղ ամենավաղ ցուցանիշը 1-ն է, իսկ ամենավատը՝ 7-ը): Նույնն են մնացել նաև «Տեղական ժողովրդավարական կառավարում» և «քաղաքացիական հասարակություն» բաժինների գնահատականները՝ կազմելով համապատասխանաբար 5.75 և 3.75 միավոր<sup>28</sup>:

ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի իրականացրած հետազոտության համաձայն, հարցված հայաստանցիների չնչին հատվածն է որպես շահառու մասնակցել ՏԻՄ-երի աշխատանքներին: Այսպես, հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում իր համայնքի ավագանու նիստերին մասնակցել է հարցվածների միայն 2.4 %-ը, համայնքի քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ լուսմներին՝ 2.3 %-ը և համայնքի բյուջեի վերաբերյալ քննարկումներին 1.7 %-ը:

Հարցվածների պասիվ մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը կարող է պայմանավորված լինել նրանց թերահավատությամբ այդ մասնակցության հնարավորության և արդյունավետության նկատմամբ: Այն հարցին, թե արդյոք իրենց համայնքներում առկա՞ են տեղական ինքնակառավարմանը մասնակցելու բավարար հնարավորություններ, հարցվածների միայն 32.8 %-ն է դրական պատասխան տվել: Հարցվածների 33 %-ն ասել է, որ այդ հնարավորությունները բացակայում են, մինչդեռ 34 %-ը չի իմացել՝ արդյոք մասնակցության բավարար հնարավորություններ առկա՞ են, թե՞ ոչ:

Միաժամանակ, հարցվածների 35.9 %-ն է գտնում, որ իր համայնքի անդամների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը «որոշ չափով» կամ «շատ» արդյունավետ է: Հարցվածների 32.6 %-ի կարծիքով այդ մասնակցությունը կամ ընդհանրապես արդյունավետ չէ, կամ «քիչ» արդյունավետ է, իսկ մնացյալ մեկ երրորդը (31.5 %-ը) չգիտի կամ դժվարանում է պատասխանել՝ արդյոք այդ մասնակցությունն արդյունավետ է, թե՞ ոչ<sup>29</sup>:

2014թ. հուլիսի 31-ին ՀՀ կառավարության նիստում հաստատվել է ԲԿԳ-Հայաստանի (Բաց կառավարման գործընկերություն) երկրորդ՝ 2014-2016թթ.

<sup>28</sup> Աղբյուրը՝ [www.freedomhouse.org](http://www.freedomhouse.org), Nations in Transit 2016:

<sup>29</sup> Աղբյուրը՝ «Բարեփոխումների երկար ճանապարհին. ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը քաղաքացիների աչքերով» զեկույց, Երևան 2016, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ:

Գործողությունների ծրագիրը<sup>30</sup>: Ծրագիրն իրականացման փուլ է մտել 2014թ. սեպտեմբերից, երբ մեկնարկել է ծրագրով ստանձնած մի շարք պարտավորությունների իրականացումը: Այդ պարտավորությունների մի մասն ուղղված է հանրային մասնակցության խթանմանը, որոնցից երկուսը՝ տեղական ինքնակառավարման մակարդակում հանրային մասնակցության խթանմանը: Դրանք են.

- ✓ Համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրում 10 համայնքներում,
- ✓ Խոշոր համայնքների (20000 և ավելի բնակիչ ունեցող) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն իրականացրել է մշտադիտարկում Բաց կառավարման գործընկերության միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ազգային երկրորդ ծրագրի մշակման և դրա իրականացման մեկամյա ընթացքի վերաբերյալ: Մշտադիտարկման արդյունքներով, նշյալ երկու պարտավորությունների իրականացման ընթացքը հետևյալն է.

- ✓ 2015թ.-ի սեպտեմբերի 15-ի դրությամբ՝ հինգ համայնքներում արդեն իսկ իրականացվել են միկրոհարցումներ: Դրանք են՝ Արեգնադեմ, Բյուրեղավան, Ջրվեժ, Քասախ և Աշտարակ համայնքները:
- ✓ 2015 թ.-ի օգոստոսի դրությամբ խոշոր համայնքների մեծ մասը դեռևս ձեռք չի բերել համայնքի ավագանու նիստերը ուղիղ հեռարձակման համար անհրաժեշտ սարքավորումներ: Հիմնական պատճառը ֆինանսական միջոցների բացակայությունն է: Մասնավորապես, 2015թ. օգոստոսի դրությամբ տեխնիկական սարքավորումները ձեռք են բերել և հեռարձակումները իրականացրել են Արմավիր և Գյումրի համայնքները: Սարքավորումները ձեռք են բերել և փորձնական հեռարձակումներ են իրականացրել Վանաձոր, Չարենցավան և Հրազդան համայնքները: Իսկ Աբովյան, Էջմիածին, Կապան, Գորիս, Արտաշատ, Գավառ, Մասիս, Ալավերդի, Սևան, Աշտարակ, Արթիկ համայնքները նշյալ ժամկետում դեռևս գտնվում էին ֆինանսական միջոցների հայթայթման գործընթացում<sup>31</sup>:

<sup>30</sup> Ծրագիրը հաստատվել է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» թիվ 32-1 արձանագրային որոշմամբ:

<sup>31</sup> Աղբյուրը՝ ԲԿԳ Հայաստան. Քաղհասարակության զեկույց, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Երևան 2015:

## **ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը**

2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակի տվյալներով համայնքների բյուջեների ցուցանիշները ցուցատախտակներում և այլ տեսանելի վայրերում տեղադրել են գրեթե բոլոր համայնքները (հավելված 2): Իսկ այդ ցուցանիշները հեռուստատեսությամբ հեռարձակող և թերթերում տպագրող համայնքների թիվը, ինչպես և նախորդ տարիներին, շարունակել է մնալ ցածր: Առանձնապես մեծ փոփոխությունների չի ենթարկվել ինտերնետային կայք էջերում նյութեր տեղադրող համայնքների թիվը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՆԿ-ի կողմից 2015թ. անց կացված տեղեկատվության ազատության հերթական մրցանակաբաշխության արդյունքներով ՏԻՄ-երին «ոսկե բանալի» բաժին չի հասել: Մրցանակաբաշխության բացասական խորհրդանիշ հանդիսացող «Ժանգոտ կողպեքը» որպես փակ աշխատանքի խորհրդանիշ, տրամադրվել է Արմավիրի քաղաքապետարանին՝ որպես 2015թ. ամենազավեշտալի պաշտոնական պատասխանի հեղինակ մարմին<sup>32</sup>: Նույն ՆԿ-ի կողմից հրապարակված «սև ցուցակում» 2015թ. ՏԻՄ-երի ներկայացուցիչներից ընդգրկվել է Արթիկ համայնքի ղեկավարը<sup>33</sup>:

ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի իրականացրած հետազոտության համաձայն, հարցվածների ընդամենը 7.1 %-ն է համարել, որ իրենց ՏԻՄ-երի հաշվետվողականության մակարդակն ընդհանուր առմամբ «բարձր» կամ «շատ բարձր» է: Հարցվածների 26.4 %-ի կարծիքով, այն «ցածր» է կամ «շատ ցածր», 23.6 %-ի կարծիքով՝ «ոչ ցածր, ոչ բարձր»:

Հարցված հայաստանցիների միայն 13%-ն է ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը «բարձր» կամ «շատ բարձր» գնահատել: ՏԻՄ-երի թափանցիկությունը «ցածր» կամ «շատ ցածր» գնահատողների թիվը եռապատիկ շատ է եղել՝ 39.5%, մինչդեռ չեզոք՝ «ոչ բարձր, ոչ ցածր» գնահատական տվողներինը՝ 28.5%: Միաժամանակ, հայաստանցիների մոտ կեսը (46%-ը) կարծիքով, ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության մակարդակը հարցմանը նախորդող տարվա համեմատ ոչ ավելացել է, ոչ պակասել է:

Նախ և առաջ, հարցվածները դժգոհ են ՏԻՄ-երի ֆինանսական գործունեության թափանցիկությունից: Օրինակ՝ բոլոր հարցվածների միայն 6.2 %-ն է «լավ» կամ «շատ լավ» գնահատել ՏԻՄ-երի ջանքերը բնակիչներին համայնքի բյուջեի մասին իրազեկելու ուղղությամբ: Մարդկանց կեսից ավելին (56.3%-ը) այդ ջանքերը գնահատել է «վատ» կամ «շատ վատ»<sup>34</sup>:

<sup>32</sup> Աղբյուրը՝ [www.foi.am](http://www.foi.am):

<sup>33</sup> Աղբյուրը՝ [www.foi.am](http://www.foi.am):

<sup>34</sup> Աղբյուրը՝ «Բարեփոխումների երկար ճանապարհին. ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը քաղաքացիների աչքերով» զեկույց, Երևան 2016, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ:



## ***ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ դիմում-բողոքները***

2015թ. բնակչության կողմից մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների մի մասը վերաբերել է ՏԻՄ-երի գործունեությանը:

ՀՀ մարզերից մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չարաշահմանը (օրինակ, երեխային մանկապարտեզ են ընդունում տեղական հարկերի գծով պարտք չունենալու դեպքում) կամ ոչ պատշաճ կատարմանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական օբյեկտների մատչելիությանը և այլն:

Երևանի ՏԻՄ-երի դեմ ուղղված դիմում-բողոքները վերաբերել են նախադպրոցական հաստատությունների գերբեռնվածությանը և մատուցվող ծառայությունների ոչ պատշաճ մակարդակին, հասարակական տրանսպորտի ոչ պատշաճ աշխատանքին, ուղևորների նկատմամբ վարորդների վատ վերաբերմունքին, տրանսպորտային միջոցների անսարքությանն ու կեղտոտ պայմաններին, գերբեռնվածությանը, չվացուցակների ոչ պատշաճ աշխատանքին, հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտի, կառուցվող և վերակառուցվող շենքերի ու շինությունների մատչելիությանը, ինքնակամ շինարարությունը չկասեցնելուն կամ նման դեպքերը չկանխելուն և այլն<sup>35</sup>:

<sup>35</sup> Աղբյուրը՝ Տարեկան հաղորդում 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան 2016:

## 4. Համայնքների սեփականությունը, զարգացման ծրագրերը և ֆինանսական անկախությունը

2015թ. ընթացքում համայնքների ֆինանսներին, զարգացման ծրագրին և սեփականությանը վերաբերվող օրենսդրական դաշտում կատարվել են որոշակի փոփոխություններ:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում (26.02.2015թ.), որտեղ համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի(հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և(կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է «0 – 500 000» դրամ:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում (25.03.2015թ.), որով սահմանվել է, որ «տեղեկատվություն» կարելի է տրամադրել նաև էլեկտրոնային տարբերակով, իսկ համայնքների զարգացման ծրագրի «եռամյա» բառը փոխարինվել է «քառամյա» բառով:

Փոփոխություններ են կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում (07.12.2015թ.), որում ավելացվել են համայնքի զարգացման քառամյա ծրագրի բաղադրամասերը, ճշգրտվել են համայնքի ղեկավարի կողմից այն ավագանուն ներկայացնելու ժամկետները, ծրագրում փոփոխություններ կատարելու կարգը, ծրագրի գործողությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումը:

Փոփոխություններ են կատարվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում»: Այդ օրենքի անցումային դրույթներում փոփոխվել են որոշ տարեթվեր, մասնավորապես բնակչության թիվը, որպես հաշվարկի հիմք ընդունելու տարեթիվը:

### 4.1 Համայնքների սեփականությունը

2015թ. նույնպես, ինչպես նախորդ տարիներին, համայնքային սեփականությունը հիմնականում համալրվել է համայնքների կատարած կապիտալ կամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հաշվին (աղյուսակ 11): Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծավալը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 10873.4մլն. դրամով, կամ 39.5%-ով, կազմելով՝ 16649.1 մլն. դրամ (2014թ՝ 27522.5մլն. դրամ): Այդ ծախսերի 98.8%-ը, ինչպես նախորդ տարիներին (2013թ՝ 99.9%, 2014թ՝ 99.4%), կազմել են հիմնական միջոցների գծով կատարված ծախսերը, որոնց կազմում շարունակում է բարձր մնալ շենքերի և շինությունների բաժինը՝ 83.0% (2013թ՝ 84.4%; 2014թ՝ 86.9%): Չնայած

ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նախորդ տարվա համեմատությամբ զգալի նվազմանը, 2015թ. 52.2%-ով ավելացել են շենքերի և շինությունների ձեռքբերման ծախսերը, ավելացել է նաև նրա տեսակարար կշիռը՝ 20.2% (2014թ.՝ 8.0%): Զգալիորեն (74%-ով) նվազել են շենքերի և շինությունների կառուցման ծախսերը, նվազել է նաև նրա տեսակարար կշիռը՝ 14.7% (2014թ.՝ 34.1%): Չնայած շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների գծով ծախսերի նվազմանը, ավելացել են նրանց տեսակարար կշիռները՝ կազմելով համապատասխանաբար՝ 48.2% և 12.5%, նախորդ տարվա 44.8%-ի և 10.4%-ի փոխարեն: Դեռևս շատ փոքր են մնում պաշարների և չարտադրված ակտիվների վրա կատարված ծախսերը:

**Աղյուսակ 11. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2013-2015թթ. (մլն. ՀՀ դրամ)**

Տող	Բովանդակություն	2013թ.		2014թ.		2015թ.	
		Գումարը	Տես. կշիռը (%)	Գումարը	Տես. կշիռը (%)	Գումարը	Տես. կշիռը (%)
1	2	3	4	5	6	7	8
5000	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	23140.8	100	27522,5	100	16649.1	100
5100	այդ թվում՝ 1. Հիմնական միջոցներ	23112.7	99.9	27370.9	99.4	16449.0	98.8
5110	այդ թվում՝ շենքեր և շինություններ	19540.4	84.4	23916.5	86.9	13824.8	83.0
5111	որից՝ շենքերի և շինությունների ձեռքբերում	1230.3	5.3	2210.9	8.0	3364.1	20.2
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	3730.9	16.1	9376.8	34.1	2440.4	14.7
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	14579.2	63.0	12328.8	44.8	8020.3	48.2
5120	Մեքենաներ և սարքավորումներ	2933.0	12.7	2862.6	10.4	2075.8	12.5
5121	որից՝ տրանսպորտային սարքավորումներ	734.4	3.2	835.4	3.0	484.6	2.9
5122	- Վարչական սարքավորումներ	758.2	3.3	633.1	2.3	612.0	3.7
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	1440.4	6.2	1394.1	5.1	979.2	5.9
5130	Այլ հիմնական միջոցներ	639.3	2.8	591.8	2.2	548.4	3.3

5200	1.2. Պաշարներ	26.8	0.1	140.9	0.5	162.1	1.0
5300	1.3. Բարձրարժեք ակտիվներ	0.0	0.0	0.0	0.0	1.7	0,0
5400	1.4. Չարտադրված ակտիվներ	1.3	0.0	10.7	0.0	36.3	0.2
5411	Այդ թվում՝ հող	1.3	0.0	10.7	0.0	36.3	0,2

Կառավարության մի շարք որոշումներով գույք և դրամական միջոցներ են նվիրաբերել համայնքներին<sup>36</sup>:

Կառավարության որոշումներով մի շարք համայնքների վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ է ճանաչվել:

2015թ. համայնքների ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը

<sup>36</sup> 19.02.2015, 125-Ս որոշմամբ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Աղեյան փողոցի 9/2 հասցեում գտնվող՝ 36855.3 հազ. դրամ արժեքով, 987.3 քառ. մետր ընդհանուր մակերեսով անավարտ շինությունը և 0.0515 հա հողամասը նվիրաբերվել են Մեղրի քաղաքային համայնքին՝ մարզադպրոց հիմնելու պայմանով: 19.02.2015, 113-Ս որոշմամբ Երևան քաղաքի Արթուրյան պուրակ հասցեի «ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարման հիմնարկին ամրացված՝ 909.4 քառ. մետր մակերեսով ջրամբարը և 164.3 քառ. մետր օժանդակ շինությունները նվիրաբերվել են Երևանի քաղաքային համայնքին: 26.03.2015, 296-Ս որոշմամբ Սյունիքի մարզի Ալվանք գյուղում գտնվող՝ 53580.0 հազ. դրամ սկզբնական արժեքով հասարակական նշանակության 499.9 քառ. մետր մակերեսով շենքը, 444.3 քառ. մետր ընդհանուր մակերեսով շինությունները և 0.5483 հա հողամասը անհատույց սեփականության իրավունքով հանձնվել է Ալվանքի գյուղական համայնքին՝ համայնքի կարիքների համար օգտագործման նպատակով: 22.04.2015, 418-Ս որոշմամբ հավանություն է տրվել Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող «Ռադիո» ՓԲԸ բաժնետոմսերի ուղղակի վաճառքի արդյունքում համայնքի ֆոնդային բյուջե մուտքագրված 30849.3 հազ. դրամ ֆինանսական միջոցները Նորատուսի գյուղական համայնքի փողոցների հիմնանորոգման աշխատանքների իրականացմանն ուղղելու ծրագրին: 09.04.2015, 0636-Ս որոշմամբ «Վայք» ջրօգտագործողների ընկերության, Խնձորուտ N 1 պումպակայանի ճնշումային խողովակաշարից առանձնացվել են Նոր Ազնաբերդում 2019մ տրամագծով 1713զմ և 10243.3 հազ. դրամ արժեքով խողովակաշարերը, հենասյուներ 159մ տրամագծով 179զմ և Խնձորուտ համայնքում 325մ տրամագծով 1515զմ 9053.2 հազ. դրամ արժեքով ճնշումային խողովակաշարերը և նվիրաբերվել են Վայոց ձորի Նոր Ազնաբերդ և Խնձորուտ համայնքներին, ոռոգման ջրագծերի կառուցման նպատակով: 18.06.2015, 1328-Ս որոշմամբ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Մ.Օհանջանյան 92/1 հասցեում գտնվող 2729.1 հազ. դրամ սկզբնական արժեքով, 461.1 քառ. մետր ընդհանուր մակերեսով մասնաշենքը և 0.076 հա մակերեսով 94.8 հազ դրամ կադաստրային արժեքով հողամասը, ինչպես նաև Մ.Օհանջանյան 92 հասցեում գտնվող 20181.6 հազ. դրամ սկզբնական արժեքով, 1788.4 քառ. մետր մակերեսով շենքն ու շինությունները և 0.844 հա մակերեսով, 1053.2 հազ դրամ կադաստրային արժեքով հողամասը անհատույց սեփականության իրավունքով նվիրաբերվել է Մեղրի քաղաքային համայնքին: 06.08.2015, 895-Ս որոշմամբ Արագածոտնի մարզի Թաթուլի և Արևուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող 6.9կմ երկարությամբ 20400.0 հազ. դրամ գնահատված արժեքով պետական սեփականություն հանդիսացող զազատարի խողովակաշարից 4.4կմ-ը նվիրաբերվել է Արագածավանի, իսկ 2.5կմ-ը Արտենիի գյուղական համայնքներին, գույքն օտարելու և օտարումից ստացված ֆինանսական միջոցները օգտագործելու նոր զազատարի համաֆինանսավորման նպատակով: 22.10.2015, 1336-Ս որոշմամբ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Վ.Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ շենքից 634.0 քառ. մետր մակերեսով տարածքը, 67.0 քառ մետր մակերեսով շինությունը և 0.2351 հա հողատարածքը նվիրաբերվել է Ապարանի քաղաքային համայնքին վերակառուցելու և որպես նախադպրոցական ուսումնական հաստատություն օգտագործելու համար: 19.11.2015, 1345-Ս որոշմամբ գույք է նվիրաբերվել Գյումրու քաղաքային համայնքին: 03.12.2015, 1416-Ս որոշմամբ Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 64 հասցեում գտնվող շենքը և շինությունները և 0.3 հա հողամասը նվիրաբերվել է Գյումրու համայնքին, նշված շենք-շինություններում բնակվող բնակիչներին անհատույց սեփականաշնորհելու պայմանով: 03.12.2015, 1421-Ս որոշմամբ գույք է նվիրաբերվել Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքին:

նախորդ տարվա համեմատ զգալիորեն (մոտ երկու անգամ) կրճատվել են (աղյուսակ 12): Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2015թ. ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը գրեթե ամբողջությամբ ստացվել են հիմնական միջոցների (9.7%) և հողի (90.2%) իրացումից: Չնչին են բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքերը:

**Աղյուսակ 12. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը 2013 – 2015թթ. (մլն. ՀՀ դրամ)**

Տող	Բովանդակություն	2013թ.	2014թ.	2015թ.
1	2	3	4	5
<b>6000</b>	<b>ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ</b>	<b>12081.6</b>	<b>15354.3</b>	<b>7547.3</b>
<b>6100</b>	<b>այդ թվում՝ հիմնական միջոցների իրացումից մուտքեր</b>	<b>1838.7</b>	<b>1177.6</b>	<b>736.5</b>
6110	այդ թվում՝ անշարժ գույքի իրացումից մուտքեր	1581.9	936.0	584.2
6120	Շարժական գույքի իրացումից մուտքեր	19.4	1.0	0.9
6130	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	237.4	240.6	151.4
<b>6200</b>	<b>Պաշարների իրացումից մուտքեր</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
<b>6300</b>	<b>Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր</b>	<b>0.1</b>	<b>0.0</b>	<b>0.4</b>
<b>6400</b>	<b>Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր</b>	<b>10242.8</b>	<b>14176.7</b>	<b>6810.4</b>
6410	այդ թվում՝ հողի իրացումից մուտքեր	10242.4	14176.7	6810.4

2016թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) թիվը կազմել է 1326, որը 15-ով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ: 100% համայնքային սեփականությամբ բաժնետոմսերով առևտրային իրավաբանական անձանց թիվն ավելացել է 2-ով և կազմել՝ 428, իսկ պետություն-համայնք մասնակցությամբ առևտրային իրավաբանական անձանց թիվը նվազել է 2-ով և կազմել՝ 216:

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, համայնքային սեփականության հիմնական մասը կառուցվել կամ ձեռք է բերվել տասնամյակներ առաջ և անցած տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության: Վիճակը 2015թ. առանձնապես չի փոխվել և գույքի հիմնական մասը վերանորոգման կարիք ունի, իսկ համայնքների մեծ մասը դեռևս անհրաժեշտ միջոցներ չունի:

## 4.2 Համայնքների զարգացման ծրագիրը և բյուջետավարումը

Ինչպես նախկինում բազմիցս նշվել է, Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգում երկարաժամկետ պլանավորումը դեռևս լայնորեն չի օգտագործվում, ինչը պայմանավորված է՝ համայնքների ֆինանսական ռեսուրսների խիստ սահմանափակվածությամբ, համայնքների մեծ մասում որակյալ կադրերի բացակայությամբ, անտեղյակությամբ, տեղական ինքնակառավարման ոլորտում տիրող իրավիճակով և մի շարք այլ պատճառներով:

Ի տարբերություն երկարաժամկետ պլանավորման, միջնաժամկետ զարգացման ծրագրեր կազմվում են բոլոր համայնքներում: Համայնքների զարգացման քառամյա ծրագրերը (ՀԶԲԾ) միջնաժամկետ պլանավորման ձևերից են, որոնցում վերլուծվում են համայնքի կարողությունները, ներքին ու արտաքին միջավայրը, նշվում են առաջադրված նպատակներին հասնելու ուղիները, արտացոլվում են շահառուների վրա ունենալիք ազդեցությունները և հանրային կարիքների բավարարման չափորոշիչները: ՀԶԲԾ-ի հիմնախնդիրները կոնկրետացվում և ապագա գործողությունների պլաններ են դառնում բյուջետային գործընթացում, որտեղ որոշվում են տարեկան առաջնահերթությունները և տեղ են գտնում տվյալ տարվա բյուջեում: ՀԶԲԾ-ն հիմք է հանդիսանում համայնքի տարեկան բյուջեների կազմման և ծրագրային բյուջետավարման համար:

Ցավոք սրտի համայնքների մեծ մասում դեռևս քառամյա զարգացման ծրագրերի կազմմանը լուրջ ուշադրություն չեն դարձվում և դրանք հիմնականում ձևական բնույթ են կրում: Չնայած այդ ուղղությամբ կատարված որոշ աշխատանքների (ՀԶԲԾ մշակման և կառավարման միասնական մեթոդաբանություն, սեմինարների կազմակերպում, աշխատակիցների վերապատրաստում և այլն), համայնքների մեծ մասի համար քառամյա ծրագրերը մնում են որպես ձևական փաստաթղթեր, որոնք էական դերակատարում չունեն համայնքների բյուջեների կազմման ժամանակ:

2015թ. բյուջետային գործընթացներին վերաբերվող էական փոփոխություններ չեն եղել: Համայնքների մի մասը (հատկապես փոքր գյուղական համայնքները) բյուջետային գործընթացը շարունակում են իրականացվել իմիջիայոց և թերություններով, չեն ապահովվում այդ գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, անտեսվում են բնակիչների մասնակցության նշանակությունը:

Դեռևս շատ է այն համայնքների թիվը, որոնց բյուջետային միջոցները բավարարում են միայն աշխատակազմի պահպանման ծախսերին: Սովորաբար այդ համայնքներում չկան համապատասխան մասնագետներ, իսկ բյուջեները կազմվում են որպես եկամուտների և ծախսերի նախահաշիվ, առանց լուրջ վերլուծությունների և զարգացման ծրագրերի:

ՀՀ պետական կառավարման համակարգում ծրագրային բյուջետավարման ներդրմանը զուգահեռ, նմանատիպ աշխատանքների իրականացման անհրաժեշտություն է զգացվում նաև համայնքների բյուջեների մասով՝ առաջիկայում տեղական ինքնակառավարման համակարգում ևս արդյունքների վրա հիմնված (ծրագրային, ըստ աշխատանքների կատարման արդյունքների և այլն) բյուջետավարման ժամանակակից մոտեցումները և ձևաչափերը ներդնելու առումով:

Վերջին տարիներին համայնքների մի մասը (հիմնականում քաղաքային) համալրվել են բարձրորակ մասնագետներով, որոնք էլ իրականացնում են բյուջետավարման նոր ժամանակակից մեթոդներ՝ օգտագործելով ինչպես ծրագրային, այնպես էլ ըստ աշխատանքների կատարման բյուջետավարում:

### 4.3 Համայնքի բյուջեի եկամուտները

2015թ. Հայաստանի համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտները կազմել են 128,225.2 մլն. դրամ (2013թ.՝ 105,502.4 մլն. դրամ, 2014թ.՝ 114,359.1 մլն. դրամ), ինչը նախորդ տարվա համեմատ ավելացել է 1,866.1 մլն. դրամով, կամ 12.1%-ով (աղյուսակ 13): 9,539.9 մլն. դրամով ավելացել են այլ եկամուտները, ինչը պայմանավորված է պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներով, ավելացել է նաև նրա տեսակարար կշիռը՝ 35.1% (2014թ.՝ 31.0%): Չնայած նախորդ տարվա համեմատությամբ 3,756.0 մլն. դրամով ավելացել են պաշտոնական դրամաշնորհները, սակայն նվազել է նրա տեսակարար կշիռը՝ 46.4% (2014թ.՝ 48.7%): Նախորդ տարվա համեմատ փոքր աճ են ունեցել հարկեր և տուրքեր բաժնի գույքային հարկեր անշարժ գույքից (այդ թվում հողի հարկ) և գույքային հարկեր փոխադրամիջոցներից, սակայն նվազել են նրանց տեսակարար կշիռները: Նվազել են տեղական և պետական տուրքերը, նվազել են նաև նրանց տեսակարար կշիռները: Զգալիորեն նվազել են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը, նվազել է նաև նրա տեսակարար կշիռը:

Համայնքների բյուջեի սեփական եկամուտները 2015թ. կազմել են 33,963.1 մլն. դրամ (2014թ.՝ 33,418.2 մլն. դրամ), կամ ամբողջ եկամուտների 26.5%-ը՝ 2014թ. 29.2%-ի փոխարեն: Չնայած սեփական եկամուտների մի փոքր աճին (544.9 մլն. դրամ), 2.7%-ով նվազել է նրա տեսակարար կշիռը: Վերը նշված տվյալները ցույց են տալիս, որ դեռևս մեծ է մնում համայնքների կախվածությունը պաշտոնական դրամաշնորհներից:

ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարի մեջ դեռևս զգալի է մնում

Երևան համայնքի բյուջերի եկամուտների տեսակարար կշիռը, 2015թ. կազմելով՝ 59.7% (2014թ. 59.2%), այդ թվում՝ շենքերի և շինությունների գույքահարկ՝ 75.8%, գույքային հարկեր փոխադրամիջոցներից՝ 55.1%, տեղական տուրքեր՝ 81.6%, պաշտոնական դրամաշնորհներ՝ 38.8%, իսկ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները՝ 98.9% (աղյուսակ 14):

**Աղյուսակ 13. ՀՀ համայնքների բյուջեի եկամուտները և նրանց տեսակարար կշիռը 2013-2015թթ. (մլն. ՀՀ դրամ)**

Տող	Եկամտատեսակները	2013թ.		2014թ.		2015թ.	
		Գումարը	Կշիռը ընդհ. մեջ (%)	Գումարը	Կշիռը ընդհ. մեջ (%)	Գումարը	Կշիռը ընդհ. մեջ (%)
1	2	3	4	5	6	7	8
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՍՏՈՒՏՆԵՐ	105802.4	100	114359.1	100	128225.2	100
1100	այդ թվում՝ 1.Հարկեր և Տուրքեր	21121.5	20.0	23260.1	20.3	23790,3	18.6
1110	այդ թվում՝ 1.1.Գույքային հարկեր անշարժ գույքից/այդ թվում հողի հարկ/	9463.9	8.9	9488.6	8.3	9537.1	7.4
1121	1.2.Գույքային հարկեր փոխադրամիջոցներից	7462.6	7.1	9122.2	8.0	9795.9	7.6
1131	1.3.Տեղական տուրքեր	3492.8	3.3	3892.8	3.4	3760.1	2.9
1161	1.4.Պետական տուրքեր	702.2	0.7	756.5	0.7	697.2	0.5
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	54799.5	51.8	55639.1	48.7	59435.1	46.4
1300	3.ԱՅԼ ԵՎԱՍՏՈՒՏՆԵՐ	29881.4	28.2	35459.9	31.0	44999.8	35.1
1342	Այդ թվում՝ Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	20644.4	19.5	25301.8	22.1	34827.0	27.2
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	8478.2	8.0	7220.4	6.3	4149,6	3.2



2015թ. նախորդ տարվա համեմատությամբ 2,451.9 մլն. դրամով, կամ 31.9%-ով նվազել են ֆոնդային բյուջեի եկամուտները, նվազել է նաև նրա տեսակարար կշիռը՝ 4.1% (2014թ.՝ 6.7%): Ֆոնդային բյուջեի եկամուտների հիմնական մասը 79.3.0%-ը, ինչպես նախորդ տարիներին, բաժին է ընկնում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերին: Ֆոնդային բյուջեի 58.4%-ը (2014թ 78.3%ը) բաժին է ընկնում Երևան համայնքին (աղյուսակ 16):

**Աղյուսակ 14. Երևանի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռները ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների կազմում 2015թ., մլն. դրամ)**

	Եկամտատեսակները	Ընդամենը հահայնքների բյուջեների եկամուտները	Այդ թվում՝ Երևանի բյուջեի եկամուտները	Երևանի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ (%)
1	2	3	4	5
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	128225.2	76561.6	59.7
1100	Այդ թվում՝ 1.Հարկեր և Տուրքեր	23790.3	13698.6	57.6
1110	Այդ թվում՝ 1.1.Գույքային հարկեր անշարժ գույքից	9537.1	4856.0	50.9
1111	Այդ թվում՝ Գույքահարկ շենքերի և շինությունների համար	5586.0	4232.1	75.8
1112	Այդ թվում՝ Հողի հարկ	3951.1	623.9	15.8
1120	1.2.Գույքային հարկեր այլ գույքից	9795.9	5396.8	55.1
1121	Այդ թվում փոխադրամիջոցներից	9795.9	5396.8	55.1
1131	1.3.Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում՝ Տեղական տուրքեր	3760.1	3067.4	81.6
1150	1.4.Այդ թվում՝ Այլ տեղական տուրքեր	27.5	27.0	98.2
1160	1.5.Այլ պարտադիր վճարներ	697.2	378.4	54.3
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐԶՆԵՐ	59435.1	23058.9	38.8
1300	3.ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	44999.8	39804.1	88.5
1342	Այդ թվում՝ Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	34827.0	34445.6	98.9
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	4149.6	484.2	11.7

**Աղյուսակ 15. Համայնքների բյուջեի եկամուտների պաշտոնական դրամաշնորհները 2013-2015թթ ( մլն. ՀՀ դրամ)**

1	2 Եկամտատեսակները	2013թ.		2014թ.		2015թ.	
		Գումարը 3	Կշիռը ընդհ. մեջ (%) 4	Գումարը 5	Կշիռը ընդհ. մեջ (%) 6	Գումարը 7	Կշիռը ընդհ. մեջ (%) 8
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	54799.5	100	55639.1	100	59435.1	100
1210	Այդ թվում 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	0	0	0.8	0	0.8	0
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	0	0	0	0	0	0
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	0	0	5.0	0	0	0
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	0	0	1.8	0	0	0
1250	2.5.Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	54176.7	98.9	55224.0	99.3	58481.4	98.4
1251	Որից Ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	36191,0	66,0	38957.7	70.0	44018.7	74.1
1254	Բ)Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	9256,1	16.9	8029.8	14.4	4340.9	7.3
1257	Գ)Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	8729.6	15.9	8236.5	14.8	10121.8	17.0

1260	2.6. Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից	622.8	1.1	407.5	0.7	952.9	1.6
1261	Այդ թվում՝ Ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	622.8	1.1	407.5	0.7	952.9	1.6
1262	Բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0

Նախորդ տարվա համեմատ 3796.0 մլն.-ով ավելացել են պաշտոնական դրամաշնորհները: Ավելացել են պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաները) և պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաները), ավելացել են նաև նրանց տեսակարար կշիռները պաշտոնական դրամաշնորհներում (աղյուսակ 15): Մոտ երկու անգամ նվազել են պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները՝ 4,340.9 մլն. (2014թ. 8,029.7 մլն.), նվազել է նաև նրա տեսակարար կշիռը՝ 14.4% (2014թ.՝ 7.3%):

Կառավարության մի շարք որոշումներով կառավարության պահուստային ֆոնդից մարզպետարաններին տրամադրվել են գումարներ՝ համայնքներին ընթացիկ և կապիտալ սուբվենցիաներ, ինչպես նաև այլ դրամական միջոցներ<sup>37</sup>:

2015թ. այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից և կառավարման այլ մակարդակներից կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ չեն ստացվել: Ընթացիկ արտաքին դրամաշնորհներ ստացվել են միայն այլ պետություններից, այն էլ ընդամենը 0.8 մլն. դրամի չափով: ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով պաշտոնական դրամաշնորհներ չեն ստացվել (աղյուսակ 15):

<sup>37</sup> 06.08.2015, 898-Ն որոշմամբ Գեղարքունիքի մարզի ճամբարակի համայնքում 2015թ. տեղի ունեցած ուժեղ քամիներից վնասված բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման նպատակով Գեղարքունիքի մարզպետարանին հատկացվել է 49600.0 դրամ (կապիտալ սուբվենցիա): 18.08.2015, 949-Ն որոշմամբ Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքապետարանի «Մանկապատանեական մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի վերանորոգման և բնական գործունեության համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման նպատակով Սևանի համայնքին սուբվենցիա տրամադրելու համար Գեղարքունիքի մարզպետարանին հատկացվել է 7000.0 հազ. դրամ: 18.08.2015, 950-Ն որոշմամբ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքի աշխատակազմում աշխատավարձի ու սոցիալական ապահովագրության վճարների ձևավորված պարտքերի մարման նպատակով Սևանի համայնքին սուբվենցիա տրամադրելու համար Գեղարքունիքի մարզպետարանին հատկացվել է 9300.0 հազ. դրամ: 18.08.2015, 951-Ն որոշմամբ Լոռու մարզի Մարգահովտի գյուղական համայնքի համայնքային նշանակության ճանապարհի վերանորոգման նպատակով մարգահովտի գյուղական համայնքին սուբվենցիա տրամադրելու համար Լոռու մարզպետարանին հատկացվել է 25000.0 հազ. դրամ: 18.08.2015, 952-Ն որոշումով Արարատի մարզի Գոռավանի և Սուրենավանի համայնքային

**Աղյուսակ 16. ՀՀ համայնքների ֆոնդային բյուջեի եկամուտները և Երևանի տեսակարար կշիռը 2015թ. (մլն. դրամ)**

Տող	Եկամուտները	Ընդամենը համայնքներ	Այդ թվում՝ Երևան	Երևանի տեսակարար կշիռը (%)
1	2	3	4	5
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	5230.4	3056.4	58.4
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	953.0	94.0	9.9
1300	3.ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	4277.4	2962.4	69.3
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	127.5	0.0	0.0
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	4149.6	2959.5	71.3

2015 թվականին համայնքների բյուջեի եկամուտների կառուցվածքը էական փոփոխությունների չի ենթարկվել:

Ինչպես նախորդ տարիներին, 2015թ. ևս պետական բյուջեին ամրագրվող եկամտահարկից և շահութահարկից համայնքների բյուջեներին մասհանումներ չեն կատարվել:

Խնդիրների լուծման նպատակով Արարատի մարզպետարանին հատկացվել է 6000.0 դրամ, յուրաքանչյուր համայնքին 3000.0 հազ. դրամի չափով (ընթացիկ սուբվենցիա): 18.08.2015, 953-Ն որոշմամբ Արարատի մարզի Այգեստանի գյուղական համայնքի արտեզյան հորի շահագործման համար ենթակայան տեղադրելու և մանկապարտեզի գույքի ձեռքբերման նպատակով Այգեստանի գյուղական համայնքին սուբվենցիա տրամադրելու համար Արարատի մարզպետարանին հատկացվել է 5000.0 հազ. դրամ: 18.08.2015, 954-Ն որոշմամբ Արարատի մարզի Արալեզի համայնքի Ցեղասպանության 100-ամյակին նվիրված հուշահամալիրի կառուցման նպատակով Արալեզի համայնքին սուբվենցիա տրամադրելու համար Արարատի մարզպետարանին հատկացվել է 15000.0 հազ. դրամ: 18.08.2015, 955-Ն որոշմամբ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքի մարզադպրոցի վերանորոգման և համայնքային նշանակության այգու վերանորոգման նպատակով Վայքի համայնքին սուբվենցիա տրամադրելու համար Վայոց ձորի մարզպետարանին հատկացվել է 120000.0 հազ. դրամ: 22.10.2015, 1227-Ա որոշմամբ Ջերմուկ համայնքի բնական գործունեությունն ապահովելու նպատակով նախորդ տարիներին առաջացած պարտքերը վճարելու և ջերմուկ քաղաքի զարգացման ծրագրի իրականացման միջոցառումներին աջակցելու համար Վայոց ձորի մարզպետարանին հատկացվել է 29000.0 հազ. դրամ (ընթացիկ սուբվենցիա): 19.11.2015, 1346-1346-Ն որոշմամբ Սյունիքի մարզի Գորիսի ճանապարհների վերանորոգման նպատակով Սյունիքի մարզպետարանին հատկացվել է 20000.0 հազ. դրամ (կապիտալ սուբվենցիա): 26.11.2015, 1377-Ն Սյունիքի մարզի Կապանի Ա.Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի վերանորոգման նպատակով Սյունիքի մարզպետարանին հատկացվել է 28000.0 հազ. դրամ (կապիտալ սուբվենցիա): 26.11.2015, 1381-Ն որոշմամբ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման նպատակով Սյունիքի մարզպետարանին հատկացվել է 30000.0 հազ. դրամ (կապիտալ սուբվենցիա): 03.12.2015, 1406-Ն որոշմամբ 1.Վայոց ձորի մարզի Վարդահովտի համայնքի ներհամայնքային ճանապարհների խճապատման նպատակով Վայոց ձորի մարզպետարանին հատկացվել է 15000.0 հազ. դրամ (կապիտալ սուբվենցիա): 2. Արարատի մարզի Դալարի համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնի վերանորոգման նպատակով Արարատի մարզպետարանին հատկացվել է 20000.0 հազ. դրամ (կապիտալ սուբվենցիա): 17.12.2015, 1497-Ն որոշմամբ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների առաջնաերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվելիք աշխատանքների համար Տավուշի մարզպետարանին հատկացվել է 130000.0 հազ. դրամ (ընթացիկ սուբվենցիա):

2015թ. Համայնքների բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 8,115.8 մլն. դրամ, այդ թվում վարչական բյուջե՝ 271.2 մլն. և ֆոնդային բյուջե՝ 7,844.6 մլն. դրամ: Այն հիմնականում ուղղվել է բյուջեների նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը: 2015թ. համայնքների բյուջեների ընդամենը դեֆիցիտը (պակասորդը) կազմել է 1,014.9 մլն. դրամ, որից վարչական բյուջեի հավելուրդը կազմել է 2,858.0 մլն., իսկ ֆոնդային բյուջեի դեֆիցիտը (պակասորդը)՝ 3,872.9 մլն. դրամ: Այդ պակասորդը ֆինանսավորվել է հիմնականում ի հաշիվ համայնքների բյուջեների տարեսկզբի ազատ մնացորդների:

Համայնքների գերակշիռ մասում ավագանիների ինստիտուտը դեռևս մնում է չկայացած և լուրջ հակակշիռ չի հանդիսանում համայնքի ղեկավարին:

#### **4.4 Պարտքի կառավարումը**

2015թ. ընթացքում համայնքները արտաքին աղբյուրներից վարկեր և այլ համայնքներից փոխառություններ չեն ստացել:

2015թ. ևս ՏԻՄ-երի կողմից պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու կարգ չի սահմանվել և համայնքները այդ ընթացքում պարտատոմսեր չեն թողարկել:

#### **4.5 Ֆինանսական հաշվետվողականությունը**

2015թ. համայնքների կողմից ներկայացվող հաշվետվությունները սահմանված ձևով և հիմնականում նշված ժամկետներում (եղել են առանձին ուշացման դեպքեր) ներկայացվել են համապատասխան մարմիններին (համայնքի ավագանուն, մարզպետին, գանձապետարանին և այլն):

2015թ. 3-րդ եռամսյակում համայնքների բյուջեների հրապարակայնությունն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով, համայնքային բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, հաստատված բյուջեն և նրանում կատարված փոփոխությունները 915 համայնքներից՝ 912-ը տեղադրել է ցուցատախտակներին և տեսանելի վայրերում, 57-ը հեռարձակել է հեռուստատեսությամբ, 107-ը տպագրել է թերթերում, իսկ 597-ը տեղադրել է ինտերնետային կայք էջերում: Չնայած այս ոլորտում առկա առաջընթացին, դեռևս կան փոքր գյուղական համայնքներ, որոնք չեն հրապարակում ոչ միայն իրեց հաշվետվությունները, այլև հաստատված բյուջեները:

Ներքին աուդիտի նոր համակարգը ներդրվել է 2012թ. 49 քաղաքային հա-

մայնքներից 45-ում, իսկ մնացած 4 քաղաքային համայնքները (Ախթալա, Թումանյան, Շամլուխ, Դաստակերտ) իրենց ներքին աուդիտը իրականացնում են մարզպետարանների միջոցով: 2015թ. ներքին աուդիտի համակարգը շարունակել է գործել 45 քաղաքային համայնքներից 41-ում, բացառությամբ քաղաքային 4 համայնքների (Բերդ, Մարալիկ, Մեղրի, Վարդենիս), որտեղ ներքին աուդիտի ստորաբաժանումները համալրված չեն: Ներքին աուդիտի միջոցով իրականացվում է պետական ֆինանսների կառավարման արդյունավետության անկախ և օբյեկտիվ գնահատում: Այն առաջարկում է նաև գնահատված համակարգի և գործառույթների բարելավմանն ուղղված միջոցառումներ, որոնք իրականացնում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակավորված մասնագետները: Ինչ վերաբերվում է գյուղական համայնքներին, ապա վիճակը չի փոխվել և նրանց հիմնական մասը, 2015թ. նույնպես չի անցել ներքին աուդիտ և շարունակում է աուդիտորի հաստիք չունենալ: Բացատրությունը նույնն է՝ մասնագետներ չկան, միջոցներ նույնպես:

Դեռևս շատ քիչ են արտաքին աուդիտ անցկացնող համայնքները:

## 5. ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանությունը

Հիմնվելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության գնահատման բնագավառում միջազգային փորձի վրա, ստորև բերվում են նախկին տարիներին ընտրված ֆինանսական ցուցանիշների գնահատման արդյունքները 2015թ. համար:

**Տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները տվյալ երկրի հանրային ծախսերում և համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ-ում)** բնութագրում են այդ երկրում իշխանության ապակենտրոնացման աստիճանը<sup>38</sup>: Եվրամիության երկրներում տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակների՝ տեղական և տարածաշրջանային բյուջեների ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում կազմել է 34.0%, իսկ ՀՆԱ-ում՝ 16.5%, իսկ միայն տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում կազմել է 26.0%, ՀՆԱ-ում՝ 11.6% (աղյուսակ 17):

**Աղյուսակ 17. Եվրամիության երկրների և Հայաստանի տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները հանրային ծախսերում (2011թ. տվյալներով) և ՀՆԱ-ում (2013թ. տվյալներով)<sup>39</sup>**

Երկրներ	Տեղական բյուջեների ծախսերը հանրային ծախսերում (%)	Տեղական բյուջեների ծախսերը ՀՆԱ-ում (%)
Դանիա	64,5	37,5
Իսպանիա	54,0 / 17,0*	24,0 / 5,9*
Շվեդիա	49,0	26,0
Գերմանիա	46,0 / 17,5*	21,0 / 7,8*
Բելգիա	42,0 / 12,5*	22,0 / 8,4*
Ֆինլանդիա	41,0	23,9
<b>Եվրամիության երկրների միջինը</b>	<b>34,0 / 26,0*</b>	<b>16,5 / 11,6*</b>
Ավստրիա	33,5 / 16,5*	17,0 / 8,0*
Հոլանդիա	33,0	15,4
Լեհաստան	32,5	13,1
Բուլղարիա	31,0	15,0
Լատվիա	28,0	10,3
Խորվաթիա	27,5	12,3
Մեծ Բրիտանիա	27,5	12,0

<sup>38</sup> Հայաստանում հանրային ծախսերի տակ դիտարկվում են ՀՀ համախմբված բյուջեի ծախսերը, իսկ ՀՆԱ-ի տակ դիտարկվում է անվանական ՀՆԱ-ն:

<sup>39</sup> Աղբյուրը՝ Subnational public finance in the European Union, Dexia, 2013

Չեխիա	27,5	10,2
Լիտվա	26,5	8,4
Ռումինիա	26,0	9,0
Էստոնիա	25,0	10,0
Հունգարիա	23,0	7,6
Ֆրանսիա	21,5	12,2
Սլովենիա	19,0	9,7
Բուլղարիա	19,0	8,4
Սլովակիա	18,0	6,3
Պորտուգալիա	13,5	6,4
Լյուքսեմբուրգ	13,0	5,2
Իռլանդիա	13,5	4,8
<b>*Հայաստան</b>	<b>8,8</b>	<b>2,41</b>
Հունաստան	6,0	3,4
Կիպրոս	4,5	1,7
Մալթա	1,5	0,8

\*) Միայն տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները հանրային ծախսերում կամ ՀՆԱ-ում

**ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՀ 2015-թ. համախմբված բյուջեում եկամուտների գծով կազմել է 10.7%, իսկ ծախսերի գծով՝ 8.9%** (հավելված 3): Նախորդ տարվա համեմատ, 2015-ին այս ցուցանիշը եկամուտների գծով աճել է մոտ 1.0%-ով, իսկ ծախսերի գծով նվազել է մոտ 0.1%-ով: Հայաստանն այդ ցուցանիշներով դեռևս էականորեն զիջում է Եվրամիության երկրներին՝ մոտ 3.8 անգամ փոքր լինելով Եվրամիության երկրների միջին ցուցանիշից, և գերազանցում է միայն Հունաստանին, Կիպրոսին ու Մալթային:

**Համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում 2004-2009թթ.** Հայաստանում տատանվել է 1.3-1.7%-ի սահմաններում, 2010-2014թթ.՝ 2.3-2.53%-ի սահմաններում, իսկ **2015-ին այն որոշ չափով աճել է՝ կազմելով 2.57%<sup>40</sup>**: Մակայն, վերջին ցուցանիշը մոտ 6.5 անգամ փոքր է Եվրամիության երկրների միջին ցուցանիշից և գերազանցում է միայն Կիպրոսի ու Մալթայի նույն ցուցանիշին:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Հայաստանում իշխանության ապակենտրոնացման աստիճանը շարունակում է էականորեն ցածր մնալ Եվրամիության երկրներում իշխանության ապակենտրոնացման աստիճանից:

**ՀՀ համայնքների (բացառությամբ Երևան քաղաքի) 2015թ. բյուջեների ամփոփ եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները տարեկան**

<sup>40</sup> Հայաստանի 2015թ. տարեկան անվանական ՀՆԱ-ն ընթացիկ գներով կազմել է 5,032.1 մլրդ դրամ, աղբյուրը՝ [www.armstat.am](http://www.armstat.am)



**հաստատված պլանի նկատմամբ** ավելի բարձր են, քան **տարեկան ճշտված պլանի նկատմամբ** (աղյուսակ 18): Այսպես, եկամուտների գծով, ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2015թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 105.6%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 104.3%: Ծախսերի գծով, ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2015թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 101.1%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 98.9%:

Համեմատելով ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2015թ. բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2014թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ, ինչպես ՀՀ բոլոր համայնքների 2015թ. բյուջեների եկամտային մասերի կատարման տոկոսները (105.6% և 104.3%) զգալիորեն բարձր են (համապատասխանաբար 5.8%-ով և 5.2%-ով) համայնքների 2014թ. բյուջեների եկամտային մասերի կատարման տոկոսներից (99.8% և 99.1%), այնպես էլ զգալիորեն բարձր են (համապատասխանաբար 5.7%-ով և 6.2%-ով) ծախսային մասերի կատարման տոկոսներից: Մա նշանակում է, որ, նախորդ տարվա համեմատ, 2015-ին նկատելիորեն բարելավվել է համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի կատարողական ընդհանուր կարգապահությունը:

**Աղյուսակ 18. ՀՀ համայնքների 2015թ. բյուջեների ընդհանուր եկամուտների, ծախսերի և հավելուրդի/պակասուրդի տարեկան հաստատված, ճշտված պլանները և փաստացի կատարումը (հազար դրամ)<sup>41</sup>**

Հի	Հոդվածի անվանումը	2015թ.				
		Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման տոկոսը հաստատված պլանի նկատմամբ, %	Կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ, %
	<b>ՀՀ բոլոր համայնքների բյուջեների</b>					
1	Եկամուտներ, ընդամենը	121,448,844.5	122,903,286.3	128,225,234.4	105.6	104.3
2	Ծախսեր, ընդամենը	127,791,152.2	130,728,322.6	129,240,154.3	101.1	98.9
3	Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-)	-6,342,307.6	-7,825,036.2	-1,014,920.0	x	x

<sup>41</sup> Աղբյուրները՝ [www.minfin.am](http://www.minfin.am) և [www.yerevan.am](http://www.yerevan.am)

	<b>այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի</b>					
1	Եկամուտներ, ընդամենը	71,870,838.3	70,618,885.8	76,561,620.2	106.5	108.4
2	Ծախսեր, ընդամենը	72,120,838.3	71,267,361.4	77,078,437.5	106.9	108.2
3	Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-)	-250,000.0	-648,475.6	-516,817.2	x	x
	<b>այդ թվում՝ ՀՀ բոլոր համայնքների՝ առանց Երևան քաղաքի, բյուջեների</b>					
1	Եկամուտներ, ընդամենը	49,578,006.2	52,284,400.5	51,663,614.2	104.2	98.8
2	Ծախսեր, ընդամենը	55,670,313.9	59,460,961.2	52,161,716.8	93.7	87.7
3	Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-)	-6,092,307.6	-7,176,560.6	-498,102.8	x	x

**Երևան քաղաքի 2015թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների կատարման մակարդակները** (աղյուսակ 18) համապատասխանաբար մոտ 0.9%-ով և 4.1%-ով ավելի բարձր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2015թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների կատարման մակարդակները: Առավել տպավորիչ է, որ Երևան քաղաքի 2015թ. հաստատված և ճշտված բյուջեների ծախսերի կատարման մակարդակները համապատասխանաբար մոտ 5.8%-ով և 9.3%-ով ավելի բարձր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2015թ. նույն ցուցանիշներից:

Համեմատելով Երևանի 2015թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2014թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ բյուջեների կատարման տոկոսները զգալիորեն աճել են:

Եկամուտների գծով, **ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2015թ. բյուջեների կատարումը** տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 104.2%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 98.8%: Ծախսերի գծով, ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2015թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 93.7%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 87.7%: Սա նշանակում է, որ ՀՀ համայնքներում դեռևս կան որոշակի խնդիրներ՝ կապված բյուջեների եկամուտների և հատկապես ծախսերի ճշգրիտ կանխատեսումների, պլանավորման և, հետագայում նաև, դրանց ճշտման և պատշաճ կատարման հետ:

Փաստորեն, ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2015թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների կատարման մակարդակները (աղյուսակ 18) համապատասխանաբար մոտ 1.4%-ով և 5.5%-ով ավելի ցածր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2015թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների կատարման մակարդակները, իսկ ՀՀ բոլոր

համայնքների (առանց Երևան քաղաքի) 2015թ. հաստատված և ճշտված բյուջեների ծախսերի կատարման մակարդակները, ավելի վատ, համապատասխանաբար մոտ 7.4%-ով և 11.2%-ով ավելի ցածր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2015թ. հաստատված և ճշտված բյուջեների ծախսերի կատարման մակարդակները:

Համայնքների ֆինանսական ապահովվածության կարևոր հարաբերական ցուցանիշներից են **բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների եկամուտը և ծախսը**: ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2011-2015թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 19, գծապատկեր 1) բացարձակ արժեքով տարեցտարի զգալիորեն աճել է՝ 2011թ. 28,908 ՀՀ դրամից (մոտ 77.5 ԱՄՆ դոլարից) 2015-ին հասնելով 42,722 դրամի (մոտ 89.4 դոլարի): Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2011-2015թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 19, գծապատկեր 2) 2011թ. 29,494 դրամից (մոտ 79.1 դոլարից) 2015-ին հասել է 43,060 դրամի (մոտ 90.1 դոլարի):

**Աղյուսակ 19. ՀՀ համայնքների 2011-2015թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը և ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով) \***

Ցուցանիշի անվանումը	2011	2012	2013	2014	2015
ՀՀ (ներառյալ՝ Երևանի) բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ)	3,021.4	3,026.9	3,017.1	3,010.6	3,001.4
Երևանի բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ)	1,061.1	1,066.3	1,068.3	1,071.5	1,072.4
ՀՀ (առանց Երևանի) բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ)	1,960.3	1,960.6	1,948.8	1,939.1	1,929.0
Մեկ ԱՄՆ դոլարի տարվա միջին փոխարժեքը (ՀՀ դրամ)	373	402	410	416	478
Տարեկան միջին գնաճը (%)	107.7	102.6	105.8	103.0	103.7
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	28,908	31,556	35,068	37,985	42,722
Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	48,203	53,688	59,597	63,475	71,393


\* Աղբյուրները՝ [www.armstat.am](http://www.armstat.am) և [www.minfin.am](http://www.minfin.am)

ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	18,464	19,519	21,621	23,901	26,783
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	77.5	78.5	85.5	91.3	89.4
Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	129.2	133.6	145.4	152.6	149.4
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	49.5	48.6	52.7	57.5	56.0
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	29,494	32,196	34,182	38,078	43,060
Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	49,472	55,412	58,187	64,484	71,875
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	18,680	19,570	21,022	23,487	27,041
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	79.1	80.1	83.4	91.5	90.1
Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	132.6	137.8	141.9	155.0	150.4
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	50.1	48.9	51.3	56.5	56.6


Երևանի 2011-2015թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով բացարձակ արժեքով տարեցտարի զգալիորեն աճել է՝ 2011թ. 48,203 դրամից (մոտ 129.2 դոլարից) 2015-ին հասնելով 71,393 դրամի (մոտ 149.4 դոլարի): Համապատասխանաբար, Երևանի 2011-2015թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 19) 2011թ. 49,472 ՀՀ դրամից (մոտ 132.6 դոլարից) 2015-ին հասել է 71,875 դրամի (մոտ 150.4 դոլարի):

ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2011-2015թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով բացարձակ արժեքով տարեցտարի նկատելիորեն աճել է՝ 2011թ. 18,464 դրամից (մոտ 49.5 դոլարից) 2015-ին հասնելով 26,783 դրամի (մոտ 56.0 դոլարի): Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2011-2015թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2011թ. 18,680 դրամից (մոտ 50.1 դոլարից) 2015-ին հասել է 27,041 դրամի (մոտ 56.6 դոլարի):

Գծապատկեր 1. ՀՀ համայնքների 2011-2015թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի եկամուտը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)



Գծապատկեր 2. ՀՀ համայնքների 2011-2015թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)



Սակայն, եթե հաշվի առնենք նաև Հայաստանում տարեցտարի տեղի ունեցած զգալի գնաճը (աղյուսակ 19), ապա բնակչության մեկ շնչին մատուցվող համայնքային ծառայությունների ընդհանուր ծախսերի չափը տարիների ընթացքում զգալի փոփոխության չի ենթարկվել և նկատելի դրական ազդեցություն չի ունեցել բնակչության ընդհանուր կենսամակարդակի վրա, իսկ գյուղական և փոքր ու միջին քաղաքային համայնքների բնակչության կենսամակարդակի վրա, ընդհակառակը, այն նույնիսկ բացասական ազդեցություն է ունեցել:

Ցուցանիշների առանձին խումբ են կազմում ՏԻՄ-երին օրենքով տրված լիազորությունների ֆինանսական ապահովումն ըստ նրանց գործունեության բնագավառների կամ **համայնքների բյուջեների ծախսերն ըստ գործառական դասակարգման** (աղյուսակ 20):

2015-ին ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը **ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) բյուջեների** ընդհանուր ծախսերում (գծապատկեր 3) կազմել է 22.7%, որը համընկնում է 2014-ի նույն ցուցանիշի հետ:

Համայնքների 2015թ. բյուջեների ընդհանուր ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ 30.2% (2014-ին՝ նույնը), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 12.4%, տարրական ընդհանուր կրթություն՝ 5.2%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 6.2%, արտադպրոցական դաստիարակություն՝ 5.7% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 0.7%:

2014-ի համեմատ, մոտ 0.2%-ով նվազել է հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտին հատկացված ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2015թ. բյուջեների ընդհանուր ծախսերում՝ 6.8% (2014-ին՝ 7.0%): Սոցիալական ուղղվածություն ունեցող մյուս ոլորտներին ՀՀ համայնքների 2015թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռներն առանձնապես մեծ տեսակարար կշիռ չունեն ընդհանուր ծախսերում և կազմում են համապատասխանաբար՝ սոցիալական պաշտպանություն՝ 3.0% (2014-ին՝ 3.5%), առողջապահություն՝ 0.3% (2014-ին՝ 0.1%):

Աղյուսակ 20. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2015թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ գործառական դասակարգման

Հ/հ	Ծախսի անվանումը	2015թ.					
		ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %
	Ընդամենը ծախսեր*, այդ թվում՝	29,240,154.3	100	77,078,437.5	100	52,161,716.8	100
	Վարչական բյուջե	24,286,477.8	96.2	76,350,504.0	99.1	47,935,973.8	91.9
	Ֆունդային բյուջե	9,103,263.8	7.0	3,687,376.0	4.8	5,415,887.8	10.4
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	29,280,990.9	22.7	7,574,675.1	9.8	21,706,315.8	41.6
2	Պաշտպանություն	37,591.0	0.0	34,683.7	0.0	2,907.3	0.0
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	2,705.1	0.0	0.0	0.0	2,705.1	0.0
4	Տնտեսական հարաբերություններ, այդ թվում՝	9,316,895.7	7.2	7,859,027.2	10.2	1,457,868.5	2.8
4.1	Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	23,531.2	0.0	0.0	0.0	23,531.2	0.0
4.2	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	895,521.7	0.7	165,378.1	0.2	730,143.6	1.4
4.3	Վառելիք և էներգետիկա	383,576.1	0.3	0.0	0.0	383,576.1	0.7
4.4	Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն	2,873.9	0.0	0.0	0.0	2,873.9	0.0
4.5	Տրանսպորտ	14,394,810.0	11.1	11,299,340.7	14.7	3,095,469.3	5.9


4.6	Կապ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4.7	Այլ բնագավառներ	23,651.4	0.0	14,850.0	0.0	8,801.4	0.0
4.8	Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	5,435.0	0.0	0.0	0.0	5,435.0	0.0
4.9	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-6,412,252.4	-5.0	-3,620,541.6	-4.7	-2,791,710.8	-5.4
<b>5</b>	<b>Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝</b>	<b>11,347,805.0</b>	<b>8.8</b>	<b>7,555,093.0</b>	<b>9.8</b>	<b>3,792,712.0</b>	<b>7.3</b>
5.1	Աղբահանում	8,622,757.0	6.7	5,326,155.8	6.9	3,296,601.2	6.3
5.2	Կեղտաջրերի հեռացում	96,643.2	0.1	0.0	0.0	96,643.2	0.2
5.3	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	56,628.2	0.0	38,683.0	0.0	17,945.2	0.0
5.4	Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	48,998.4	0.0	0.0	0.0	48,998.4	0.1
5.5	Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	8,597.7	0.0	0.0	0.0	8,597.7	0.0
5.6	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	2,514,180.4	1.9	2,190,254.2	2.8	323,926.2	0.6
<b>6</b>	<b>Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այդ թվում՝</b>	<b>21,858,874.5</b>	<b>16.9</b>	<b>17,158,653.2</b>	<b>22.3</b>	<b>4,700,221.3</b>	<b>9.0</b>
6.1	Բնակարանային շինարարություն	3,820,533.7	3.0	3,352,280.6	4.3	468,253.1	0.9
6.2	Համայնքային զարգացում	539,536.6	0.4	0.0	0.0	539,536.6	1.0
6.3	Ջրամատակարարում	9,771,604.6	7.6	8,720,796.8	11.3	1,050,807.8	2.0
6.4	Փողոցների լուսավորում	3,633,610.7	2.8	2,282,019.7	3.0	1,351,591.0	2.6
6.5	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	24,683.0	0.0	6,382.0	0.0	18,301.0	0.0
6.6	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	4,068,905.9	3.1	2,797,174.0	3.6	1,271,731.9	2.4



7	Առողջապահություն	336,904.2	0.3	294,130.9	0.4	42,773.3	0.1
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	8,837,009.9	6.8	3,717,073.6	4.8	5,119,936.3	9.8
9	Կրթություն	39,030,998.6	30.2	26,046,054.3	33.8	12,984,944.3	24.9
9.1	Նախադպրոցական կրթություն	16,052,018.7	12.4	7,781,201.2	10.1	8,270,817.5	15.9
9.2	Տարրական ընդհանուր կրթություն	6,713,068.3	5.2	6,613,156.5	8.6	99,911.8	0.2
9.3	Միջնակարգ ընդհանուր կրթություն	8,056,090.7	6.2	7,964,489.2	10.3	91,601.5	0.2
9.4	Արտադպրոցական դաստիարակություն	7,361,562.7	5.7	3,119,543.6	4.0	4,242,019.1	8.1
9.5	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	848,258.2	0.7	567,663.8	0.7	280,594.4	0.5
10	Սոցիալական պաշտպանություն	3,830,987.9	3.0	1,691,955.2	2.2	2,139,032.7	4.1
11	Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր*	5,359,391.7	4.1	5,147,091.4	6.7	212,300.3	0.4

\*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեներում՝ 4,149,587.3 հազ. դրամ, Երևանի բյուջեում՝ 2,959,442.5 հազ. դրամ, ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեներում՝ 1,190,144.8 հազ. դրամ:

**Գծապատկեր 3. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2015թ. բյուջեների փաստացի ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում (ըստ գործառական դասակարգման)**



ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2015թ. բյուջեների ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները, 2014-ի համեմատ, զգալիորեն փոխվել են: Այսպես, այդ ցուցանիշը համարյա կրկնակի չափով նվազել է տրանսպորտի ոլորտում՝ կազմելով 11.1% (2014-ին՝ 21.1%), որը պայմանավորված է Երևանի բյուջեում նույն ցուցանիշի ավելի, քան կրկնակի նվազմամբ՝ 14.7% (2014-ին՝ 30.8%): Այդ ցուցանիշը նկատելիորեն նվազել է նաև շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանություն, կեղտաջրերի հեռացում և այլն)՝ կազմելով 8.8% (2014-ին՝ 9.6%), որը նորից պայմանավորված է Երևանի բյուջեում նույն ցուցանիշի նկատելի նվազմամբ՝ 9.8% (2014-ին՝ 10.5%): Եվ ընդհակառակը, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (բնակարանային շինարարություն, ջրամատակարարում, փողոցների լուսավորում և այլն) այդ ցուցանիշը զգալիորեն աճել է՝ կազմելով 16.9% (2014-ին՝ 12.6%):

**Երևան քաղաքի 2015թ. բյուջեում** ըստ գործառական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռները զգալիորեն տարբերվում են ՀՀ բոլոր համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռներից (աղյուսակ 20): Այսպես, Երևանի 2015թ. բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը մոտ 2.3 անգամ ավելի ցածր է ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշից (22.7%)՝ կազմելով 9.8% (2014-ին՝ 10.1%), իսկ ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների նույն ցուցանիշից (41.6%) այն ցածր է մոտ 4.2 անգամ:

Կրթության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, ընդհակառակը, ավելի բարձր է Երևանի 2015թ. բյուջեում, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) բյուջեներում՝ կազմելով 33.8% (2014-ին՝ 33.6%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 10.1%, տարրական ընդհանուր կրթություն՝ 8.6%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 10.3%, արտադպրոցական դաստիարակություն՝ 4.0% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 0.7%: Սա հիմնականում պայմանավորված է Երևանում հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում պետության կողմից համապատասխան պատվիրակված լիազորությունների իրականացմամբ և դրանց համար ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորմամբ:

Սոցիալական ուղղվածություն ունեցող մյուս ոլորտներին Երևանի 2015թ. բյուջեից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, նկատելի չափով փոփոխվել են՝ հանգիստ, մշակույթ և կրոն՝ 4.8% (2014-ին՝ 5.0%), սոցիալական պաշտպանություն՝ 2.2% (2014-ին՝ 3.2%), առողջապահություն՝ 0.4% (2014-ին՝ 0.2%):

Երևան քաղաքի 2015թ. բյուջեի ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տե-

սակարար կշիռները ևս, նախորդ տարվա համեմատ, էականորեն փոփոխվել են և համապատասխանաբար կազմել են՝ տրանսպորտի ոլորտում՝ 14.7% (2014-ին՝ 30.8%), բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (բնակարանային շինարարություն, ջրամատակարարում, փողոցների լուսավորում և այլն)՝ 22.3% (2014-ին՝ 14.9%), շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանում, կանաչապատում և այլն)՝ 9.8% (2014-ին՝ 10.5%) և այլն:

**ՀՀ համայնքների (առանց Երևան քաղաքի) 2015թ. բյուջեների՝** ըստ գործառնական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռներն էականորեն տարբերվում են ինչպես ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2015թ. բյուջեների, այնպես էլ Երևանի 2015թ. բյուջեի ծախսերի տեսակարար կշիռներից ընդհանուր ծախսերում (աղյուսակ 20): Այսպես, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2015թ. բյուջեներում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը դեռևս ամենաբարձրն է և կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 41.6%-ը (2014-ին՝ 41.7%):

Ընդհանուր ծախսերում երկրորդ բարձր տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ կազմելով 24.9% (2014-ին՝ 25.1%):

Սոցիալական ուղղվածություն ունեցող մյուս ոլորտներին ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2015թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, մնացել են մոտավորապես նույն մակարդակի վրա՝ հանգիստ, մշակույթ և կրոն՝ 9.8% (2014-ին՝ 10.1%), սոցիալական պաշտպանություն՝ 4.1% (2014-ին՝ 4.0%), առողջապահություն՝ 0.1% (2014-ին՝ նույնը):

ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2015թ. բյուջեների ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները որոշ չափով նվազել են և համապատասխանաբար կազմել են՝ բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում՝ 9.0% (2014-ին՝ 9.2%), շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում՝ 7.3% (2014-ին՝ 8.3%), տրանսպորտի ոլորտում՝ 5.9% (2014-ին՝ 6.4%), և այլն:

ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության ցուցանիշներից է նաև «**Ֆինանսավորվող կամ թերի ֆինանսավորվող լիազորությունների**» առկայությունը: Կան ՏԻՄ-երի գործունեության՝ ըստ բնագավառների, օրենքով սահմանված բազմաթիվ լիազորություններ (այդ թվում՝ հանրային ծառայությունների մատուցման), որոնք ՀՀ շատ համայնքներում ընդհանրապես չեն իրականացվում կամ իրականացվում են մասնակիորեն (հիմնականում՝ ֆինանսական միջոցների սղության, բայց նաև այլ պատճառներով): Այդպիսի լիազորությունների թվին են դասվում կենսական նշանակություն ունեցող այնպիսի հանրային ծառայությունների մատու-

ցումը, ինչպիսիք են, մասնավորապես, աղբահանությունը, կանաչապատումը, ջրամատակարարումը և ջրահեռացումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, բնակարանային շինարարությունը և կոմունալ ծառայությունները, և այլն:

Համայնքների բյուջեների ծախսերի տեսակների (ընթացիկ և կապիտալ/ոչ ֆինանսական ակտիվների գծով) հարաբերակցությունների մասին կարելի է պատկերացում կազմել՝ դիտարկելով **բյուջետային ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման**: ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) 2015թ. բյուջեների կապիտալ/ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 7.1%, սակայն, եթե հաշվի առնենք նաև ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի (7,547,315.1 հազ. դրամ կամ 5.8%) հաշվին կատարված կապիտալ ծախսերը, ապա կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 12.9% (աղյուսակ 21):

**Աղյուսակ 21. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2015թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման**

Հ/հ	Ծախսի անվանումը	2015թ.					
		ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տես. կշիռը %	Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տես. կշիռը %	ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	% Տես. կշիռը %
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ* (Ա+Բ+Գ)</b>	<b>129,240,154.3</b>	<b>100</b>	<b>77,078,437.5</b>	<b>100</b>	<b>52,161,716.8</b>	<b>100</b>
<b>Ա</b>	<b>ԸՆԹԱՅԻՎ ԾԱԽՍԵՐ*</b>	<b>120,138,379.0</b>	<b>93.0</b>	<b>73,391,061.5</b>	<b>95.2</b>	<b>46,747,317.5</b>	<b>89.6</b>
<b>1</b>	<b>Աշխատանքի վարձատրություն, այդ թվում՝</b>	<b>22,923,879.4</b>	<b>17.7</b>	<b>5,658,208.3</b>	<b>7.3</b>	<b>17,265,671.1</b>	<b>33.1</b>
	<i>Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ</i>	<i>22,923,635.0</i>	<i>17.7</i>	<i>5,658,208.3</i>	<i>7.3</i>	<i>17,265,426.7</i>	<i>33.1</i>
	<i>Փաստացի սոցիալական ապահովության վճարներ</i>	<i>244.3</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>1,103.2</i>	<i>0.0</i>
<b>2</b>	<b>Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում</b>	<b>40,507,349.9</b>	<b>31.3</b>	<b>28,894,127.5</b>	<b>37.5</b>	<b>11,613,222.4</b>	<b>22.3</b>
<b>3</b>	<b>Տոկոսավճարներ</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>


4	Սուբսիդիաներ	25,956,727.9	20.1	14,847,993.3	19.3	11,108,734.6	21.3
5	Դրամաշնորհներ	5,529,187.9	4.3	1,640,762.6	2.1	3,888,425.3	7.5
6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	3,128,296.9	2.4	1,119,838.7	1.5	2,008,458.2	3.9
7	Այլ ծախսեր*, այդ թվում՝	22,092,937.1	17.1	21,230,130.9	27.5	862,806.2	1.7
	Պահուստային միջոցներ*	5,359,391.7	4.1	5,147,091.4	6.7	212,300.3	0.4
	Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	4,149,587.3	3.2	2,959,442.5	3.8	1,190,144.8	2.3
Բ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	16,649,090.4	12.9	8,435,204.0	10.9	8,213,886.4	15.7
1	Հիմնական միջոցներ	16,449,020.0	12.7	8,295,507.5	10.8	8,153,512.5	15.6
2	Պաշարներ	162,126.0	0.1	139,696.5	0.1	22,429.5	0.0
3	Բարձրարժեք ակտիվներ	1,163.0	0.0	0.0	0.0	1,163.0	0.0
4	Զարտադրված ակտիվներ	36,291.5	0.0 0.0	0.0		36,291.5	0.1
Գ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	-7,547,315.1	-5.8	-4,747,828.1	-6.2	-2,799,487.0	-5.4
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-736,571.3	-0.6	-545,406.2	-0.7	-191,165.1	-0.4
2	Պաշարների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր	-362.0	0.0	0.0	0.0	-362.0	0.0
4	Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-6,810,381.8	-5.2	-4,202,421.8	-5.5	-2,607,960.0	-5.0

\*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների


Դիտարկելով ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցություններն ընդհանուր ծախսերում վերջին 5 տարիների՝ 2011-2015թթ. համար (գծապատկեր 4), տեսնում ենք, որ եթե 2011-2013թթ. ժամանակահատվածում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում 28.9%-ից նվազել է՝ հասնելով մինչև 22.4%-ի, ապա 2014-ին այն դրսևորել է որոշակի աճի միտում՝ բարձրանալով մինչև 24.0%-ի, իսկ 2015-ին այն կտրուկ նվազել է՝ իջնելով մինչև 12.9%-ի:

Ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցությունների պատկերն այլ է Երևան քաղաքի 2011-2015թթ. բյուջեներում: Այդ բյուջեների ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 32.8%, 28.0%, 26.8%, 29.0% և 10.9% (աղյուսակ 21, գծապատկեր 5): Երևանի 2011-2014թթ. բյուջեների այդ ցուցանիշները զգալիորեն ավելի բարձր են ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշներից, իսկ 2015-ին՝ ընդհակառակը, այն ավելի ցածր է կազմել (10.9%), քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշը (12.9%):

**Գծապատկեր 4. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2011-2015թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %**



**Գծապատկեր 5. Երևանի քաղաքի 2011-2015թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %**



ՏԻՄ-երի գործունեության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, կարևոր ֆինանսական ցուցանիշներից է նաև համայնքային աշխատողների աշխատանքի վարձատրության` **աշխատավարձերի և հավելավճարների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում**: 2015-ին ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 17.7% (աղյուսակ 21): Համեմատելով վերջին ցուցանիշը 2013-2014թթ.-ի նույն ցուցանիշների հետ (համապատասխանաբար 2013թ.՝ 19.0%, և 2014թ.՝ 17.7%)` պետք է արձանագրել 2015-ին դրա կայունացման միտումը:

Երևան քաղաքի 2015թ. բյուջեում այդ ցուցանիշը կազմել է 7.3% (աղյուսակ 21), որը 2013-2014թթ.-ի համեմատ (համապատասխանաբար 7.6% և 7.2%) նորից դրսևորել է կայունացման որոշակի միտում:

2015-ին ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 33.1% (աղյուսակ 21): Համեմատելով վերջին ցուցանիշը 2013-2014թթ.-ի նույն ցուցանիշների հետ (համապատասխանաբար 36.2% և 33.7%)` պետք է նորից արձանագրել 2015-ին դրա նվազման դրական միտումը:

Պետք է նաև նկատել, որ ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) համար հաշվարկված վերջին ցուցանիշն էականորեն բարձր է Երևան քաղաքի համար հաշվարկված նույն ցուցանիշից: Դա պայմանավորված է հիմնականում երկու հանգամանքներով՝ համայնքների (առանց Երևանի) աշխատակազմերի ու ենթակա կազմակերպությունների ուռճացված լինելու վիճակով և համայնքների բյուջեների եկամուտների ընդհանուր անբավարարությամբ: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ օպտիմալացնելու համայնքային աշխատողների թվաքանակը և դրա հաշվին նաև բարձրացնելու նրանց աշխատավարձերի չափերը:

Եվ ընդհանրապես, անհրաժեշտ է հետևողական աշխատանքներ տանել՝ ընդլայնելու համայնքների բյուջեների եկամուտների աղբյուրները և բարձրացնելու սեփական եկամուտների հավաքագրման մակարդակներն ու բյուջետային ծախսերի կատարման արդյունավետությունը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ<sup>1</sup> գլխում սահմանված վարչական հսկողության դրույթների, ՏԻՄ-երի լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող մարմինները մարզպետներն են, իսկ Երևան քաղաքի ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը:

Համայնքային աշխատողների աշխատավարձերի գծով ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, բացի մարզպետներից, վարչական հսկողություն կարող են իրականացնել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի պետական տեսչությունը՝ իր լիազորությունների սահմաններում, ինչպես նաև ՀՀ Հաշվեքննիչ պալատը՝ համայնքներում պարբերական ստուգումներ անցկացնելու ընթացքում: Մասնավորապես, ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պետական վերահսկողություն ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ: Համաձայն «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի, համայնքների աշխատակազմերը և համայնքային այլ կազմակերպությունները, որպես գործատուներ, պարտավոր են ՀՀ աշխատանքի պետական տեսչություն ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ իրենց աշխատողների թվի, աշխատավարձի (ըստ մասնագիտությունների), աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների մասին:



## **6. Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համապատասխանությունը, միջազգային աջակցությունը**

### **6.1 ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները**

**Համայնքների** զարգացման հիմնական պայմաններից մեկը արհեստավարժության հենքի վրա ՏԻՄ-երի կարողությունների զարգացման նախադրյալներն են: 2004թ. դեկտեմբերի 14-ին «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը հիմք դրեց ոչ միայն ՏԻՄ-երի մասնագիտական ու կառավարչական հմտություններով օժտված կայուն աշխատակազմերի ձևավորման, այլև՝ ընդհանրապես հանրային ծառայության ոլորտում կառուցակարգերի ու մեթոդների միասնականացման:

ՀՀ-ում իրականացվող տեղական ինքնակառավարման վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների մեծ մասի մասնագիտական կարողությունները բավարար չեն հանրային ծառայությունները ողջ ծավալով և բավարար որակով մատուցելու համար, իսկ բյուջետային միջոցներն այնքան սուղ են, որ հիմնականում բավարարում են միայն համայնքի աշխատակազմը պահպանելու համար, և միջոցների այսպիսի սղությունը հանգեցնում է մի շարք խորքային խնդիրների: Այդ ամենով պայմանավորված՝ ՏԻՄ-երը լիարժեքորեն չեն կատարում իրենց կարևոր դերը հանրային կառավարման համակարգում: Համայնքների կառավարման վարչական կառուցվածքների բարեփոխման և որակյալ մարդկային ռեսուրսներով ապահովման խնդիրները համապատասխան լուծում են պահանջում՝ հիմնված համակարգային ու համալիր մոտեցումների վրա:

### ***Համայնքի աշխատակազմի կառուցվածքը***

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում համայնքի ղեկավարն իր լիազորությունները իրականացնում է համայնքի աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով: Ընդ որում, համայնքի ղեկավարը նաև համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները՝ համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինե-

լու դեպքում, ինչպես նաև աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Դրանց հաստատումից հետո համայնքի ղեկավարը նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում, սակայն արդեն ինքնուրույնաբար և սեփական պատասխանատվությամբ:

Աշխատակազմն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը: Այն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը: Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Աշխատակազմի (բացառությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի) կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ<sup>42</sup>:

Համայնքների աշխատակազմերի կառուցվածքների տեսանկյունից 2015թ.-ը նշանավորվեց Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի այն հոդվածների վավերացումով, որոնք անմիջապես առնչվում են կառուցվածքային հիմնախնդիրներին և համապատասխան ռեսուրսներով ապահովվածությանը: Խարտիայի 6-րդ հոդվածը վերաբերում է ՏԻՄ-երի խնդիրների համար համապատասխան վարչական կառուցվածքների և ռեսուրսների առկայությանը: Մասնավորապես, նշվում է, որ, չհախտելով առավել ընդհանուր օրենսդրական դրույթները, ՏԻՄ-երը պետք է կարողանան որոշել իրենց համայնքային վարչական կառուցվածքները՝ դրանք տեղական պահանջներին հարմարեցնելու և արդյունավետ կառավարում երաշխավորելու համար: Բացի այդ, ՏԻՄ-երի ծառայողների աշխատանքային պայմանները պետք է հնարավորություն տան՝ հավաքագրելու փորձի և բանիմացության սկզբունքների վրա հիմնված բարձր որակավորում ունեցող կադրերի: Այդ նպատակով պետք է ապահովվեն համապատասխան ուսուցման հնարավորություններ, վարձատրություն և ծառայողական առաջխաղացում<sup>43</sup>: Իսկ 7-րդ հոդվածի (Լիազորությունների իրականացման պայմանները տեղական մակարդակում) վավերացված 2-րդ կետն անմիջապես առնչվում է ՏԻՄ-երի կարողությունների ապահովմանը, որով մասնավորապես սահմանվում է, որ տեղական մարմիններում ընտրված անձանց կարգավիճակը պետք է թույլ տա՝ ստանալու իրենց լիազորությունների իրականացման ժամանակ արվող ծախսերին համապատասխան դրամական փոխհատուցում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փոխհատուցում՝ չստացված վաստակի դիմաց կամ վճարում՝ կատարված աշխատանքի դիմաց, և համապատասխան սոցիալական պաշտպանություն<sup>44</sup>:

<sup>42</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 21 (196), Երևան, 2002, հոդված 30:

<sup>43</sup> Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, Ստրասբուրգ, 1985, հոդված 6:

<sup>44</sup> Նույն տեղում, հոդված 7:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի վերոնշյալ հոդվածների վավերացման փաստացի ազդեցությունը համայնքների աշխատակազմերի կառուցվածքների, ինչպես նաև ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի կարողությունների վրա պարզ կդառնա միայն համակարգի գործունեության առաջիկա տարիների ընթացքում:

Համայնքների աշխատակազմերում թերևս ամենաեական կառուցվածքային փոփոխությունները հաշվետու տարում կապված են համայնքների խոշորացման և դրա արդյունքում բազմաբնակավայր համայնքներում վարչական ներկայացուցչի ինստիտուտի ներդրման հետ: Ներդրվեցին «Բնակավայրի վարչական ներկայացուցչի» և «Վարչական ներկայացուցչի նստավայրի» ինստիտուտները:

Համայնքների խոշորացումով պայմանավորված աշխատակազմերի կառուցվածքային փոփոխությունների իրավական կարգավորումից բացի այլ կառուցվածքային փոփոխություններ 2015թ.-ի ընթացքում չեն եղել:

Էական փոփոխության չեն ենթարկվել նաև համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ ցուցանիշները: Ինչպես հայտնի է, ՀՀ օրենսդրությամբ համայնքի ղեկավարների համար կրթական ցենզ սահմանված չէ, սակայն համայնքների ղեկավարների զգալի մասն ունի բարձրագույն կրթություն: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքների ղեկավարներից 551-ն ունի բարձրագույն կրթություն, 7-ը՝ թերի բարձրագույն, 263-ը՝ միջնակարգ մասնագիտական, 92-ը՝ միջնակարգ և միայն 1-ը՝ 8-ամյա կրթություն (աղյուսակ 22):

**Աղյուսակ 22. Համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ ցուցանիշները՝ ըստ մարզերի, 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ<sup>45</sup>**

Հ/Հ	Մարզի անվանումը	Համայնքների թիվը		Կրթությունը				
		քաղ.	գյուղ.	բարձր.	թ/բարձր.	մ/մասն.	միջնակարգ	8 -ամյա
1.	Արագածոտն	3	111	69	-	33	12	-
2.	Արարատ	4	93	72	-	21	4	-
3.	Արմավիր	3	94	59	2	23	13	-
4.	Գեղարքունիք	5	87	60	2	22	8	-
5.	Կոտայք	7	60	44	-	21	2	-
6.	Լոռի	8	105	64	2	39	8	-
7.	Շիրակ	3	116	66	-	32	20	1
8.	Սյունիք	7	102	49	-	38	22	-
9.	Վայոց ձոր	3	41	22	-	19	3	-
10.	Տավուշ	5	57	46	1	15	-	-
	<b>Ընդամենը</b>	<b>48</b>	<b>866</b>	<b>551</b>	<b>7</b>	<b>263</b>	<b>92</b>	<b>1</b>

<sup>45</sup> ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության ամփոփ տեղեկանք՝ համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2015 թվականին 1000-ից պակաս բնակչություն ունեցող գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրում բարձրագույն կրթության և աշխատանքային ստաժի կամ փորձի չափանիշները չընդգրկելու վերաբերյալ համաձայնություն չի տրվել՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետը սպառվելու պատճառով (2015թ.-ի հունվարի 1): Բնչպես երևում է աղյուսակից, նախորդ ժամանակահատվածում՝ 2009-2014թթ., մինչև 1000 բնակիչ ունեցող 441 համայնքից նման համաձայնություն տրվել է 285-ին (աղյուսակ 23):

**Աղյուսակ 23 . 2009-2014թթ. 1000-ից պակաս բնակչություն ունեցող գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրում բարձրագույն կրթության և (կամ) աշխատանքային ստաժի և փորձի չափանիշները չընդգրկելու վերաբերյալ համաձայնություն ստացած համայնքների թվերն ըստ մարզերի<sup>46</sup>**

<i>N</i>	<i>Մարզերի անվանումները</i>	<i>ՀՀ մարզերում մինչև 1000 բնակչություն ունեցող համայնքների թիվը</i>	<i>Համաձայնություն ստացած համայնքների թիվը</i>
1	Արագածոտն	74	58
2	Արարատ	18	9
3	Արմավիր	11	6
4	Գեղարքունիք	44	19
5	Լոռի	65	46
6	Կոտայք	20	20
7	Շիրակ	68	51
8	Սյունիք	89	56
9	Վայոց ձոր	25	7
10	Տավուշ	27	13
	<b>Ընդամենը</b>	<b>441</b>	<b>285</b>

### **ՏԲՄ-երի և աշխատակազմերի գենդերային բաժանումը**

Տեղական ինքնակառավարման համակարգի ընտրովի մարմիններում գենդերային անհամամասնության և կանանց ցածր տեսակարար կշռի միտումները շարունակվել են պահպանվել 2015թ.-ին: Մասնավորապես՝ 48 քաղաքային համայնքներից որևէ մեկում կին համայնքի ղեկավար չի եղել: Նշանակվել է

<sup>46</sup> ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության համայնքային ծառայության հարցերի վարչության 2015թ.-ի հաշվետվություն:

միայն 1 կին քաղաքապետի տեղակալ: Քաղաքային համայնքների ավագանու անդամները ևս գերակշռաբար կազմված են եղել տղամարդկանցից, իսկ կանանց տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 7.8%: Փոխարենը՝ գենդերային առումով բավական համամասնորեն է բաշխված քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը՝ 21 կին և 26 տղամարդ: Նույնը վերաբերում է նաև քաղաքապատարանների աշխատակիցների ներկայացվածությանը, որտեղ կանանց տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ 45% է: Այս առումով ևս ընդհանուր առմամբ պահպանվել են նախորդ տարիների միտումները (աղյուսակ 24):

**Աղյուսակ 24. Քաղաքային համայնքներում ՏԻՄ-երի և աշխատակազմերի գենդերային բաշխվածությունը՝ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ<sup>47</sup>**

Սարգի անվանումը	Քաղաքային համայքի ղեկավար		Քաղաքային համայքի ղեկավարի տեղակալ		Քաղաքային համայքի ավագանու անդամ		Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար		Քաղաքապետարանի աշխատակիցներ	
	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ
Արագածոտն	-	3	-	4	2	33	-	3	38	51
Արարատ	-	4	-	7	2	54	-	4	95	89
Արմավիր	-	3	-	5	-	41	1	2	76	104
Գեղարքունիք	-	5	-	5	3	64	3	2	63	119
Լոռի	-	8	-	5	4	89	4	3	162	158
Կոտայք	-	7	1	7	3	86	3	4	148	179
Շիրակ	-	3	-	3	1	46	1	2	264	384
Սյունիք	-	7	-	6	8	71	4	3	113	121
Վայոց ձոր	-	3	-	3	3	30	2	1	31	25
Տավուշ	-	5	-	5	4	42	3	2	54	40
<b>Ընդամենը</b>	-	<b>48</b>	<b>1</b>	<b>50</b>	<b>30</b>	<b>556</b>	<b>21</b>	<b>26</b>	<b>1044</b>	<b>1270</b>

Ի տարբերություն քաղաքային համայնքների՝ գյուղական համայնքներում 18 համայնքի կին ղեկավար է գործել, սակայն ընդհանուրի մեջ դա չնչին տեսակարար կշիռ է կազմել ընդամենը 2%: Գյուղական համայնքներում համեմատաբար շատ են ղեկավարի կին տեղակալները՝ 42, ովքեր ընդհանուրի մեջ ընդամենը 8.2% են կազմում, սակայն ինչպես արդեն նշվեց, քաղաքային համայնքներում գենդերային անհամամասնությունն առավել ցայտուն է: Նույնը վերաբերում է ավագանու անդամների գենդերային բաշխվածությանը գյուղական համայնքներում. Կանանց տեսակարար կշիռն այստեղ շուրջ 10% է, ինչը, քիչ լինելով հանդերձ, շահեկանորեն տարբերվում է քաղաքային համայնքների համանման ցուցանիշից (7.8%): Գյուղական համայնքների

<sup>47</sup> Հայաստանի կանայք և տղամարդիկ, ՀՀ ԱՎԾ, Վիճակագրական գրքույկ, 2015թ., էջ 157:

պարագայում ևս գենդերային համամասնությունը պահպանված է միայն աշխատակազմերի քարտուղարների և աշխատակազմերի աշխատակիցների կազմում: Մասնավորապես՝ աշխատակազմի կին քարտուղարները կազմում են ընդհանուրի 48%-ը, իսկ աշխատակիցների ընդհանուր թվում կանայք 49%-ն են: Սակայն պետք է նշել, որ վերջին ցուցանիշը նախորդ տարիների համեմատ պակասել է, քանի որ մինչև 2015թ. գյուղապետարանների աշխատակազմերում կին աշխատակիցների թիվը նույնիսկ գերակշռում էր տղամարդկանց թվի նկատմամբ (աղյուսակ 25):

**Աղյուսակ 25. Գյուղական համայնքներում ՏԻՄ-երի և աշխատակազմերի գենդերային բաշխվածությունը՝ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ<sup>48</sup>**

Մարզի անվանումը	Գյուղական համայնքի ղեկավար		Գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ		Գյուղական համայնքի ավագանու անդամներ		Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար		Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցներ	
	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ
Արագածոտն	-	111	6	31	32	583	42	66	400	536
Արարատ	1	92	-	66	42	596	55	28	426	401
Արմավիր	2	92	2	85	61	650	32	53	301	358
Գեղարքունիք	3	84	1	65	42	503	23	62	197	550
Լոռի	5	100	15	52	80	494	58	33	335	237
Կոտայք	1	59	2	42	38	374	31	27	311	386
Շիրակ	2	114	3	44	67	556	49	51	351	212
Սյունիք	4	98	11	39	108	411	51	38	316	182
Վայոց ձոր	-	41	2	9	13	209	16	24	153	144
Տավուշ	-	57	-	38	32	315	30	21	129	81
<b>Ընդամենը</b>	<b>18</b>	<b>848</b>	<b>42</b>	<b>471</b>	<b>515</b>	<b>4691</b>	<b>387</b>	<b>403</b>	<b>2919</b>	<b>3087</b>

Ինչպես կարելի է նկատել աղյուսակ 26-ից, Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում գենդերային բաժանման տեսանկյունից էական փոփոխություններ տեղի չեն ունեցել 2015թ.-ին, բացառությամբ աշխատակազմի աշխատակիցների կազմում գրանցված որոշակի գենդերային տեղաշարժերի. եթե 2014թ. քաղաքապետարանի աշխատակիցների ընդհանուր թվում կանանց տեսակարար կշիռը 52.9% է եղել, ապա 2015թ. նույն ցուցանիշը աճել է՝ կազմելով 54.3%:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 158:

**Աղյուսակ 26. Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում ՏԻՄ-երի և աշխատակազմերի գենդերային բաշխվածությունը 2014 և 2015թթ. հունվարի 1-ի դրությամբ<sup>49</sup>**

Պաշտոն	2014թ.		2015թ.	
	Կ	Տ	Կ	Տ
Քաղաքապետ	-	1	-	1
Քաղաքապետի տեղակալներ	-	4	-	4
Ավագանու անդամներ	10	55	10	55
Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար (այդ թվում՝ վարչական շրջանների աշխատակազմերի քարտուղարներ)	-	13	1	12
Քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ	1003	893	1039	876
Վարչական շրջանների ղեկավարներ	-	12	-	12
Վարչական շրջանների ղեկավարի տեղակալներ	-	20	-	19
<b>Ընդամենը</b>	<b>1013</b>	<b>998</b>	<b>1050</b>	<b>979</b>


***Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգերի զարգացումը***

2015 թվականի ընթացքում շարունակվել է կառավարման տեղեկատվական համակարգի գործարկումը համայնքներում (գծապատկեր 6): Ընդհանուր առմամբ տեղեկատվական համակարգը շահագործվում է 598 համայնքում, որից 98-ում այն ներդրվել է 2015 թվականին: 93 համայնքապետարան տարվա ընթացքում ապահովվել է նաև համակարգչային ցանցով, ինչի արդյունքում ցանցով ապահովված համայնքապետարանների ընդհանուր թիվը հասել է 420-ի: Բացի այդ, 480 համայնքների ՀԿՏՀ-ներ հասանելի են դարձել համացանցում: Որպես պաշտոնական կայք պատշաճ ձևով վարվում է մոտ 270-ը, իսկ դրանցից 23-ը գործարկվել է 2015թ. ընթացքում<sup>50</sup>:

<sup>49</sup>Նույն տեղում, էջ 159:

<sup>50</sup> «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ

**Գծապատկեր 6. ՀԿՏՀ ունեցող համայնքների թիվը՝ ըստ մարզերի<sup>51</sup>**



Տարվա ընթացքում 81 համայնքներում աշխատանքներ են տարվել արտաքին էլեկտրոնային փաստաթղթաշարժի ներդրման ուղղությամբ, որոնց արդյունքում ընդհանուր առմամբ 360 համայնքապետարաններում շահագործվող ՀԿՏՀ-ներն իրենց փաստաթղթաշարժի բաղադրիչի միջոցով հնարավորություն ունեն էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակելու պետական կառավարման մարմիններում շահագործվող փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի հետ:

Կարևորելով համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի առկայությունը՝ տարվա ընթացքում ՀՀ մարզպետարանների միջոցով հավաքագրվել են համայնքների վերաբերյալ շուրջ 600 վիճակագրական տվյալներ: Իրականացվել են աշխատանքներ համայնքների վիճակագրական տվյալները հրապարակային դարձնելու ուղղությամբ:

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության գլոբալ համաժողովի շրջանակում 2015 թվականի հոկտեմբերի 27-29-ը Մեքսիկայի Միացյալ Նահանգների Մեխիկո քաղաքում ամփոփվել են մարտ ամսին մեկնարկած 2-րդ ամենամյա ԲԿԳ միջազգային մրցանակաբաշխության արդյունքները: 2015թ-ի. թեման էր՝ «Հանրային ծառայությունների բարելավումը բաց կառավարման սկզբունքների գործածմամբ»: Մրցանակաբաշխությանը մասնակցելու հայտ էր ներկայացրել ԲԿԳ նախաձեռնության անդամ 66 երկրից ավելի քան 35-ը: Հայտերը գնահատել է 23 անդամից բաղկացած անկախ միջազգային ժյուրին: Հայաստանն առաջին անգամ էր մասնակցում մրցանակաբաշ-

<sup>51</sup> Նույն տեղում



խությանը և արժանացավ բարձր մրցանակի՝ գրադեցնելով տարածաշրջանում (Ասիա-Խաղաղօվկիանոսյան) առաջին տեղը: Մրցանակաբաշխությանը Հայաստանը ներկայացրել էր «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում ՀՀ համայնքապետարաններում» նախաձեռնությունը: Մրցույթում ներկայացվել է «Խելացի համայնք» (Smart Municipality) անվանմամբ<sup>52</sup>: Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացումը և բաց կառավարման միջոցով համայնքների բնակիչներին մատուցվող հանրային ծառայությունների բարելավումը:

## 6.2 Համայնքային ծառայություն

### *ՀՀ համայնքային ծառայության օրենսդրական հիմքերը*

Համայնքային ծառայությունը հանրային ծառայության ինքնուրույն տեսակ է: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը համայնքային ծառայությունը սահմանում է որպես մասնագիտական գործունեություն, որն ուղղված է ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը<sup>53</sup>: «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրվում են համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորվում համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման, համայնքային ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, համայնքային ծառայության կադրային պահուստի, համայնքային ծառայողների իրավական վիճակի, համայնքային ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց առջվող մյուս հարաբերությունները:

Համայնքային ծառայության ինստիտուտի զարգացումը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման կարևորագույն ուղղություններից մեկն է: Պետք է փաստել, որ համայնքային ծառայության մասին օրենքի ընդունումից ի վեր բավականաչափ աշխատանք է կատարվել համայնքային ծառայության ինստիտուտի կայացման և արմատավորման ուղղությամբ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ընդհանուր օրենսդրանորմատիվային դաշտի ստեղծմանը, համայնքային ծառայության կազմակերպման և կադրերի կառավարման ընթացակարգերին, համայնքային ծառայության հիմնական սկզբունքներին, համայնքային ծառայողի իրավական

<sup>52</sup> Նույն տեղում:

<sup>53</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը «Հանրային ծառայության մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 37 (840), Երևան, 2011, հոդված 3:

կարգավիճակին, էլեկտրոնային կառավարման համակարգի (ՀԿՏՀ) ներդրմանն ու կատարելագործմանը և այլն: Մակայն, այս ամենով հանդերձ, դեռևս շատ խնդիրներ կան, որոնք պետք է ժամանակի ընթացքում լուծում ստանան: Այդ խնդիրների շարքին կարելի է դասել համայնքային ծառայության արդյունավետության ցածր մակարդակը, համայնքային ծառայողների ընտրության, ատեստավորման, վերապատրաստման և մասնագիտական առաջխաղացման կառուցակարգերի անկատարությունը, խրախուսման համակարգերի անարդյունավետությունը և այլն: Առանց վերոնշյալ խնդիրների լուծման անհնար կդառնա համակարգի հետագա զարգացումը և կատարելագործումը: Համայնքային ծառայության համակարգի մշտական կատարելագործման անհրաժեշտությունը պայմանավորված է տեղական ինքնակառավարման համակարգում ընթացող բարեփոխումներով, ինչպես նաև քաղաքացիական հասարակության բաղադրիչների զարգացմամբ:

Այդուհանդերձ, ինչպես ընդհանրապես հանրային ծառայության ոլորտում, այնպես էլ համայնքային ծառայության համակարգում բարձր որակավորում ունեցող կադրերի պակաս է զգացվում: Մասամբ այս խնդրի լուծմանն է ուղղված կադրերի պահուստի և ծառայողների վերապատրաստման ինստիտուտների ներդրումը: Մակայն կադրերի պահուստը, որն ամենից առաջ կոչված է ժամանակավոր թափուր պաշտոնների համալրման խնդրի լուծման համար, այս համակարգում դեռևս իր գործառույթն ամբողջությամբ չի կարողանում կատարել: 2015թ.-ին կադրերի պահուստում գրանցվել է ընդամենը 4 անձ<sup>54</sup>: Այս իրողությունն ունի հետևյալ բացատրությունը. համայնքային ծառայության համակարգում գործող կադրերի պահուստը դեռևս ամբողջությամբ չի լուծում ժամանակավոր թափուր պաշտոնները համալրելու խնդիրը, քանի որ հաստիքների կրճատման հիմքով ազատված համայնքային ծառայողները հիմնականում արտամրցութային կարգով զբաղեցնում են այլ պաշտոններ, իսկ մրցույթներում հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձանցից քչերն են ցանկանում գրանցվել կադրերի պահուստում:

Հայաստանի համայնքները միմյանցից տարբերվում են բնակչության թվի, կենսամակարդակի, սահմանամերձ կամ հեռավոր, բարձր լեռնային գոտում գտնվելու առումներով: Այս և այլ տարաբնույթ առանձնահատկությունների պատճառով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների լիարժեք և ամբողջական իրականացումն սկնհայտորեն պահանջում է առանձնակի մոտեցումներ՝ իրարից էականորեն տարբերվող համայնքներում համայնքային ծառայության համակարգը կայացնելու համար: 2015թ. ընթացքում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 2015 թվականի նոյեմբերի 24-ին և

<sup>54</sup> ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2015թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

ղեկտեմբերի 7-ին ընդունված ՀՀ օրենքներով:

Մասնավորապես՝ դրանցից առաջինով ընդհանրացվել են «քաղաքապետարան» և «գյուղապետարան» բառերը մեկ միասնական «համայնքապետարաններ» բառով (ի դեպ, նույն տրամաբանությամբ փոփոխություններ են կատարվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածներում): Բացի այդ, օրենքում ավելացվել է 29.1-րդ հոդվածը՝ համայնքների միավորման կամ բաժանման արդյունքում ձևավորված նոր համայնքի աշխատակազմի պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններն զբաղեցնելու մասին, որով սահմանվել է, որ համայնքների միավորման կամ բաժանման արդյունքում ձևավորված նոր համայնքի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններն զբաղեցվում են նույն օրենքով («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք) սահմանված ընդհանուր հիմունքներով<sup>55</sup>:

Վերոնշյալ օրենքներից երկրորդով համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի հետ կապված պահանջների համապատասխանեցումը 2015թ. փոխարեն երկարաձգվել է մինչև 2018թ. հունվարի 1-ը: Մասնավորապես, մինչև 2018թ. հունվարի 1-ը համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի անձնագիրը պետք է ընդգրկի համայնքային ծառայության, պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, իսկ առաջատար պաշտոնների անձնագրերը՝ առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ: Մինևույն ժամանակ այն դրույթը, որ 1000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը կարող է չընդգրկել բարձրագույն կրթության, աշխատանքային ստաժի և փորձի չափանիշները (պետական կառավարման լիազոր մարմնի համաձայնությամբ), ևս երկարաձգվել է մինչև 2018 թվականի հունվարի 1-ը<sup>56</sup>: Այս փոփոխությունները հիմնականում թելադրվել են առկա իրավիճակով, պահանջների համապատասխանող մարդկային ռեսուրսների պակասով և հետևաբար նախորդ ձևակերպմամբ օրենքի պահանջը կատարելու անհնարինությամբ:

Այնուհետև նույն օրենքով հստակեցվել է նաև 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների աշխատակազմերի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի մրցութային և աստեստավորման հանձնաժողովների անդամների թիվը՝ 6 անդամ: Իսկ 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների աշխատակազմերի մրցութային և աստեստավորման հանձնաժողովները, օրենք-

<sup>55</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը «Համայնքային ծառայության մասին՝ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 91 (1180), Երևան, 2015, հոդված 1-2:

<sup>56</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը «Համայնքային ծառայության մասին՝ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 87 (1176), Երևան, 2015, հոդված 1-2:

քում կատարված փոփոխության համաձայն, պետք է ընդգրկեն մարզպետարանից և համապատասխան համայնքի աշխատակազմից երկուական ներկայացուցիչ, համայնքի ավագանու մեկ անդամ, ինչպես նաև գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող մեկ ներկայացուցիչ<sup>57</sup>:

Տարվա ընթացքում ևս մեկ փոփոխություն կատարվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում, ինչը թելադրված էր համայնքների խոշորացմամբ և դրա արդյունքում բազմաբնակավայր համայնքներում վարչական ներկայացուցչի ինստիտուտի ներդրման հետ: Մասնավորապես, բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի պաշտոնը ընդգրկվել է ՀՀ պետական և համայնքային պաշտոնների շարքում որպես հայեցողական պաշտոն<sup>58</sup>:

2015թ.-ին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունն փորձել է ապահովել համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների իրականացումը: Համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական գրանցամատյանի համաձայն 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6623-ն են, որոնցից զբաղեցված են 6076-ը, կամ շուրջ 92%-ը (աղյուսակ 27):

**Աղյուսակ 27. Համայնքային ծառայության պաշտոնների թիվը 2015 թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ<sup>59</sup>**

Հ/Հ	Անվանումը	Գլխավոր		Առաջատար		Կրտսեր		Ընդամենը	
		Հաստատված	Զբաղեցված	Հաստատված	Զբաղեցված	Հաստատված	Զբաղեցված	Հաստատված	Զբաղեցված
1	Երևան	93	88	636	598	895	867	1624	1553
2	Արագածոտն	118	113	44	41	304	282	466	436
3	Արարատ	103	92	126	111	328	308	557	511
4	Արմավիր	99	89	77	69	453	401	629	559
5	Գեղարքունիք	97	92	116	100	336	295	549	487
6	Լոռի	119	98	134	125	420	391	673	614
7	Կոտայք	71	68	138	127	376	350	585	545
8	Շիրակ	127	103	188	169	297	272	612	544
9	Սյունիք	114	95	73	63	198	176	385	334
10	Վայոց ձոր	48	47	51	48	85	77	184	172
11	Տավուշ	66	61	70	60	223	200	359	321
	<b>Ընդամենը</b>	<b>1055</b>	<b>946</b>	<b>1651</b>	<b>1511</b>	<b>3915</b>	<b>3619</b>	<b>6623</b>	<b>6076</b>

<sup>57</sup> Նույն տեղում, հոդված 2:

<sup>58</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը «Հանրային ծառայության մասին՝ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 91 (1180), Երևան, 2015, հոդված 1:

<sup>59</sup> ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության համայնքային ծառայության հարցերի վարչության 2015թ.-ի հաշվետվություն:

Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանցից կանայք կազմում են 53.6%-ը, տղամարդիկ՝ 46.4%-ը: Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 948 մրցույթ, որոնցից կայացել է 474-ը կամ շուրջ 50%-ը: Հրապարակայնությունն ապահովելու նպատակով մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում, ինչպես նաև դրանք տրամադրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ջրաղվաժուրության պետական գործակալությանը: Որպեսզի համայնքների աշխատակազմերը մշտապես հնարավորություն ունենան բարձրացնելու իրենց աշխատանքային կարողությունները, երեք տարին մեկ անգամ համայնքային ծառայողների համար անցկացվում է ատեստավորում: 2015թ. ընթացքում ատեստավորվել են 1563 համայնքային ծառայողներ (աղյուսակ 28): Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների կողմից կադրերի ռեզերվ հարցում է կատարվել 631 ժամանակավոր թափուր պաշտոններ ժամկետային աշխատանքային պայմանագրերով համալրելու համար: Համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ ՏԿԱԻՆ կողմից «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 35.2-րդ հոդվածի համաձայն 15.12.2015թ. դրությամբ կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն է իրականացվել թվով 80 համայնքներում<sup>60</sup>:

**Աղյուսակ 28. 2015թ.-ի ընթացքում ատեստավորված համայնքային ծառայողների և թափուր պաշտոնների զբաղեցման համար հայտարարված ու կայացած մրցույթների թիվը<sup>61</sup>**

Հ/Հ	Անվանումը	2015 թվական		
		Ատեստավորում	Մրցույթ	
			հայտարարված	կայացած
1	Արագածոտն	93	72	38
2	Արարատ	162	58	10
3	Արմավիր	57	68	51
4	Գեղարքունիք	119	48	30
5	Լոռի	109	112	27
6	Կոտայք	120	64	27
7	Շիրակ	69	138	78
8	Սյունիք	10	28	14
9	Վայոց ձոր	13	25	16
10	Տավուշ	58	37	22
	<b>Ընդամենը</b>	<b>1563</b>	<b>650</b>	<b>313</b>

<sup>60</sup> Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2015թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

<sup>61</sup> ՀՀ Տարածքային կառավարման և գաղափարային նախարարության համայնքային ծառայության հարցերի վարչության 2015թ.-ի հաշվետվություն:

11	Երևան	753	298	161
	<b>Ընդհանուր</b>	<b>2316</b>	<b>948</b>	<b>474</b>

**Համայնքային ծառայողների թվաքանակի հարաբերակցությունը համայնքի բնակչությանը**

Համայնքային ծառայողների թվի վերաբերյալ առավել շոշափելի պատկերացում կազմելու համար դրա բացարձակ մեծությունից զատ անհրաժեշտ է պարզել նաև հարաբերական մեծությունը կախված բնակչության թվաքանակից: Այս առումով դիտարկենք համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության թվի կազմում՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի (աղյուսակ 29): Ինչպես կարելի է նկատել աղյուսակից, այդ ցուցանիշով բացարձակ առաջատարները Արագածոտնի և Վայոց ձորի մարզերն են՝ 0.34% ըստ փաստացի զբաղեցված համայնքային ծառայողների թվի: Ընդ որում, այս մարզերի համար ստացված համայնքային ծառայողների թվի հարաբերական մեծությունը գերազանցում է Երևան քաղաքի համանման ցուցանիշը (0.14) շուրջ 2.5 անգամ: Այս հանգամանքը կարող է հուշել համապատասխան մարզերում քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերի անհարկի ուռճացման և ավելորդ հաստիքների առկայության մասին:

**Աղյուսակ 29. ՀՀ համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության թվի կազմում ըստ Երևան քաղաքի և մարզերի 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հ/Հ	Անվանումը	Համայնքային ծառայության հաստատված պաշտոնների թիվը (ՀՊԹ)	Փաստացի զբաղեցված համայնքային ծառայողների թիվը (ՊԾԹ)	Բնակչության թիվը, հազար մարդ <sup>62</sup> (ԲԹ)	ՀՊԹ/ԲԹ, %	ՊԾԹ/ԲԹ, %
1	Երևան	1624	1553	1073.7	0.15	0.14
2	Արագածոտն	466	436	129.8	0.36	0.34
3	Արարատ	557	511	258.9	0.22	0.20
4	Արմավիր	629	559	266.6	0.24	0.21
5	Գեղարքունիք	549	487	231.8	0.24	0.21
6	Լոռի	673	614	225.0	0.30	0.27
7	Կոտայք	585	545	253.9	0.23	0.21
8	Շիրակ	612	544	243.2	0.25	0.22
9	Սյունիք	385	334	139.4	0.28	0.24
10	Վայոց ձոր	184	172	50.8	0.36	0.34
11	Տավուշ	359	321	125.5	0.29	0.26
	<b>Ընդամենը</b>	<b>6623</b>	<b>6076</b>	<b>2998.6</b>	<b>0.22</b>	<b>0.20</b>

<sup>62</sup> ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ, 2016թ., էջ 7:

### 6.3 Համայնքային ծառայողների վերապատրաստումը

#### *Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի գնահատումը*

ՀՀ ներկայիս օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման: Վերապատրաստումն անցկացվում է նաև համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով համայնքային ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ համայնքային ծառայողի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը և ծրագրերը հաստատում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Համայնքային ծառայողների վերապատրաստումներն իրականացվում են մրցութային կարգով ընտրված կազմակերպությունների միջոցով: 2015թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստումն իրականացրել է Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտը, համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստումը՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիան, իսկ մարզերի համայնքների համայնքային ծառայողներինը՝ Հայաստանի համայնքների միությունը:

Համայնքային ծառայության համակարգում 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքային ծառայողների թիվը 6076 է եղել, որից տարվա ընթացքում վերապատրաստվել է 1268-ը՝ 833-ը՝ պետական բյուջեի, 435-ը՝ համայնքային բյուջեների հաշվին (աղյուսակ 30): Վերլուծությունները ցույց են տալիս, որ համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգում բավարար ուշադրություն չի դարձվում գործնական հարցերի, տարբեր հավանական իրավիճակների հետազոտմանը և քննարկմանը: Այսպես՝ գնումների բնագավառում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրի ընդհանուր ժամաքանակի (24 ժամ) մեծ մասը բաժին է ընկնում գնումների մասին օրենսդրության քննարկմանը (16 ժամ), գործնական հարցերի քննարկմանը հատկացված է ընդամենը 6 ժամ, իսկ 2 ժամ հատկացված է էլեկտրոնային գնումների համակարգի նկարագրությանը<sup>63</sup>:

<sup>63</sup> ՀՀ Տարածքային կառավարման նախարարի N 169-Ս հրամանը Համայնքային գնումների կազմակերպման և իրականացման բնագավառում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին, 2013թ.:

**Աղյուսակ 30. Վերապատրաստված համայնքային ծառայողների թիվը<sup>64</sup>**

Հ/Հ	Անվանումը	2007-2009թթ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
1	Արագածոտն	269	36	78	260	51	155	160
2	Արարատ	436	129	249	81	100	252	81
3	Արմավիր	539	115	241	98	164	256	89
4	Գեղարքունիք	522	163	207	82	162	240	67
5	Լոռի	521	102	287	153	113	282	118
6	Կոտայք	393	79	260	75	121	222	98
7	Շիրակ	368	120	134	117	124	218	60
8	Սյունիք	211	31	39	215	41	137	98
9	Վայոց ձոր	115	25	83	40	27	103	21
10	Տավուշ	254	56	98	131	64	136	71
	Ընդամենը	3628	856	1676	1252	967	2001	863
11	Երևան	944	0	0	280	423	388	405
	<b>Ընդհանուր</b>	<b>4572</b> (ամբողջությամբ պետ. բյուջեի հաշվին)	<b>856</b> (ամբողջությամբ պետ. բյուջեի հաշվին)	<b>2071</b> (որից պետ. բյուջեի հաշվին 1593-ը)	<b>1532</b> (որից պետ. բյուջեի հաշվին 1028-ը)	<b>1390</b> (որից պետ. բյուջեի հաշվին՝ 966-ը)	<b>2389</b> (որից պետ. բյուջեի հաշվին՝ 2001-ը)	<b>1268</b> (որից պետ. բյուջեի հաշվին՝ 833-ը)

Սկսած 2010թ.-ից առանձին մրցույթով վերապատրաստումներն անցկացվում են նաև ՏԻՄ-երի համար: 2015թ.-ին վերապատրաստվել են ընդհանուր առմամբ 755 համայնքների ղեկավարներ և ավագանիների անդամներ ամբողջությամբ պետական բյուջեի հաշվին (աղյուսակ 31):

<sup>64</sup> ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության համայնքային ծառայության հարցերի վարչության 2015թ.-ի հաշվետվություն:



**Աղյուսակ 31. Համայնքների ղեկավարների և ավագանիների վերապատրաստված անդամների թիվը**

Հ/Հ	Անվանումը	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
1	Արագածոտն	64	74	89	96	92	90
2	Արարատ	100	75	80	75	75	72
3	Արմավիր	73	75	77	72	75	73
4	Գեղարքունիք	48	75	78	71	72	70
5	Լոռի	39	75	98	96	93	96
6	Վոտայք	49	70	56	74	69	70
7	Շիրակ	100	75	96	92	95	100
8	Սյունիք	76	72	96	93	96	92
9	Վայոց ձոր	39	75	26	42	49	47
10	Տավուշ	35	75	44	43	47	45
	<b>Ընդամենը</b> (ամբողջությամբ պետ. բյուջեի հաշվին)	<b>623</b>	<b>741</b>	<b>740</b>	<b>754</b>	<b>763</b>	<b>755</b>

Ներկայումս ՀՀ-ում հանրային ծառայողների վերապատրաստման թերություններից է դասընթացների շրջանակներում ուսումնական նյութը գլխավորապես դասախոսությունների միջոցով մատուցելը, ինչը նշանակալիորեն սահմանափակում է գործնական հմտությունների ստացման, կայուն կարողությունների ձևավորման հնարավորությունները, բացի այդ, հաշվի չեն առնվում համայնքային ծառայողների ընկալունակության առանձնահատկությունները:

Համայնքային ծառայողների վերապատրաստման` ՀՀ ներկայիս համակարգի ուսումնասիրությամբ ակնհայտ են դառնում հետևյալ թերությունները. վերապատրաստումների հատվածակալությունը, համայնքային ծառայողի որակավորման բարձրացման իրական կարիքների հետ վերապատրաստման ծրագրերի թույլ կապը, վերապատրաստման գործընթացում դասավանդման արդի մեթոդների և եղանակների կիրառման պակասը և այլն: Հետևաբար` ընդհանուր առմամբ համայնքային ծառայության համակարգի կատարելագործման խնդիրներից մեկը պետք է լինի համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակումը և դրանց հետևողական իրագործումը: Մասնավորապես պետք է հստակորեն սահմանվեն վերապատրաստման վերջնարդյունքերը` գիտելիքը, հմտությունները և կարողությունները, որոնք ծրագրի ավարտին ձեռք են բերվելու վերապատրաստվողների կողմից:

<sup>65</sup> ՀՀ Տարածքային կառավարման և գարգացման նախարարության համայնքային ծառայության հարցերի վարչության 2015թ.-ի հաշվետվություն:

Համայնքային ծառայողների վերապատրաստման ներկայիս համակարգի թերություններից մեկն էլ այն է, որ ծրագրերը հիմնականում կազմվում են կրթական հաստատությունների կողմից և չեն համապատասխանում մասնակիցների նախապատվություններին ու կարիքներին: Պետական լիազոր մարմինը հաստատում է միայն կրթական ծրագրի թեման՝ առանց հստակեցնելու դրա բովանդակությունը, ինչի հետևանքով ծրագիրը լիովին չի համապատասխանում կատարելագործման պահանջներին: Այս առումով, համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգում անհրաժեշտ է մշակել և ներդնել կառուցակարգեր, որոնց գործարկմամբ հնարավոր կլինի կրթական ծրագրերի կազմման մեկնարկային փուլում պատշաճ տեղեկատվություն ստանալ հստակ պահանջների և կարիքների մասին: Սակայն, ծրագրերի մշակումից բացի, համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի որակի բարձրացումն էականորեն կախված է նաև արդեն իսկ մշակված ծրագրերի մատուցման արդյունավետ եղանակների ընտրությունից և կիրառումից:

## 6.4 Միջազգային աջակցությունը

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման գործում ավանդաբար էական դերակատարում ունեն Հայաստանում տարբեր առաքելություններ իրականացնող միջազգային կազմակերպություններն ու նրանց Հայաստանյան մասնաճյուղերը: Այս առումով, միջազգային կազմակերպությունների կողմից հատուկ կարևորություն է տրվում վարչատարածքային բարեփոխումների գործընթացին, ապակենտրոնացմանը, տեղական ժողովրդավարության ամրապնդմանը, համայնքների ֆինանսական կառավարման կատարելագործմանը, էլեկտրոնային կառավարման զարգացմանը և այլն:

2015թ. ընթացքում միջազգային կազմակերպությունները շարունակել են իրենց կողմից իրականացվող ծրագրերը Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգում: Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին առանձին:

«Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագիրը, որն իրականացնում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ), Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում տեղական ինքնակառավարման զարգացմանն ուղղված համագործակցային նախաձեռնությունների իրականացման գործում աջակցում և խորհրդատվություն է տրամադրում համապատասխան գործընկերներին ազգային, մարզային (ենթաազգային) և տեղական մակարդակներում: Այն աջակցում է տեղական

ինքնակառավարման շրջանակային պայմանների բարելավմանը, անդրադառնում մարզային (ենթապետական) կառավարման հարցերին և աշխատում համայնքային ծառայությունների բարելավման ուղղությամբ: Գերմանական միջազգային համագործակցության համատեքստում ծրագրի նպատակներն ուղղված են կովկասյան նախաձեռնությունների շրջանակին, ուստի՝ երկրների միջև արհեստավարժ փորձի փոխանակման և նրանց միջև համագործակցության բարելավումը Հարավային Կովկասի տարածաշրջանային մակարդակում հիմնական խնդիրներն են: Ծրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ: Ծրագրի բաղադրիչներն են՝

տարածքային բարեփոխումները, էլեկտրոնային կառավարման համակարգը, համայնքային բյուջետավարումը և տարածքային կառավարումը:

Դեկտեմբերի 16-ին Թումանյանի քաղաքապետարանում, իսկ նոյեմբերի 20-ին Շինուհայրի գյուղապետարանում տեղի ունեցան Քաղաքացիների սպասարկման գրասենյակների (ՔՍԳ) պաշտոնական բացման արարողությունները<sup>66</sup>: Գրասենյակները հիմնադրվել են վերոնշյալ ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում՝ *Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) համաֆինանսավորմամբ*: Քաղաքացիների սպասարկման գրասենյակի նպատակը «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի համաձայն ծառայությունների կենտրոնացված մատուցումն է քաղաքացիներին, ՏԻՄ-երի արդյունավետության, թափանցիկության և հասանելիության բարձրացումը, քաղաքացու և համայնքապետարանի միջև առավել մատչելի և դյուրին հաղորդակցության ապահովումը: Քաղաքացիների սպասարկման գրասենյակում ներդրվել է նաև Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ), որի խնդիրը ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացումն է: Որպես ՏԻՄ-երի համար մշակված տեղեկատվական համակարգ այն թույլ է տալիս ապահովել տեղեկատվական հոսքերի ավտոմատացված կառավարում համայնքապետարանում: Համակարգը նպաստում է քաղաքացիների նկատմամբ ՏԻՄ-երի հաշվետվողականության և թափանցիկության աստիճանի բարձրացմանը, մատուցվող ծառայությունների վրա ծախսվող ժամանակի կրճատմանը, մասնակցային տեղական ինքնակառավարման ապահովմանը: Համակարգի միջոցով հնարավոր է դարձել մատուցել առցանց ծառայություններ բնակիչներին, հետևել դրանց ընթացքին, հարցերի դեպքում առցանց դիմել համապատասխան մասնագետներին, ստանալ կարևոր տեղեկատվու-

<sup>66</sup> <http://mta.gov.am/hy/news/>

թյուն համայնքի վերաբերյալ: Ստեղծվել են առցանց հնարավորություններ՝ ապահովելու քաղաքացիների ներգրավումը համայնքային մակարդակով որոշումների կայացմանը: Վարչատարածքային բարեփոխումների շրջանակում ՀԿՏՀ-ն կապահովի խոշորացված համայնքի արդյունավետ կառավարում, բնակավայրերի ինտեգրում և փոխգործակցություն մեկ միասնական տեղեկատվական հարթակի միջոցով, վարչական ծառայությունների մատուցում բնակիչներին անմիջապես բնակավայրերում (այդ թվում՝ առցանց), ինչպես նաև միասնական տվյալների շտեմարանների կիրառում ամբողջ համայնքում:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության և ՀՀ ՏԿԱԻ նախարարության համատեղ իրականացվող «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում 2015թ.-ի ընթացքում աշխատաժողովներ են անցկացվել նաև «Արդյունքահեն բյուջետավարման մեթոդոլոգիայի ներդրումը տեղական մակարդակում» թեմայով, որին մասնակցել են ՏԻՄ-երի, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեղական և միջազգային փորձագետներ<sup>67</sup>: Արդյունքահեն բյուջետավարման գաղափարը համայնքի ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների փոխկապակցվածությունն է, ինչը բարձրացնում է համայնքների բյուջետային միջոցների ծախսման արդյունավետությունը և ընդլայնում բնակչության մասնակցությունն այդ աշխատանքներին: Ներկայումս այն որպես փորձնական ծրագիր ներդրված է ավելի քան 10 համայնքում:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աջակցությամբ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան իրականացնում է «Կանանց քաղաքական ակտիվությունը տեղական ինքնակառավարման համակարգում՝ որպես մասնակցային ժողովրդավարության հիմնախնդիր» ծրագիրը: Այն մեծ ուշադրություն է դարձնում տեղական զարգացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար ներգրավմանը: Ծրագիրը, մասնավորապես, կարևորում է կնոջ դերը տեղական և մարզային քաղաքականության մեջ՝ հզորացնելով կանանց հմտությունները և կարողությունները, տեղական գործադիր իշխանություններում և ավագանիում աշխատելու համար:

*ՀՀ ՏԿԶ-ի համագործակցությամբ և ԵՄ ֆինանսավորմամբ՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվող «Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանումը Հայաստանում. կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում»* ծրագրով 2015 թվականի ընթացքում վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել ՏԻՄ-երի (ավագանու կին անդամներ) և համայնքային կյանքում ակտիվ

<sup>67</sup> Նույն տեղում:

գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության ամրապնդմանը, իրավահավասար ժողովրդավարության կառուցմանն ու հասարակության համախմբվածության խթանմանը՝ նպաստելով տեղական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարական կառավարման զարգացմանը: Ծրագիրը նաև նպատակ ունի բարենպաստ միջավայր ստեղծելու հանրային կառավարման և քաղաքականության մշակման գործընթացներում կանանց ավելի ակտիվ և նպատակային ներգրավման համար՝ լիովին գործադրելով նրանց կարողությունները և ներուժը:

Դեկտեմբերին Ադվերան քաղաքում տեղի ունեցավ եռօրյա աշխատաժողով, որը հնարավորություն տվեց համայնքների ներկայացուցիչներին ներկայացնելու տեղական ինքնակառավարման ոլորտում առաջընթացն ու մարտահրավերները, ինչպես նաև գենդերային հավասարության առաջխաղացումը<sup>68</sup>: Աշխատաժողովի մասնակիցները նաև փորձեցին գտնել լուծումներ՝ ընդլայնելու գենդերային հավասարակշռված կառավարման հնարավորություններն ու բացահայտելու թերությունները: Միջոցառումը նպատակ ուներ նաև բացահայտել ակտիվ կանանց և նախապատրաստել նրանց ՏԻՄ ընտրություններում առաջադրվելու համար:

2015 թվականի մարտի 18-ին ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը և ՀՀ ՏԿԱԻ նախարարությունը հայտարարեցին «Ինտեգրված աջակցություն գյուղական համայնքների զարգացմանը. համայնքների դիմակայունության ամրապնդում» ծրագրի մեկնարկի մասին<sup>69</sup>: Այն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության ֆինանսավորմամբ: Գյուղական զարգացման ծրագիրը օժանդակում է Տավուշի մարզի 45 սահմանամերձ համայնքների հետեյալ ուղղություններով. բնակիչների ներգրավում համայնքների զարգացման ծրագրերի մշակմանը, ուսուցում, աջակցություն գյուղատնտեսական ոլորտին, ենթակառուցվածքների վերականգնում, եկամուտ ստեղծող ծրագրեր և այլն:

*Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը Դանիայի կառավարության աջակցությամբ 2015 թվականին շարունակել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը. աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին, տեղական իշխանությունների կարողությունների զարգացում, տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդության հզորացում»* ծրագիրը: Ծրագիրը նպատակ է հետապնդում

<sup>68</sup> Նույն տեղում:

<sup>69</sup> Նույն տեղում:

Եվրոպայի խորհրդի իրավական փորձագիտական կարծիքը, քաղաքական խորհրդատվությունը և աջակցությունը տրամադրելու տեղական ինքնակառավարման բարեփոխումների գործընթացին՝ այդ թվում՝ վարչատարածքային բարեփոխումների նախապատրաստմանը, ինչպես նաև զարգացնելու տեղական իշխանությունների կարողությունները: Առաջին բաղադրիչը (աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին) նպատակ ունի տեղական ինքնակառավարման ոլորտի Հայաստանյան օրենսդրությունը ներդաշնակեցնելու եվրոպական ստանդարտներին: Երկրորդ բաղադրիչը (տեղական իշխանությունների կարողությունների զարգացում) ուղղված է տեղական իշխանությունների ինստիտուցիոնալ կարողություններին և ծառայությունների մատուցման հնարավորություններին: Երրորդ բաղադրիչը (տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդության հզորացում) նպատակ ունի բարելավելու տեղական ընտրված ներկայացուցիչների առաջնորդության և կառավարման կարողությունները և համագործակցության ոգի ձևավորելու ՏԻՄ-երի միջև:

2015թ. հուլիս ամսին Եղեգնաձորում և Աղվերանում վերը նշված ծրագրի շրջանակներում անցկացվեցին «Քաղաքացիների մասնակցության խթանումը Հայաստանում» թեմայով համաժողովներ: Համաժողովներին մասնակցում էին Հայաստանի բոլոր մարզերը ներկայացնող մոտ 200 համայնքների ղեկավարներ և ավագանու անդամներ: Մարզային համաժողովներից հետո մշակվեց «Քաղաքացիների մասնակցության ուղեցույց» Հայաստանի համայնքների ընտրված ներկայացուցիչների համար՝ հիմք ընդունելով այն գործիքներն ու նախաձեռնությունները, որոնք ներկայացվել ու քննարկվել էին մարզային համաժողովների ժամանակ:

Հայաստանի Ուրցաձոր, Վարդենիկ, Ախթալա և Արթիկ համայնքները 2015թ. հունիս ամսին Եվրոպայի խորհրդի հետ ստորագրել են համաձայնագրեր՝ համայնքային հրատապ խնդիրները վեր հանելու և լուծումներ գտնելու հարցում քաղաքացիների մասնակցության նախաձեռնություններ իրականացնելու վերաբերյալ: Այս նպատակով որոշվել է համայնքներին հատկացնել 5-հազարական եվրո դրամաշնորհ: Ծրագրի շրջանակում նշված համայնքներում նախատեսվել է իրականացնել նախաձեռնություններ ուղղված համայնքային կյանքին բնակիչների մասնակցության ապահովմանը, մասնավորապես՝ համայնքային բյուջեի ձևավորման, բնապահպանական, էներգաարդյունավետության և համայնքային հրատապ այլ խնդիրների կարգավորման հարցերում:

2015թ. Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվում է Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագիրը, որը նպատակ ունի խթանել միջսահմանային շփումը ՏԻՄ-երի, համայնքների և քաղաքացիական հասարակությունների միջև, մասնավորապես, Հայաստանի

Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում և Վրաստանի Քվեմո-Քարթլի շրջանում՝ ընդհանուր սոցիալ-տնտեսական մարտահրավերները հաղթահարելուն միտված համատեղ լուծումներ մշակելու գործում: 2015թ.-ին «Գործընկերության Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցություն» ծրագրի շրջանակում հայտարարված առաջին դրամաշնորհային մրցույթի (ֆինանսական միջոցը՝ 1.3 մլն. եվրո) արդյունքում ընտրվել են 8 ծրագրեր, որոնք իրականացվելու են ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի և Վրաստանի Սամցխե-Ջավախեթի և Քվեմո-Քարթլի տարածաշրջանների միջև տեղական իշխանությունների, համայնքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համատեղ ջանքերով՝ աջակցելու շահառու համայնքներին մշակել համընդհանուր սոցիալ-տնտեսական մարտահրավերներին դիմակայելու համատեղ լուծումներ<sup>70</sup>:

Ծրագրի շրջանակներում ստեղծվել են միջհամայնքային համագործակցության 10 նախագծեր, որոնք ներառում են Հայաստանից և Վրաստանից 33 կազմակերպություն: Նախագծերը միտված են լուծելու տարածաշրջանային զարգացմանն ուղղված տարաբնույթ խնդիրներ, մասնավորապես խթանել տնտեսական զարգացումը, գրավել ներդրողներ Վրաստանի Քվեմո-Քարթլի շրջան և Հայաստանի Տավուշի մարզ, նորարարական զբոսաշրջային ուղիներ մշակել, իրականացնել Վրաստանի Սամցխե-Ջավախեթի և Հայաստանի Շիրակի մարզի բնական ռեսուրսների պահպանմանն ուղղված ծրագրեր: Հատուկ ուշադրություն է հատկացված երիտասարդների խնդիրներին, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կրթությանը, երիտասարդների զբաղվածությանը, ինչպես նաև Գյումրիի ու Բոլնիսիի դեռահասների միջև հաղորդակցության խթանմանը:

*Ասիական զարգացման բանկի (ADB), Վերակառուցման զարգացման եվրոպական բանկի (EBRD) և Գերմանական զարգացման բանկի (KfW) աջակցությամբ իրականացվող Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹ) բարելավման ոլորտում 2015թ.-ին ՀՀ ՏԿԱԻ-ն շարունակել է ԿԿԹ ոլորտի ծրագրերի իրականացումը<sup>71</sup>:*

2015 թվականին շարունակվել է նաև *Հայաստանում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) հնգամյա ծրագիրը*, որը պաշտոնապես մեկնարկել է 2014թ. հոկտեմբեր ամսին: Ծրագիրն իրականացնում է Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ)՝ Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի (ՏՀԶՎԿ), Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի (ԺԱԱ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամի

<sup>70</sup> Նույն տեղում:

<sup>71</sup> Նույն տեղում:

(ԵՀՀ) և Հետազոտական ռեսուրսների Կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) հետ միասին:

ՀաՄաՏեղ ծրագիրը, տեղական ինքնակառավարման ոլորտում նախատեսված բարեփոխումներին զուգընթաց, հանրային լայնածավալ և էֆեկտիվ ներգրավման գործիք է, որի միջոցով քաղաքացիները գիտելիք, հմտություններ և հնարավորություն են ստանում ակտիվորեն մասնակցելու իրենց համայնքների կառավարման պլանավորման, իրականացման և վերահսկման գործընթացներին:

Բովանդակային առումով ծրագիրը կարելի է բաժանել չորս հիմնական բաղադրիչի՝ ա) կայունացնել և հզորացնել տեղական ինքնակառավարման համակարգի և ապակենտրոնացման բարեփոխումների իրականացման ընթացքում քաղաքացիների մասնակցությանը և շահերի ներկայացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կարողությունները, բ) ուժեղացնել քաղաքացիական հասարակության կարողությունները՝ կենտրոնական և տեղական իշխանությունների աշխատանքը և ապակենտրոնացման բարեփոխումների ընթացքը դիտարկելու նպատակով գ) բարձրացնել քաղաքացիների համար ապակենտրոնացման բարեփոխումների մասին անկախ և վստահելի տեղեկատվության հասանելիության մակարդակը, դ) բարելավել քաղաքացիական հասարակության գործունեության միջավայրը՝ ապակենտրոնացման բարեփոխումներին մասնակցության համատեքստում:

Աշխարհագրորեն և տիպաբանորեն ծրագիրը նույնպես միատարր չէ և ներառում է համայնքների երկու խումբ: Առաջին խումբն իր մեջ ընդգրկում է 35 քաղաքային և խոշոր գյուղական համայնքներ, իսկ երկրորդը՝ 40 համայնքներ, որոնք ներառված են համայնքների խոշորացման պիլոտային ծրագրի մեջ: Ընտրված բոլոր համայնքներում իրականացվում են բազմատեսակ գործողություններ, ներառյալ դասընթացներ համայնքների աշխատակիցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար, մշտադիտարկման և հանրային մասնակցության փոքր ծրագրեր, քառամյա զարգացման ծրագրերի և համայնքային բյուջեների մասնակցային մշակումներ և քննարկումներ, աջակցություն տեղական քաղաքացիական նախաձեռնություններին և այլն: Օրինակ, 2015թ. օգոստոս ամսվա ընթացքում ՀաՄաՏեղ ծրագրի շրջանակներում Համայնքների ֆինանսիստների միավորումը հանդիպումներ է անցակցրել ծրագրում ընդգրկված 35 շահառու համայնքներում: Քննարկումներին մասնակցել են ավագանու, համայնքների աշխատակազմի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ և դրանց նպատակն էր ներկայացնել ու քննարկել ՀՖՄ փորձագետների կողմից մշակված «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության», «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության» և



«Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման» կարգերի նախագծերը: Վերջիններիս անհրաժեշտությունը բխում է 2013թ. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններից ու լրացումներից, որոնք կատարվել էին հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի լրացուցիչ արձանագրությունը, Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին: Արդյունքում՝ 13 շահառու համայնքներում հիմնադրվել են խորհրդակցական մարմիններ, իսկ մյուսներում շարունակվել են աշխատանքները նույն ուղղությամբ:

Նկատի ունենալով տեղական ինքնակառավարման շարունակական վերափոխումները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգի կայացմանը բնակչության մասնակցության անհրաժեշտությունը՝ «ՀամաՏեղ» ծրագիրը 2015թ. հուլիսին նախաձեռնել է հանրային կարծիքի հարցում: Վերջինս իրականացրել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը: Տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքներն ամփոփող առաջին վերլուծական զեկույցը ներկայացվել է դեկտեմբեր ամսին և հիմնված է Հայաստանի ողջ տարածքում պատահականորեն ընտրված 1443 տնային տնտեսություններից հավաքագրված և հանրային կարծիքն արտացոլող տվյալների վրա:

«ՀամաՏեղ» ծրագիրը մեծ ուշադրություն է դարձնում նաև տեղական ինքնակառավարման ոլորտում տեղեկատվական համակարգի զարգացմանը: Այս նպատակով բարելավվում է առկա տեղեկատվական համակարգը, իրականացվում են էլեկտրոնային կառավարմանը վերաբերող մի շարք նախաձեռնություններ, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում տեղայնացվում են առավել արդյունավետ գործող տեղեկատվական գործիքները:

## ***Միջազգային կազմակերպությունների գործունեության համակարգվածության և միասնականության գնահատում***

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման փորձը ցույց է տալիս, որ համակարգի կատարելագործմանն ուղղված իրական գործնական քայլերի նախաձեռնող կողմը ոչ այնքան պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններն են, որքան միջազգային կազմակերպությունները կամ տեղական հասարակական կազմակերպությունները, որոնք ֆինանսավորվում են միջազգային աղբյուրներից: Իրենց առաքելություններն իրականացնելիս, նրանք համագործակցում են ՀՀ կառավարության, ՏԻՄ-երի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, հաճախ նաև՝ միմյանց հետ: Սակայն միայն միջազգային կազմակերպությունների նախաձեռնության, ջանքերի և նրանց կողմից իրականացվող ծրագրերի շնորհիվ տեղական ինքնակառավարման համակարգի իրական զարգացումը գրեթե անհնար է: Ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ բոլոր երկրների տեղական ինքնակառավարման համակարգերում չափազանց էական է պետության, մասնավորապես՝ կենտրոնական իշխանության դերը:

Ներկայացված ծրագրերը, իրենց ամբողջ արդյունավետությամբ հանդերձ, որոշ դեպքերում կտրված են լինում համայնքների կառավարման մարմինների փաստացի գործունեությունից և, ըստ էության, չեն ենթադրում վերջիններիս շահագրգիռ ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման զարգացման գործում: Բացի դրանից, նմանօրինակ ծրագրերին համայնքների ղեկավարները հաճախ խիստ թերահավատորեն են մոտենում, իսկ ծրագրի ավարտից հետո պարզապես վերադառնում իրենց բնականոն պահպանողական գործունեությանը:

## 7. Համայնքային ծառայությունների մատուցումը

### 7.1 Համայնքների կողմից մատուցվող հանրային ծառայությունները

2015թ. ընթացքում համայնքների կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում կատարված աշխատանքները ինչպես նաև համայնքային ծառայությունների օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունները ներկայացված են ըստ առանձին ոլորտների:

#### *Վանաչապատում և բարեկարգում*

2015թ. ընթացքում Սպիտակ, Գոգարան, Արևաշող, Լուսաղբյուր, Փամբակ, Շիրակամուտ, Վանաձոր, Մարգահովիտ և Տաշիր համայնքներում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում իրականացրել է շուրջ 6800 տնկիների տնկում<sup>72</sup>: Միխայելովկա համայնքում շուրջ 43.4 հա անտառտնկման, իսկ Կողես համայնքում նախորդ տարիներին հիմնադրված 50հա վրա ցանքսի միջոցով լրացման աշխատանքներ են իրականացվել: Սպիտակ, Ստեփանավան, Կաթնաջուր, Արջուտ, Ֆիոլետովո, Ծաղկաբեր, Ջրաշեն, Ղուրսալի, Սվերդլով, Սարատովկա և Կողես համայնքներում իրականացվել են նախորդ տարիներին հիմնադրված շուրջ 550 հա վրա անտառմշակույթների խնամքի աշխատանքներ<sup>73</sup>:

2015 թվականին Լուսազյուղ և Արայի համայնքներում GIZ կազմակերպությունը կատարել է անտառհիմնման աշխատանքներ: Արայի համայնքում հատկացվել է 50 հա հողատարածք, որից ցանկապատվել է 44 հեկտարը և անտառ է հիմնվել 18 հեկտարի վրա: Լուսազյուղում հիմնվել է 4 հա անտառ, իսկ 3000 ք/մ վրա հիմնվել է տնկարան: Հնաբերդ համայնքում լճի շրջակայքում 25 հա տարածք է ընտրվել, որտեղ իրականացվել են բիոինժեներական միջոցառումներ, հողի էռոզիայի կանխարգելման և նվազեցման աշխատանքներ<sup>74</sup>:

Համայնք – մասնավոր հատված համագործակցության ներդրումային ծրագրի շրջանակներում 2015թ. Երևանի գլխավոր հատակագծի համապատասխան մշակվել է Գլխավոր պողոտայի Մաշտոցի պողոտա – Սարյան փողոց հատվածի զբոսայգու վերակառուցման ծրագիրը: Ծրագրի շրջանակում իրականացվել է գոյություն ունեցող կանաչ զանգվածի, գազոնների, մայթերի և սալահատվածների բարեկարգումն ու արդիականացումը: Ընդհանուր առ-

<sup>72</sup> <http://ori.mtaes.am/files/docs/19144.pdf> , Հաշվետվություն ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի գործունեության մասին

<sup>73</sup> Նույն տեղում

<sup>74</sup> <http://aragatsotn.mtaes.am/files/docs/17854.pdf>, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015թ սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի գործունեության մասին տնտեսական հաշվետվություն

մամբ 2015թ. Երևան քաղաքում 54.000 ծառ և թուփ է տնկվել, տեղադրվել է ծաղկային գեղարվեստական 120 կոմպոզիցիա, կրապատվել է 65000 ծառ, կատարվել են 37000 ծառերի բուժման աշխատանքներ: Հանգստի գոտիների կանաչ տարածքներն ավելացել են 6.2հա-ով, ստեղծվել է Միլիկյան թաղամասի կանաչ գոտին, վերակառուցվել է Ա. Կարապետյանի անվան զբոսայգին և ընդլայնվել է Թ. Կրպեյանի անվան զբոսայգու կանաչ մակերեսը<sup>75</sup>:

ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության ծրագրի շրջանակներում համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման նպատակով ինչպես նաև անտառների և արոտավայրերի կայուն կառավարում ծրագրի շրջանակներում Ծովակ համայնքում հիմնվել է 15 հա անտառ, Ծափաթաղ համայնքում 7 հա տարածության վրա իրականացվել են կաղնուտային անտառների հիմնում և լրացում և դաշտապատյան շերտերի հիմնում՝ 1500 ծառի տնկում<sup>76</sup>:

2015 թվականին Երևանում կառուցվել, բարեկարգվել և կահավորվել է 385 բակային տարածք: Տարվա ընթացքում բակային շատ տարածքներ ձևավորվել են նախկինում զավթած բակային տարածքների հաշվին՝ դրանք դարձնելով ընդհանուր՝ բոլոր բնակիչների համար<sup>77</sup>: Համայնք – մասնավոր հատված համագործակցության շնորհիվ ամբողջովին վերակառուցվել են Երևան քաղաքի Աբովյան, Մոսկովյան և Իսահակյան փողոցների խաչմերուկներում գտնվող ստորգետնյա անցումները: Շարունակվել են նաև մայրաքաղաքում վթարային հենապատերի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքները: 2015թ. Երևանում հիմնանորոգվել է 4 և վերանորոգվել 11 վթարային հենապատ<sup>78</sup>:

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) և ՎիվաՍել-ՄՏՍ-ը «Այլընտրանքային էներգիա» համատեղ ծրագրի շնորհիվ Վայոց Ձորի մարզի Բարձրունի գյուղի կենտրոնական փողոցում տեղակայվել է արտաքին լուսավորության 41 կետից բաղկացած լուսադիոդային (LED) համակարգ: Այն լուսավորում է 1250 մ տարածություն: Մոտ 450 բնակիչ ունեցող Բարձրունիի լուսավորությունը հատկապես կարևոր է անվտանգության նկատառումներով. համայնքը, որի պետական սահմանի 23 կմ երկարությամբ հատվածն ընդամենը 3 կմ է հեռու հայ-ադրբեջանական սահմանից, չի ունեցել արտաքին լուսավորություն ավելի քան 20 տարի<sup>79</sup>:

<sup>75</sup> Նույն տեղում

<sup>76</sup> <http://gegharkunik.mtaes.am/files/docs/18427.pdf> , ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հաշվետվությունը մարզի 2015թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

<sup>77</sup> <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/40/3e5e3cd198bd1b907e86d58e34ce904838f56680.pdf>, Երևանի քաղապետարանի 2015 թվականի տարեկան հաշվետվությունը

<sup>78</sup> Նույն տեղում

<sup>79</sup> <http://armlur.am/447410/>

## Աղբահանություն

Երևանում աղբահանության գործընթացը կանոնակարգելու նպատակով քաղաքապետարանի կողմից հայտարարված միջազգային մրցույթում հաղթած լիբանանյան «Սանիթեք» ընկերությունը մայրաքաղաքում տվել է 2-րդ չափաբաժնի (լոտ) մեկնարկը<sup>80</sup>: Երևանի ևս 7 վարչական շրջաններ կներգրավվեն աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ծրագրում: միջազգային մրցույթի 2-րդ մասով ներառվելու են Արաբկիր, Ավան, Նոր Նորք, Նորք Մարաշ, Էրեբունի, Նուբարաշեն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանները<sup>81</sup>: Քաղաքապետը նշել է որ, ընկերությունը 2-րդ լոտով նախատեսված աշխատանքների իրականացման համար ևս ներկրել է նոր, եվրոպական չափորոշիչներին համապատասխան մեքենամեխանիզմներ, ընդ որում, մինչև տարեվերջ ևս 20 մեքենամեխանիզմ էլ նախատեսվում է ներկրել, այդ թվում նաև ձնամաքրման համար անհրաժեշտ տեխնիկա: Ավելի մաքուր մայրաքաղաք ունենալու հարցում կարևորելով նաև բնակիչների վերաբերմունքը՝ Տարոն Մարգարյանը հորդորել է մաքուր պահել մայրաքաղաքն ու իսկական տանտիրոջ պես վերաբերվել Երևանին<sup>82</sup>:

2015 թվականին Սասունիկ գյուղում գործող աղբավայրը փակվել է, քանի որ այն անհարմարություն էր ստեղծում հարակից ճանապարհի և հողերի համար: Նոր աղբավայրի համար հատկացվել է 8 հա հողատարածք, իսկ հին աղբավայրի տեղում ռեկուլտիվացիոն աշխատանքներից հետո կհիմնվեն այգիներ<sup>83</sup>:

Պաշտոնական աղբավայրեր են շահագործվում Մարտունի, Սևան, Գավառ, Կարդենիս և Ճամբարակ համայնքների կողմից<sup>84</sup>: Աղբավայրեր են շահագործվում նաև Հրազդան, Չարենցավան, Աբովյան և Եղվարդ համայնքների կողմից<sup>85</sup>:

<sup>80</sup> <http://www.panorama.am/am/news/2015/08/18/sanitek/1429802>

<sup>81</sup> <https://armenpress.am/arm/news/815613/sanitek-ynkerutyunn-axbahanutyun-kirakanacni-erevani.html>

<sup>82</sup> <http://www.panorama.am/am/news/2015/08/18/sanitek/1429802>

<sup>83</sup> <http://aragatsotn.mtaes.am/files/docs/17854.pdf>, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015թ սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի գործունեության մասին տնտեսական հաշվետվություն

<sup>84</sup> <http://geggharkunik.mtaes.am/files/docs/18427.pdf>, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հաշվետվությունը մարզի 2015թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

<sup>85</sup> <http://kotayk.mtaes.am/reports/>, ՀՀ Կոտայքի մարզպետի հաշվետվությունը 2015 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական տնտեսական իրավիճակի մասին

## **Բնակելի տների և ոչ բնակելի տարածքների պահպանում**

Պետական բյուջեից տրամադրվել է 26.7 մլն. դրամ Մայիսյան համայնքի հրդեհված բնակելի շենքի 4 ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով իսկ 53.4 մլն. դրամ տրամադրվել է Լենուղի համայնքի 2 վթարային բազմաբնակարան շենքերի 8 ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով<sup>86</sup>:

Պետական բյուջեից Վանաձոր համայնքին տրամադրվել է 50.55 մլն. դրամ՝ 5 շենքերի, Ստեփանավան համայնքին՝ 10.16 մլն. դրամ 1 շենքի, Ալավերդի համայնքին՝ 43.3 մլն. դրամ 3 շենքերի, Տաշիր համայնքին՝ 24.38 մլն. դրամ 3 շենքերի, Ձորագետ համայնքին՝ 5.08 մլն. դրամ 1 շենքի տանիքների վերանորոգման համար: Լեռնանցք համայնքում 42.4 մլն. դրամ տրամադրվել է համայնքի կենտրոնի նոր շենքի կառուցման համար: Հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Բովաձոր, Յաղդան, Արևածագ, Չկալով, Աքորի և Դեբեդ համայնքների համայնքային կենտրոններում: Պետական բյուջեից 19.3 մլն. դրամ տրամադրվել է Գարգառ, Շնող և Մղարթ համայնքներում փողոցային լուսավորության ապահովման համար<sup>87</sup>:

Ահնիձոր և Գոգարան համայնքներում կառուցվել է հանդիսությունների սրահներ որոնց աշխատանքների իրականացման համար պետական բյուջեից տրամադրվել է 15.248 մլն. դրամ, իսկ Օձուն համայնքի արվեստի դպրոցի վերանորոգման աշխատանքների համար՝ 22.9 մլն. դրամ, Կարմիր Աղեկ համայնքի ակումբի վերանորոգման համար՝ 4.572 մլն. դրամ, Ծաթեր համայնքի հանդիսությունների սրահի վերանորոգման համար՝ 13.208 մլն. դրամ<sup>88</sup>:

2015 թվականին Ապարան քաղաքում գործել են 14 համատիրություններ, որոնք սպասարկել են 14 բազմաբնակարան շենք՝ 420 բնակարաններով<sup>89</sup>:

Պետական բյուջեի հատկացումներով 2015 թվականին վերանորոգվել են Շենիկ (50 մլն. դրամ) և Բամբակաշատ (80 մլն. դրամ) համայնքների մշակույթի տները: Համայնքի միջոցներով ամբողջությամբ վերանորոգվել են Ջրարբի համայնքի մշակույթի տունը<sup>90</sup>:

Կառավարության պահուստային ֆոնդից 02.07.2015 թվականի N766-Ն որոշմամբ հատկացված միջոցներից 28.6 մլն. դրամ տրամադրվել է Արեգունի

<sup>86</sup> <http://armavir.mtaes.am/files/docs/18064.pdf>, Հաշվետվություն ՀՀ Արմավիրի մարզպետի 2015 թվականի գործունեության և մարզի սոցիալ տնտեսական վիճակի մասին

<sup>87</sup> <http://lori.mtaes.am/files/docs/19144.pdf>, Հաշվետվություն ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի գործունեության մասին

<sup>88</sup> Նույն տեղում

<sup>89</sup> <http://aragatsotn.mtaes.am/files/docs/17854.pdf>, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015թ սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի գործունեության մասին տնտեսական հաշվետվություն

<sup>90</sup> <http://armavir.mtaes.am/files/docs/18064.pdf>, Հաշվետվություն ՀՀ Արմավիրի մարզպետի 2015 թվականի գործունեության և մարզի սոցիալ տնտեսական վիճակի մասին

և Դրախտիկ համայնքների համայնքային կենտրոնների կառուցման համար 7.0 մլն. դրամ Գեղամավան համայնքի մշակույթի տան միջոցառումների սրահի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների համար<sup>91</sup>:

2015թ. Երևանում շահագործման են հանձնվել 4 բազմաբնակարան շենքեր, որոնցով հնարավորություն է ստեղծվել լուծել 9 վթարային շենքերի 450 ընտանիքների վերաբնակեցման խնդիրը<sup>92</sup>:

2015թ. համատիրությունների հետ համագործակցության շրջանակում շարունակվել են Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները: Վերանորոգվել է 727 շենքերի շուրջ 82.000 քմ հարթ տանիք, մասնակի նորոգվել է 900 շենքերի շուրջ 37000 քմ թեք տանիք: Բացի այդ 11 շենքրի շուրջ 11000 քմ թեք մակերեսով տանիքներ հիմնանորոգվել են ամբողջությամբ<sup>93</sup>:

### ***Ջրամատակարարում և ջրահեռացում***

ԱՄՆ-ի ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի և «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում Շնող համայնքում կատարվել է «Շնող-1» պոմպային կայանի հեռացնող ջրանցքի 4800մ երկարությամբ տեղամասի կիսախողովակների վերանորոգում, տեղադրվել են հիդրանտներ և ջրթողներ: Կատարված աշխատանքների շնորհիվ լիարժեք կոռոզվի 230հա վարելահողեր և այգիներ: Շինարարական աշխատանքների իրականացման համար կատարվել է շուրջ 12.6 մլն. դրամ ներդրում: Նույն ծրագրի շրջանակներում Ճոճկան համայնքում կատարվել է ներտնտեսային ջրանցքի 1220մ երկարությամբ տեղամասի նորոգում, որի շնորհիվ լիարժեք կոռոզվի 34 հա վարելահողեր<sup>94</sup>:

Համաշխարհային բանկի վարկային ծրագրով իրականացվել է Տանձուտ համայնքի 0.7 կմ երկարությամբ ներտնտեսային ցանցի վերակառուցում 1.64 մլն. ԱՄՆ դոլար արժեքով, ինչպես նաև Նոր-Կեսարիա համայնքի ներտնտեսային ցանցի վերակառուցում LR-6 կիսախողովակներով 232.56 մլն. դրամ արժեքով<sup>95</sup>:

<sup>91</sup> <http://gegharkunik.mtaes.am/files/docs/18427.pdf> , ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հաշվետվությունը մարզի 2015թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

<sup>92</sup> <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/40/3e5e3cd198bd1b907e86d58e34ce904838f56680.pdf>, Երևանի քաղապետարանի 2015 թվականի տարեկան հաշվետվությունը

<sup>93</sup> Նույն տեղում

<sup>94</sup> <http://lori.mtaes.am/files/docs/19144.pdf> , Հաշվետվություն ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի գործունեության մասին

<sup>95</sup> <http://armavir.mtaes.am/files/docs/18064.pdf> , Հաշվետվություն ՀՀ Արմավիրի մարզպետի 2015 թվականի գործունեության և մարզի սոցիալ տնտեսական վիճակի մասին

2015թ. Երևանի համայնքում մեծ աշխատանքներ կատարվեցին ջրամատակարարման և ջրահեռացման բնառավառում: Մասնավորապես «Երևան ջուր» ընկերության կողմից մայրաքաղաքի ջրամատակարարման ցանցը բարելավելու նպատակով իրականացվել է 2.4 մլրդ դրամի ներդրում: Ամբողջովին թարմացվել և նորովի կառուցվել է 29.000 գծամետր ջրագիծ, կոյուղագիծ և հեղեղատար, 70 կապտածներ: Երևանի քաղաքի ջրամատակարարման բարելավման նպատակով Ֆրանսիայի կառավարության տրամադրած վարկային ծրագրի շրջանակներում 2015թ. ամբողջովին ավարտվել է 23 փողոցի 5210 գծամետր կոյուղատար ցանցի արդիականացման աշխատանքները: «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանում կառուցվել է ընդունող խուցը ավագորսիչների և ճարպի հեռացման կառուցվածքները<sup>96</sup>:

2015թ. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը և ՎիվաՄեյ-ՄՏՍ-ն իրականացրած ծրագրի շնորհիվ Տավուշի մարզի Չինարի համայնքը, նախկին 2 ժամի փոխարեն, ապահովված կլինի 6-ժամյա ջրամատակարարմամբ: Բարելավված համակարգը ներառում է նորակառույց ջրահավաք, պոմպակայան և 300 մ ջրագիծ: Ծրագրի իրականացմանն աջակցել է նաև Հայ Օգնության Ֆոնդը (ՀՕՖ)<sup>97</sup>:

### ***Ջեռուցում***

Գեղամավան գյուղի մշակույթի տան արարողությունների սրահի ջեռուցման համակարգի կառուցման համար ՀՀ կառավարության կողմից իրականացվող հրատապ ծրագրերի շրջանակներում պետական միջոցներից հատկացվել է 7 միլիոն 100 հազար դրամ<sup>98</sup>: Վերջին տարիներին պետական միջոցներով ամբողջությամբ վերանորոգվել էր Գեղամավան գյուղի մշակույթի տունը, սակայն ջեռուցման հարցը չէր լուծվել: Ջեռուցման կարիք և անհրաժեշտություն առավել շատ էր զգացվում արարողությունների սրահում, որտեղ տարին բոլոր կատարվում էին միջոցառումներ և արարողություններ<sup>99</sup>:

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի և ՎիվաՄեյ-ՄՏՍ-ի կողմից համատեղ իրականացվող «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում սահմանամերձ Ջուջևան համայնքի վարչական շենքը ապահովվել է արևային ջրատաքացուցիչներով համալրված ջեռուցման

<sup>96</sup> <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/40/3e5e3cd198bd1b907e86d58e34ce904838f56680.pdf>, Երևանի քաղապետարանի 2015 թվականի տարեկան հաշվետվությունը

<sup>97</sup> <http://armlur.am/539869/>

<sup>98</sup> <http://mediagid.am/am/news/-geghamavani-mshakuyti-tunn-aradika-dzmrany-kunena-kentronacvac-derucum--1123951>

<sup>99</sup> <https://armenpress.am/arm/news/816936/gexamavani-mshakuyti-tunn-arajika-dzmrany-kunena-kentronacvats.html>



համակարգով: Ջուջևան համայնքի վարչական շենքը ներառում է գյուղապետարանը, մանկապարտեզը և համայնքի բուժկետը<sup>100</sup>: Նույն նախագծի շրջանակում Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքի մարզադահլիճում տեղադրվել են արևային ջրատաքացուցիչ և էլեկտրական ջեռուցման համակարգ՝ հնարավոր դարձնելով օգտագործել մարզադահլիճը նաև ցուրտ եղանակներին<sup>101</sup>:

Տարածքային զարգացման հիմնադրամի համաֆինասավորմամբ 2015թ. Ուջան համայնքի մանկապարտեզում իրականացվել է վերանորոգման և ջեռուցման համակարգերի կառուցում<sup>102</sup>:

### ***Հասարակական տրանսպորտ և ճանապարհաշինություն***

2015թ. ներքաղաքային կանոնավոր փոխադրումներ իրականացվում են Գյումրիում և Կապանում, ինչպես նաև Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում<sup>103</sup>, նաև Սևան և Գավառ քաղաքներում իրականացվում են ներքաղաքային երթուղիների սպասարկում<sup>104</sup>:

ՀՀ Կառավրության աջակցությամբ հիմնանորոգվել է Թալին քաղաքի Սայաթ-Նովա փողոցը՝ 25 մլն. դրամ արժեքով և 2100 քմ ընդհանուր մակերեսով, ինչպես նաև նորոգվել են Բյուրական համայնքի ներհամայնքային ճանապարհները՝ 3200 քմ ընդհանուր մակերեսով և Կարբի համայնքի ներհամայնքային ճանապարհները՝ 2850 քմ ընդհանուր մակերեսով<sup>105</sup>:

Պետական բյուջեից հատկացված միջոցներով հիմնանորոգվել են Սևան քաղաքի Նաիրյան փողոցը՝ 102.7 մլն. դրամ արժեքով, Մարտունի քաղաքի Մամիկոնյան փողոցը՝ 59.3 մլն. դրամ արժեքով, Ձորագյուղ համայնքի փողոցը՝ 24.7 մլն. դրամ արժեքով<sup>106</sup>:

Սևանի քաղաքապետարանի կողմից իրականացվել են նաև Սևան քաղաքի փողոցների փոսային նորոգումներ՝ 34.2 մլն. դրամով: Վարդենիսի քաղաքապետարանի կողմից՝ 5.3 մլն. դրամ փոսային նորոգման աշխատանքներ, իսկ Մարտունու քաղաքապետարանի կողմից 12.8 մլն. դրամի վերանորոգման

<sup>100</sup> <http://armlur.am/464118/>

<sup>101</sup> <http://www.mts.am/hy/company/news/detail/2015/10/27/hot-water>

<sup>102</sup> <http://atdf.am/hy/Reports>, ՄՆՏՁ 2015թ. Տարեկան հաշվետվություն

<sup>103</sup> <http://lori.mtaes.am/files/docs/19144.pdf>, Հաշվետվություն ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի գործունեության մասին

<sup>104</sup> <http://gegharkunik.mtaes.am/files/docs/18427.pdf>, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հաշվետվությունը մարզի 2015թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

<sup>105</sup> <http://aragatsotn.mtaes.am/files/docs/17854.pdf>, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի գործունեության մասին տնտեսական հաշվետվություն

<sup>106</sup> <http://gegharkunik.mtaes.am/files/docs/18427.pdf>, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հաշվետվությունը մարզի 2015թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

աշխատանքներ են իրականացվել:

Համայնքային բյուջեների հաշվին իրականացվել են Ներքին Գետաշեն համայնքի ճանապարհի 2.6 մլն. դրամի չափով փոսային նորգման աշխատանքներ, Ծովինար համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 7.7 մլն. դրամի չափով, Զոլաքար համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 14.4 մլն. դրամի չափով, Լիճք համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 16.9 մլն. դրամի չափով, Վարդենիկ համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 61.0 մլն. դրամի չափով, Աստղաձոր համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 36.9 մլն. դրամի չափով, Երանոս համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 9.3 մլն. դրամի չափով, Նորատուս համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 29.0 մլն. դրամի չափով<sup>107</sup>:

Իրականացվել են Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհի՝ Արշակունյաց պողոտա – Արտաշատի խճուղի հատվածի կառուցման աշխատանքները: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել Երևանի շրջանցիկ ճանապարհի մյուս հատվածի՝ Շիրակի փողոցից Բաբաջանյան փողոցով Աշտարակի խճուղով մինչև Դավթաշենի կամուրջ շուրջ 10կմ երկարությամբ ճանապարհահատվածի կառուցման ուղղությամբ<sup>108</sup>:

2015թ. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի ԵՄ հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ մեկնարկել են Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման 2-րդ փուլի աշխատանքները, որոնց հիմնական բաղադրիչ է հանդիսանում դրենաժային թունելների երկարացումը: Միաժամանակ նույն կառույցների աջակցությամբ պատվիրվել է վերգետնյա էլեկտրատրանսպորտի ամբողջական արդիականացման ծրագրի իրագործելիության ուսումնասիրություն, ինչպես նաև բանակցություններ են վարվել դրա ֆինանսավորման ուղղությամբ<sup>109</sup>:

### **Կրթություն և մշակույթ**

2015թ. Երևան քաղաքում կազմակերպվել են ավելի քան 40 քաղաքային հանդիսություններ, այդ թվում միջոցառումներ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին<sup>110</sup>:

Հրազդան, Չարենցավան և Զովունի համայնքներում կազմակերպվել են հայ

<sup>107</sup> <http://gegharkunik.mtaes.am/> , ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

<sup>108</sup> <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/40/3e5e3cd198bd1b907e86d58e34ce904838f56680.pdf>, Երևանի քաղապետարանի 2015 թվականի տարեկան հաշվետվությունը

<sup>109</sup> Նույն տեղում

<sup>110</sup> <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/40/3e5e3cd198bd1b907e86d58e34ce904838f56680.pdf>, Երևանի քաղապետարանի 2015 թվականի տարեկան հաշվետվությունը

հին ֆիլմերի կինոդիտումներ: իսկ Եղվարդ և Բյուրեղավան համայնքներում բացվել են Հայաստանի շախմատի ակադեմիայի մասնաճյուղեր<sup>111</sup>: Մայիսին շահագործման է հանձնվել Եղվարդի մանկապատանեկան դպրոցի շենքը: Շարունակվում են Չարենցավանի մանկապատանեկան դպրոցի շենքի կառուցման աշխատանքները<sup>112</sup>:

Դեկտեմբերի 8-ին Երևան քաղաքի Արավյան 34-ում հասցեում հանդիսավորությամբ բացվել է դուդուկահարներ Լևոն Մադոյանին, Վաչե Հովսեփյանին ու Ջիվան Գասպարյանին նվիրված «Ուշացած լուսանկար» անվանումով արձանը, որի հեղինակն է Դավիթ Մինասյանը: Արձանի բացումը տեղի է ունեցել նախագահ Սերժ Սարգսյանի, քաղաքապետ Տարոն Մարգարյանի, ավագանու անդամների եւ մի շարք մտավորականների մասնակցությամբ<sup>113</sup>:

2015թ. Գրադարանավարի օրվան նվիրված «Դարձիր գրադարանի բարեկամ» կարգախոսով իրականացվել է արդեն ավանդական դարձած «Հանդիպման վայրը՝ գրադարան» ծրագիրը, որին մասնակցել է 100 գրադարան և կազմակերպվել է 300 միջոցառում: Ծրագրի նպատակն էր նպաստել սահմանամերձ համայնքների գրադարանային հավաքածուների համալրման գործին: «Հանրային գրադարանների հավատարմագրման կարգը և վկայականի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունելուց հետո 2013 թվականից հավատարմագրվել են մարզային ու համայնքային 34 գրադարան և ծրագրի մեկնարկից սկսած «Հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրով» իրականացվել են հավատարմագրման վկայական ստացած 20 համայնքային գրադարանների վերազինման աշխատանքներ (2013 թ.՝ 10, 2014 թ.՝ 5, 2015 թ.՝ 5 գրադարան), ինչի արդյունքում յուրաքանչյուր գրադարան ապահովվել է ինտերնետ կապով, համակարգիչներով, բազմաֆունկցիոնալ տպիչով, պատճենահանման սարքով, գրապահարաններով, սեղաններով, աթոռներով, ցուցափեղկերով, գրադարակներով, համակարգչային և սպասարկման սեղաններով<sup>114</sup>:

Կատարողական արվեստի զարգացման նպատակով իրականացվել է Արագած համայնքի «Արագած» ազգագրական երգի-պարի խմբի զգեստների պատրաստումը:

Ազգային ավանդույթների, ծեսերի ու տոների պահպանման նպատակով Գյումրիում իրականացվել է «Հացի փառատոն» ծրագիրը, իսկ Նոր Արթիկ հա-

<sup>111</sup> <http://kotayk.mtaes.am/reports/>, ՀՀ Կոտայքի մարզպետի հաշվետվությունը 2015 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական տնտեսական իրավիճակի մասին

<sup>112</sup> Նույն տեղում

<sup>113</sup> <http://www.hrparak.am/?p=96608&l=am/jivan+gasparyan+hima+im+tramadrutyuny+100-i+vra+e+en-ganvo%D6%82rax+emvor+el+aselu+chi>

<sup>114</sup> <http://mincult.am/reports.html>, ՀՀ մշակույթի նախարարության 2015 թվականի գործունեության հաշվետվություն

մայնքում «Էրզրի համի հիշողությունը» հայկական ուտեստի փառատոնի ծրագիրը<sup>115</sup>:

«Դաշտադեմ ամրոցի և նրա շրջակայքում գտնվող մշակութային ժառանգությանը, տարածքների ուսումնասիրմանը, գնահատմանը, վերականգնմանը, օգտագործմանը և հանրահռչակմանը» նվիրված համալիր ծրագրի շրջանակներում 2015թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին վերսկսվել են Դաշտադեմ համայնքի վարչական սահմաններում գտնվող միջնադարյան ամրոցի (7-19-րդ դդ.) գործառնական նշանակության հետ առնչություն չունեցող, հուշարձանի ճարտարապետական կերպարը խաթարող, 20-րդ դարի 50-70 թվականներին կառուցված և ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի N 899-Ն որոշմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված «օտար» կառույցների քանդման-հեռացման, դղյակ-միջնաբերդի հարակից տարածքի հնագիտական ուսումնասիրման, միջնադարյան ամրոցի պատմական միջավայրի վերստեղծման աշխատանքները:

«Մշակութային մարզ-մշակութային համագործակցություն» ծրագրով պետական աջակցությամբ ՀՀ սահմանամերձ և հեռավոր մարզերի համայնքներում և Երևանում իրականացվել է 9 ծրագիր, այդ թվում՝ 6 հյուրախաղ և 3 հոբելյանական փառատոնային ծրագիր («Թումանյանական հեքիաթի օր», «Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի» փառատոն-տասնօրյակը՝ նվիրված Հովհաննես Աբելյանի ծննդյան 150-ամյակին և Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հիմնադրման 150-ամյա հոբելյանական հանդիսությունը):

2015թ. հանրապետությունում գործել է գեղարվեստական կրթություն իրականացնող 209 ուսումնական հաստատություն (99 երաժշտական, 84 արվեստի, 22 գեղարվեստի, 4 պարարվեստի դպրոց), որտեղ սովորել է 36520 աշակերտ, դասավանդել՝ 4545 մանկավարժ:

«Ճամփորդող ցուցահանդես» ծրագիրն ուղղված է հեռավոր բնակավայրերի բնակչությանը մշակութային ծառայությունների մատչելիության ապահովմանը, այն է՝ Հայաստանի 6 մարզում կազմակերպվել է 19 ցուցահանդես, մասնավորապես՝ ցուցահանդեսներ են կազմակերպվել ՀՀ Սյունիքի մարզի Միսիան, Կապան, Մեղրի, Գորիս քաղաքներում, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Ջերմուկ քաղաքներում, Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան քաղաքներում և Ծաղկավան գյուղում, Շիրակի մարզի Աշոցք գյուղում, Գեղարքունիքի մարզի Սևան, Վարդենիս, Գավառ, Մարտունի քաղաքներում Կարմիր և Շորժա գյուղերում, Լոռու մարզի Տաշիր և Ստեփանավան քաղաքներում, Քարկով գյուղում<sup>116</sup>:

<sup>115</sup> Նույն տեղում

<sup>116</sup><http://mincult.am/reports.html>, ՀՀ մշակույթի նախարարության 2015 թվականի գործունեության հաշվետվություն

2015թ. Երևան քաղաքի ենթակայության 160 մանկապարտեզներում թարմացվել է մանկապարտեզի գույքը, միաժամանակ մշակվել է մանկապարտեզների էլեկտրոնային կառավարման համակարգ, որը հնարավորություն կտա կանոնակարգել և վերահսկել մանկապարտեզներում երեխաների հերթագրման գործընթացը<sup>117</sup>:

2015թ. Երևանում կառուցվել է գեղասահքի 1, շախմատի 2 դպրոց, հիմնանորոգվել և վերանորոգվել է մարզամշակույթային շուրջ 15 դպրոց, ինչպես նաև մշակույթի 3 տուն և կենտրոն: Հիմնանորոգվել է 16 գրադարան, որով ավարտվել է Երևան քաղաքի ենթակայության գրադարանների վերանորոգման ծրագիրը: Քաղաքապետարանի ենթակայության գրադարանների գրքային ֆոնդը հարստացվել է 170 անուն շուրջ 11000 գրքով: 2015թ. Երևանի ենթակայության 3 թատրոններ և 5 թանգարաններ շարունակել են իրենց բնականոն գործունեությունը<sup>118</sup>:

### ***Առողջապահություն***

2015թ. դրությամբ ընթացքի մեջ են «Նորաշենի ԱՍՊԿ» ՊՈԱԿ-ի ամբուլատորիայի հիմնանորոգման աշխատանքները (37.5մլն. դրամ) որոնց աջակցում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը<sup>119</sup>: Տավուշի մարզի Նավուր, Բագրատաշեն և Ոսկեվան, Լոռու մարզի Լեռնապատ, Արարատի մարզի Քաղցրաշեն և Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքների բնակիչներին ուրախություն պարգևեց ամբուլատորիաների նորակառույց շենքերի շահագործումը<sup>120</sup>: ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակում կառուցված ամբուլատորիաների բացմանը ներկա էին ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը և Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը: Ոսկեվանի առողջության առաջնային պահպանման կենտրոնը (ԱՍՊԿ) սպասարկում է Ոսկեվան, Բաղանիս և Ոսկեպար համայնքների շուրջ 2700 ազգաբնակչության<sup>121</sup>: Տավուշի մարզի Բերդավանի ամբուլատորիան վերաբացվեց հիմնանորոգումից և ժամանակակից սարքավորումներով հագեցվելուց հետո: Դրանք կառուցվել ու հիմնանորոգվել են «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի երկրորդ փուլի լրացուցիչ ֆինանսավորման

<sup>117</sup> <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/40/3e5e3cd198bd1b907e86d58e34ce904838f56680.pdf>, Երևանի քաղապետարանի 2015 թվականի տարեկան հաշվետվությունը

<sup>118</sup> Նույն տեղում

<sup>119</sup> <http://ararat.mtaes.am/reports/> ՀՀ Արարատի մարզի 2014 թվականի և 2015 թվականի հունվար - սեպտեմբեր ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

<sup>120</sup> <http://armlur.am/384628/>

<sup>121</sup> <http://sputnik.co.am/armenia/20150709/122838.html>

ընթացքում տնտեսված միջոցների հաշվին: Այդ միջոցները գյուղական համայնքների առողջության առաջնային պահպանման օղակի ենթակառուցվածքների արդիականացմանն են ուղղվել ՀՀ առողջապահության նախարարության և Համաշխարհային բանկի համատեղ որոշումով: 2014-2015թթ. ծրագրում հավելյալ ընդգրկվել են 12 համայնքային ամբուլատորիա և Մեծամորի ԲԿ-ի պոլիկլինիկական հատվածը, որոնց շինարարական աշխատանքները հիմնականում մեկնարկել էին 2014թ. մայիսին<sup>122</sup>:

2015թ. հուլիսի սկսվեցին Արագածոտնի մարզի Բյուրական, Լոռու մարզի Ուռուտ, Վայոց ձորի մարզի Շատին, Արարատի մարզի Մխչյան և Լանջազատ համայնքների ամբուլատորիաների նոր շենքերի կառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն 2016թ. առաջին եռամսյակում: Այս աշխատանքների իրականացման համար արդեն իսկ ներդրվել է 397 մլն. դրամ: Առաջիկայում կներդրվի ևս շուրջ 300 մլն. դրամ<sup>123</sup>:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում իրականացվում են «Մխչյանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի (61.5 մլն.) և «Լանջազատի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի (60 մլն.) ամբուլատորիաների նոր շենքերի կառուցման աշխատանքները:

2015թ. օգոստոսի սկզբին մեկնարկել են ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի նոր բժշկական ամբուլատորիայի կառուցման աշխատանքները:

2015թ. դրությամբ Բյուրականի ամբուլատորիան իր գործունեությունն է ծավալում անմխիթար պայմաններում գտնվող, 1950թ. կառուցված շենքում, որը մասնակի վերանորոգվել է 2000թ.: Ամբուլատորիայում աշխատում են ընտանեկան բժշկության վերապատրաստում անցած 3 բժիշկ և 2 բուժքույր: Այն սպասարկում է Բյուրական, Անտառուտ, և Օրգով համայնքների 5180 բնակչության: Շինարարությունն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակում 2014թ. ընթացքում տնտեսված միջոցներով: Շինարարության ավարտը նախատեսված է 2015թ. դեկտեմբերի վերջին<sup>124</sup>:

Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների կողմից բնակչության սպասարկման որակը բարելավելու, ինչպես նաև ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների հագեցվածությունը հզորացնելու նպատակով 2015թ. ձեռք է բերվել և կազմակերպություններին տրամադրվել 30 անհրաժեշտ բուժսարքավորումներ: Երևանի քաղաքապետ-

<sup>122</sup> <http://armlur.am/384628/>

<sup>123</sup> Նույն տեղում

<sup>124</sup> <http://www.aravot.am/2015/08/22/601961/>

<sup>125</sup> <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/40/3e5e3cd198bd1b907e86d58e34ce904838f56680.pdf>, Երևանի քաղաքապետարանի 2015 թվականի տարեկան հաշվետվությունը

արանի ենթակայության 3 բուժհաստատություններում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ<sup>125</sup>: Ավանդական դարձած առողջապահական տարբեր ակցիաների շրջանակներում շուրջ 32000 երևանցիներ ստացել են անվճար բուժհետազոտության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև համապատասխան բուժման հնարավորություն<sup>126</sup>:

### **Գերեզմանների պահպանում**

2015թ. ընթացքում գերեզմանների կազմակերպման հարցը դեռևս մնում է արդիական հիմնախնդիր, սակայն տարվա ընթացքում կատարվել են այդ ոլորտը կարգավորող որոշ օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես, մի շարք փոփոխություններ են կատարվել «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում: Այսպես այդ օրենքում ավելացան մի շարք հասկացություններ, ինչպիսիք են «մասնակի փակ գերեզմանատուն», «բաց գերեզմանատուն», «մասնավոր գերեզմանատուն», «գերեզմանատան կառավարիչ», «ընտանեկան գերեզման»<sup>127</sup>: Փոփոխություններ կատարվեցին հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններում: Պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններ սահմանվեցին՝ բնագավառի պետական քաղաքականության մշակումը և իրականացումը, վերահսկողության իրականացումը, մասնավոր գերեզմանատան շահագործման համար թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների և պահանջների սահմանումը և այլն:

Սահմանվեցին նաև հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում համայնքի ղեկավարի իրավասությունները<sup>128</sup>:

Սահմանվեց նաև որ, գերեզմանատներում հուղարկավորությունների կազմակերպումը՝ գերեզմանների տրամադրումը, դրանց հաշվառումը, գերեզմանատների պահպանումն ու շահագործումն իրականացնում են համայնքային գերեզմանատների ղեկավարը՝ համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը կամ կազմակերպությունը, իսկ պետական գերեզմանատների ղեկավարը՝ լիազորված պետական մարմինը:

<sup>126</sup> Նույն տեղում

<sup>127</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=97854>, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքը

<sup>128</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=97854>, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքը

Հուղարկավորությունների կազմակերպումը՝ գերեզմանների տրամադրումը, դրանց հաշվառումը գերեզմանատների պահպանումն ու շահագործումը մասնավոր գերեզմանատան դեպքում իրականացնում են գերեզմանատան կառավարիչը կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այլ անձինք՝ վերջիններիս և գերեզմանատան շահագործողի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:

2015թ. ապրիլի 30-ին Երևան քաղաքի ավագանին կայացրեց «Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին» N 319-Ն որոշումը: Համաձայն այդ որոշման քաղաքացիական հոգեհանգստի ծառայություններ իրականացնելու և/կամ մատուցելու թույլտվությունը տալիս է Երևանի քաղաքապետը՝ ընթացիկ տարվա տեղական տուրքի վճարման անդորրագրի հիման վրա, եթե քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը թույլտվության տրամադրման պահին (ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ անգամ) համապատասխանում է այդ որոշման հավելվածում նշված սահմանափակումներին, պահանջներին և պայմաններին<sup>129</sup>:

### ***ՏԻՄ-երի կողմից համայնքային ծառայությունների մատուցման վճարներ սահմանելու իրավասությունը***

2015թ. ընթացքում ՏԻՄ-երի կողմից վճարներ սահմանելու իրավասությունը պայմանավորված է հիմնականում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2011 թվականին: Այդ օրենքը կարգավորում է այն հիմնական իրավական նախադրյալները, որոնք տարբեր համայնքների ավագանիների համար համայնքի ներսում աղբահանության և սանիտարական մաքրման վճարներ սահմանելու հիմք են հանդիսանում:

Զնայած օրենքով սահմանված է առավելագույն չափ, ըստ յուրաքանչյուր բնակչի ամսական 400 դրամ, կամ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ առավելագույնը 25 դրամ<sup>130</sup>, այնուամենայնիվ դեռ համայնքները չեն սահմանում աղբահանության և սանիտարական մաքրման համար օրենքով սահմանված

<sup>129</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97518> , «Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի(հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին» Երևան համայնքի ավագանու որոշում N 319-Ն

<sup>130</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69863> ,



առավելագույն չափը: Այսպես օրինակ, 2015թ. համար Երևան քաղաքում գործում է աղբահանության վճար յուրաքանչյուր բնակչի համար ամսական 200 դրամ, Արմվյան համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 250 դրամ<sup>131</sup>: Գյումրի համայնքում սահմանվել է համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեում հաշվառում ունեցող յուրաքանչյուր բնակչի հաշվարկով ամսական 100 դրամ<sup>132</sup>: Առինջ համայնքի տարածքում 2015թ. համար սահմանվել է աղբահանության վճար՝ մեկ անձին 200 դրամ<sup>133</sup>:

Ինչպես երևում է, համայնքներն անկախ են աղբահանության համար վճարներ սահմանելու հարցում և այդ վճարի չափը հիմնականում պայմանավորված է լինում համայնքի մեծությունից, կարողություններից և այլ հանգամանքներից, համայնքի տարածքում աղբահանությունը կազմակերպելու խնդիրներից:

ՏԲՄ-երը նաև իրավասու են համայնքի բնակիչների համար կազմակերպել նախադպրոցական կրթություն ու արտադպրոցական կրթություն և սահմանել վարձավճարներ նախադպրոցական կրթության և արտադպրոցական կրթության համար:

2015թ. Երևանում գործել են 166 համայնքային ենթակայության մանկապարտեզներ<sup>134</sup> և մոտավորապես 64 մասնավոր մանկապարտեզներ<sup>135</sup>: Չնայած այն հանգամանքին, որ Երևանում համայնքային ենթակայության մանկապարտեզները Երևանի բնակիչների համար անվճար են, դրանք մեծամասամբ գերբեռնված են: Մասնավոր մանկապարտեզների գները տատանվում են ամսական 5000-ից մինչ 100.000 դրամ<sup>136</sup>:

Արարատ քաղաքի թիվ 1, թիվ 2, թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ-ներ հաճախող Արարատ քաղաքի բնակիչների երեխաների համար սահմանվել է ամսական վարձավճար 3500 դրամի չափով:

<sup>131</sup> <http://abovyan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=04e38078-051e-46bf-96e3-292f73965ca1> , Արմվյան համայնքի ավագանու որոշում, 18 դեկտեմբերի 2014 թվականի N 82-Ն

<sup>132</sup> <http://www.gyumricity.am/data/varchakan%20taracqneri%20axbahanutyan%20vchar%202015.pdf>

<sup>133</sup> <http://arinj.am/CMIS/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=81762c48-d2ea-4394-b598-1c273acf8e9c> , Առինջ համայնքի ավագանու որոշումը Առինջ համայնքի տարածքում 2015 թվականի համար աղբահանության վճար սահմանելու մասին, 22 դեկտեմբերի 2014 թվականի N 69-Ա

<sup>134</sup> [http://www.edu.am/DownloadFile/421arm-Naxadproskan\\_cank.pdf](http://www.edu.am/DownloadFile/421arm-Naxadproskan_cank.pdf), ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություններ ցանկը

<sup>135</sup> <http://www.edu.am/DownloadFile/745arm-mankpartez-2016.pdf>, ՀՀ-ում գործող լիցենզավորված ոչ պետական նախադպրոցական հաստատությունների ցուցակ

<sup>136</sup> <http://araratcity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=77c1819e-96b6-45b7-b682-d9a8b065d787>, Արարատ համայնքի ավագանու որոշում N 40-Ն, 01 դեկտեմբերի 2014

## 7.2 Համայնքային ծառայությունների կառավարում

2015թ. ՀՀ համայնքների կողմից հանրային ծառայությունների մատուցման համար կատարվող ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 3304.3 մլն. դրամով, որը 2014թ. նույն ցուցանիշից ավել է 12.7%-ով (աղյուսակ 32): Դա դրական միտում է: Սակայն պետք է նկատել, որ համայնքային ծառայությունների մատուցման ծախսերի մեջ միայն Երևան համայնքի ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 58.4%:

2015թ. ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը ընդհանուր համայնքային ծառայությունների ծախսերի մեջ կազմել են 22.7%, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է 1.5 տոկոսային կետով: Այս ցուցանիշը հիմնականում պայմանավորված է եղել Երևան քաղաքով: Միայն Երևան քաղաքի համար ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը ընդհանուր համայնքային ծառայությունների ծախսերի մեջ կազմել են 10.1%, որը համեմատաբար դրական ցուցանիշ է, չնայած, որ Երևան քաղաքի համար նույն ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ աճել է 0.8 տոկոսային կետով:

ՀՀ մնացած համայնքների համար ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերն ընդհանուր համայնքային ծառայությունների ծախսերի մեջ կազմել են 40.5% և նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել են 1.2 տոկոսային կետով: Կարելի է փաստել, որ 2015թ. թե՛ Երևանի և թե՛ մնացած համայնքների աշխատակազմերի պահպանման ծախսերն աճել են, իսկ բնակիչներին մատուցվող համայնքային ծառայությունները նվազել:

2015թ. ընդհանուր հանրային բնույթի ծառայությունների մեջ շարունակում են գերակշռել կրթության գծով կատարվող ծախսերը: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ Երևան քաղաքում հիմնական և միջնակարգ կրթությունը պետության կողմից պատվիրակված լիազորություն է և հանդես է գալիս, որպես կրթական ծախս: Միայն Երևան քաղաքի համար կրթական ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 34.6%, մինչդեռ մնացած համայնքների համար կրթության գծով ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 24.2%:

2015թ. համայնքային ծառայությունների մեջ տեսակարար կշռով երկրորդ մեծ ծախսը բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով ծախսերն են՝ կազմելով ընդհանուր համայնքային ծախսերի 17%-ը: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 5.2 տոկոսային կետով, իսկ միայն Երևան քաղաքի համար բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 22.8%, որը 2014թ. եղել է 13.7%: Մնացած համայնքների համար բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով ծախսերը թե՛ 2014թ. և

թե՛ 2015թ. եղել են 8.8%՝ ընդհանուր համայնքային ծախսերի մեջ:

Համայնքներում տնտեսության պետական և ոչ-պետական հատվածներում զբաղված մասնագետների հետ անցկացված առանձին հարցման արդյունքները ցույց են տալիս, որ նրանց մոտ կեսը բավարարված է իրենց համայնքների կրթական հաստատությունների մատուցած ծառայություններից: Այսպես, մանկապարտեզների մատուցած ծառայությունները «լավ» կամ «շատ լավ» է որակել հարցված մասնագետների 54.6%, հիմնական դպրոցների ծառայությունները՝ 56%, միջնակարգ դպրոցների ծառայությունները՝ 46.6% և ավագ դպրոցների ծառայությունները՝ 47.9%<sup>137</sup>: Մասնագետների 75% կարծիքով Հայաստանում մանկապարտեզները կառավարվում են ՏԻՄ-երի կողմից, թեև 64% է կարծում, որ այդպես էլ պետք է լինի<sup>138</sup>:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի և հանրային ծառայությունների բոլոր ծախսերի հարաբերակցությունը կազմում է 3.4, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է 3.72 (աղյուսակ 32): Նույն ցուցանիշը միայն Երևան քաղաքի համար կազմում է 8.95, այսինքն կարելի է փաստել, որ Երևան քաղաքում բյուջեի մոտավորապես 1/10-րդ մասից մի քիչ ավելի մասն է ծախսվում ապարատի պահպանման համար, մինչդեռ մնացած համայնքներում՝ առանց Երևան քաղաքի, այդ ցուցանիշը կազմում է 1.47, որը նշանակում է, որ համայնքի վարչական ապարատի մեկ միավոր կատարված ծախսի դիմաց համայնքի աշխատակազմը մատուցում է 1.47 միավոր համայնքային ծառայություն, որը ցանկալի ցուցանիշ չէ: Այս նույն ցուցանիշի դինամիկան ևս դրսևորել է նվազման միտում. 2014թ. լինելով 1.52, իսկ արդեն 2015թ.՝ 1.47:

<sup>137</sup> ԲԱՐԵՓՈՒՄԵՆԵՐԻ ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐԶԻՆ. ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ, ԶԵԿՈՒՅՑ, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը, Երևան 2016

<sup>138</sup> Նույն տեղում

**Աղյուսակ 32. Համայնքների բյուջեներում ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը (2015թ.), հազար դրամ**

		2015 թվական					
	Ծախսերը	Ընդամենը համայնքներ <sup>139</sup>		Երևան քաղաք <sup>140</sup>		Ընդամենը քաղաքային և գյուղական համայնքներ առանց Երևան քաղաքի	
		Գումար	%	Գումար	%	Գումար	%
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայութ.	29,280,990.89	22.7	7,574,675.1	10.1	21,706,315.80	40.5
2.	Տրանսպորտ	14,394,810.04	11.2	11,299,340.7	15.0	3,095,469.34	5.8
3.	Կապ	0.00	0.0	0.0	0.0	0.00	0.0
4.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	11,347,804.96	8.8	7,555,093.0	10.0	3,792,711.96	7.1
5.	Բնակ. շինարար. և կոմունալ ծառայութ.	21,858,874.46	17.0	17,158,653.2	22.8	4,700,221.30	8.8
6.	Առողջապահություն	336,904.25	0.3	294,130.9	0.4	42,773.38	0.1
7.	Հանգիստ մշակույթ և կրոն	8,837,009.90	6.9	3,717,073.6	4.9	5,119,936.30	9.6
8.	Կրթություն	39,030,998.65	30.3	26,046,054.3	34.6	12,984,944.35	24.2
9.	Սոցիալական պաշտպանություն	3,830,987.86	3.0	1,691,955.2	2.2	2,139,032.70	4.0
10.	<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>128,918,381.00</b>	<b>100.0</b>	<b>75,336,975.9</b>	<b>100.0</b>	<b>53,581,405.12</b>	<b>100</b>
11.	<b>Հանրային ծառայութ. ծախսերի և ընդհ. բնույթի հանրային ծառայութ. ծախսերի հարաբերակցությունը</b>	<b><u>3.40</u></b>		<b><u>8.95</u></b>		<b><u>1.47</u></b>	

<sup>139</sup> <http://minfin.am/index.php?cat=78&lang=1>

<sup>140</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104412>, Երևան քաղաի ավագանու որոշում N 482-Ն, Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին

## Եզրակացություններ և առաջարկություններ

2015թ. Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգում գրանցված առաջընթացը հիմնականում վերաբերում է համայնքների խոշորացմանը:

2005թ. սահմանադրական փոփոխություններով նախատեսված օրենսդրական փոփոխություններ և լրացումներ են կատարվել համայնքների խոշորացմանը վերաբերող դրույթներում: Տարվա ընթացքում ընդունվեցին համայնքների միացման կամ բաժանման սկզբունքների, կարգի և նոր ձևավորված համայնքներում ՏԻՄ-երի ընտրության ժամկետների սահմանման մասին դրույթները: Այդպես էլ չնդունվեցին միջհամայնքային միավորումների ձևավորման, համայնքային արժեթղթերի թողարկման և հյուրանոցային հարկի վերաբերյալ օրենքներ կամ օրենսդրական դրույթներ:

Առկա բոլոր պետական ծրագրային փաստաթղթերը (ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր) պարունակում են գրեթե նույն դրույթները և հիմնականում արտացոլում են սահմանադրական փոփոխությունների օրենսդրական պահանջների ապահովումը:

2015-ին պահպանվել է ՀՀ օրենսդրությունում առկա թերությունը, այն է՝ տեղական հարկեր համարված գույքահարկի և հողի հարկի դրույթաչափերը շարունակել են սահմանված մնալ օրենքով, դրանց սահմանման իրավունքը, օրենքով նախատեսված շրջանակներում, չի վերապահվել ՏԻՄ-երին՝ ինչպես պահանջում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (հոդված 9.3):

2015-ին Հայաստանի վարչատարածքային բաժանման մեջ որևէ փոփոխություն չի կատարվել: Միայն ընտրվել են 14 պիլոտային համայնքների փնջեր, որտեղ կատարվել են ուսումնասիրություններ և դրանցից 3-ում անց են կացվել տեղական հանրաքվեներ համայնքների խոշորացման հարցադրմամբ:

Տեղական ինքնակառավարման միավորները՝ համայնքները, շարունակում են մնալ խիստ մասնատված և թույլ կարողություններով: Միջհամայնքային համագործակցության զարգացման առումով փոփոխություններ չեն գրանցվել: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2015-ին միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել:

2015թ. անփոփոխ են մնացել ՏԻՄ-երի ընտրությունների ժամկետը, անցկացման ձևը և կարգը: Սակայն 2015թ. սահմանադրական փոփոխություններով ՏԻՄ-երի պաշտոնավարման ժամկետը դարձել է հինգ տարի:

2015թ., ինչպես և նախորդ տարիներին, ՏԻՄ-երի ընտրությունները կատարվել են բավականին թույլ մրցակցային միջավայրում, շատ դեպքերում նույնիսկ վերջինիս բացակայության պայմաններում: 2015թ. որոշակի փոփոխություններ են նկատվել համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելիության առումով: 2015թ. ավելի քան 3 անգամ կրճատվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ներկայացնող համայնքի ղեկավարների թիվը և 50-ով ավելացել անկուսակցական համայնքի ղեկավարների թիվը: Այդուհանդերձ, համայնքների ղեկավարների մեծամասնությունը դարձյալ Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչներ են: 2015թ. երկուսով ավելացել են համայնքի

ղեկավարի և ավագանու իրավասությունները: Համայնքի ղեկավարին ամրագրվել է մեկ նոր պարտադիր լիազորություն քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում: Չեն ընդունվել պարտադիր լիազորությունների իրականացման կարգեր: 2015թ. տեղական ինքնակառավարման պատմության մեջ առաջին անգամ կառավարության նախաձեռնությամբ անց է կացվել տեղական հանրաքվե: Մոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում են, որ բնակիչները դեռևս այդքան էլ բավարարված չեն ՏԻՄ-երի աշխատանքից: 2015թ. անփոփոխ են մնացել Ֆրիդոմ Հաուսի գնահատականները: Աշխատանքներ են կատարվել տեղական ինքնակառավարմանը բնակչության և քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու և բարձրացնելու ուղղությամբ: 2015-ին գաղտնիության և վատ աշխատանքի խորհրդանիշ համարվող «Ժանգոտ կողպեք» մրցանակը բաժին է հասել Արմավիրի քաղաքապետարանին: «Սև ցուցակում» դարձյալ կա ՏԻՄ-երի ներկայացուցիչ: 2015թ., ինչպես և նախորդ տարիներին, բնակիչները շարունակել են դիմում-բողոքներ ուղղել Սարգոյ իրավունքների պաշտպանին տարբեր հարցերով:

Համայնքների ֆինանսական անկախության մակարդակը շարունակում է մնալ ցածր, իսկ սեփականությունը՝ անբավարար և հնացած: 2015 թվականին ևս, ինչպես նախորդ տարիներին, պետական բյուջեին ամրագրվող հարկատեսակներից և պարտադիր վճարներից համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

Ընդհանուր առմամբ, համայնքները դեռևս շատ հեռու են վարկային շուկա մուտք գործելու հնարավորությունից: 2015թ. ևս համայնքները չեն թողարկել պարտատոմսեր:

Համեմատելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության Հայաստանի և Եվրամիության երկրների ցուցանիշները, տեսնում ենք, որ Հայաստանն առայժմ էականորեն զիջում է Եվրամիության երկրներին, մասնավորապես՝ երկրի հանրային ծախսերում և ՀՆԱ-ում համայնքների բյուջեների հանրագումարային ծախսերի տեսակարար կշռի, բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի չափերով: Դա նշանակում է, որ 2015-ին Հայաստանում իշխանության ապակենտրոնացման աստիճանը շարունակում է մնալ ցածր:

Չնայած տարեցտարի զգալիորեն աճել են ՀՀ համայնքների բյուջեների՝ ինչպես եկամտային և ծախսային բացարձակ ցուցանիշները, այնպես էլ դրանց կատարողականները, ՀՀ համայնքների մեծամասնությունը դեռևս չի կարողանում ամբողջական ծավալով և լիարժեքորեն իրականացնել օրենքով ՏԻՄ-երին վերապահված բոլոր լիազորությունները, հատկապես՝ համայնքային ծառայությունների մատուցման մասով, որի պատճառով ՀՀ բնակչության գերակշռող մասի կենսամակարդակը նկատելի դրական փոփոխությունների չի ենթարկվել:

2015-ին ևս ՀՀ բոլոր համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների/ծախսերի մեջ մոտ 60%-ը կազմում են միայն Երևան քաղաքի բյուջեի ընդհանուր եկամուտները/ծախսերը: Իսկ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՀ համայնքների բյուջեների (առանց Երևանի) եկամուտները/ծախսերը մոտ 2.7 անգամ ցածր են, քան Երևանի բյուջեի նույն ցուցանիշները:

2015-ին ևս, ինչպես նախորդ տարիներին էր, ՀՀ համայնքների (առանց Երևան

քաղաքի) բյուջեների ըստ գործառական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռներն էականորեն տարբերվում են ինչպես ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների, այնպես էլ Երևանի բյուջեի ծախսերի տեսակարար կշիռներից ընդհանուր ծախսերում: Օրինակ, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2015թ. բյուջեներում ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է և կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 41.6%-ը, ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեներում՝ 22.7%, իսկ Երևանի բյուջեում՝ ընդամենը 9.8%:

ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցություններն ընդհանուր ծախսերում վերջին 5 տարիներին փոփոխվել են տարբեր համամասնություններով: Եթե 2011-2013թթ. ժամանակահատվածում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում 28.9%-ից նվազել է՝ հասնելով մինչև 22.4%, իսկ 2014-ին այն դրսևորել է որոշակի աճի միտում՝ բարձրանալով մինչև 24.0%, ապա 2015-ին այն կտրուկ նվազել է՝ իջնելով մինչև 12.9%:

Երևան քաղաքի 2011-2014թթ. բյուջեների ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 32.8%, 28.0%, 26.8% և 29.0%, իսկ 2015-ին այն ավելի կտրուկ է նվազել, իջնելով մինչև 10.9%:

2015-ին ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) համար հաշվարկված՝ ընդհանուր ծախսերում աշխատավարձերի և հավելավճարների տեսակարար կշիռը (ընդամենը 33.1%) մոտ 4.5 անգամ բարձր է Երևան քաղաքի համար հաշվարկված նույն ցուցանիշից (ընդամենը 7.3%), որը հիմնականում պայմանավորված է երկու հանգամանքներով՝ համայնքների (առանց Երևանի) ու նրանց ենթակա կազմակերպությունների աշխատակազմերի ուժճացված լինելով և համայնքների բյուջեների եկամուտների ընդհանուր անբավարարությամբ:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների մեծ մասի մասնագիտական կարողությունները բավարար չեն հանրային ծառայությունները ողջ ծավալով և բավարար որակով մատուցելու համար, իսկ բյուջետային միջոցներն այնքան սուղ են, որ հիմնականում բավարարում են միայն համայնքի աշխատակազմը պահպանելու համար: Միջոցների այսպիսի սղությունը հանգեցնում է մի շարք խորքային խնդիրների: Այդ ամենով պայմանավորված՝ ՏԻՄ-երը լիարժեքորեն չեն կատարում իրենց կարևոր դերը հանրային կառավարման համակարգում:

Համայնքների աշխատակազմերում թերևս ամենաէական կառուցվածքային փոփոխությունները հաշվետու տարում կապված են համայնքների խոշորացման և դրա արդյունքում բազմաբնակավայր համայնքներում աշխատակազմի վարչական ներկայացուցչի ինստիտուտի ներդրման հետ:

Համայնքային ծառայության մասին օրենքի ընդունումից ի վեր բավականաչափ աշխատանք է կատարվել համայնքային ծառայության ինստիտուտի կայացման և արմատավորման ուղղությամբ: Սակայն դեռևս շատ խնդիրներ կան, որոնք պետք է ժամանակի ընթացքում իրենց լուծումը ստանան: Այդ խնդիրների շարքին կարելի է դասել համայնքային ծառայության արդյունավետության ցածր մակարդակը, համայնքային ծառայողների ընտրության, ատեստավորման, վերապատրա-

ստման և մասնագիտական առաջխաղացման կառուցակարգերի անկատարությունը, խրախուսման համակարգերի անարդյունավետությունը և այլն: Առանց վերոնշյալ խնդիրների լուծման անհնար կդառնա համակարգի հետագա զարգացումը և կատարելագործումը:

Համայնքային ծառայության համակարգում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքային ծառայողների թիվը 6076 է եղել, որից տարվա ընթացքում վերապատրաստվել է 1268-ը՝ 833-ը՝ պետական բյուջեի հաշվին, 435-ը՝ համայնքային բյուջեների: Վերլուծությունները ցույց են տալիս, որ համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգում բավարար ուշադրություն չի դարձվում գործնական հարցերին, տարբեր հավանական իրավիճակների հետազոտմանը և քննարկմանը:

2015թ. ևս տարբեր միջազգային կազմակերպություններ շարունակել են գործունեություն իրականացնել Հայաստանի բազմաթիվ համայնքներում: Նրանց գործունեությունը շարունակում է անհրաժեշտ և պահանջված մնալ համայնքների համար: Նրանք սովորաբար գործում են՝ համագործակցելով ՀՀ կառավարության հետ, հաճախ՝ փոխհամագործակցում են միմյանց հետ, սակայն ոչ բոլոր հնարավորություններն են օգտագործվում արդյունավետ ձևով:

2015թ. համայնքային ծառայությունների մատուցման ոլորտում շարունակվել են ծավալուն աշխատանքներ իրականացվել մայրաքաղաքում: Երևան քաղաքին բաժին է ընկնում համայնքների ընդհանուր բյուջետային ծախսերի ավելի մեծ մասնաբաժին, քան մնացյալ բոլոր համայնքներին՝ միասին վերցրած: Այդպիսով, բավականին բարձր է Երևանի բյուջեում հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը: Մարզերում ընդգրկված համայնքներում ցածր է հանրային ծառայությունների ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը, այսինքն բավականին բարձր են համայնքների աշխատակազմերի պահպանման ծախսերը: Մարզերում ընդգրկված համայնքներում ծառայությունների մատուցման բնագավառում այս կամ այն չափով աշխատանքներ են իրականացնում հիմնականում քաղաքային և խոշոր գյուղական համայնքները:

### **Վերը նշված եզրակացությունների հիման վրա կարելի է կատարել հետևյալ առաջարկությունները**

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման համար շարունակում է կարևոր մնալ բարեփոխումների ընթացքի արագացումն այդ ոլորտի բոլոր ուղղություններով: Խոսքը վերաբերում է ինչպես օրենսդրական դաշտի համալրմանը, այնպես էլ օրենսդրության փաստացի իրականացմանը: Մասնավորապես, անհրաժեշտ է ընդունել միջհամայնքային միավորումների մասին օրինագիծը, «Ֆինանսական համահարթեցման մասին» և «Տեղական տուրքերի ու վճարների մասին» նոր օրինագծերը, ինչպես նաև մշակել ու ընդունել համայնքային պարտատուների թողարկման մասին օրենքը:

Նշված օրինագծերի ընդունումն օրակարգից չի կարող հանել Տեղական ինքնակառավարման զարգացման կամ ապակենտրոնացման ռազմավարական ծրագրի



ընդունման հարցը: Դա հնարավորություն կտա մեկ փաստաթղթում ամրագրել Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի տեսլականը, դրան հասնելու ուղիներն ու քայլերի կատարման հաջորդականությունը և ժամկետները:

Անհրաժեշտ է ուղղել 2010թ. ընդունված տեղական հարկերի օրենսդրական փաթեթում թույլ տրված սխալը, այն է՝ գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերի սահմանման իրավունքն օրենքով սահմանված շրջանակներում վերապահել համայնքի ավագանուն:

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումն անհնար է առանց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման: Այս հարցերը ևս շուտափույթ լուծում են պահանջում:

ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորություններն ամբողջական ծավալով և լիարժեքորեն իրականացնելու համար կարևոր է օրենքով համայնքներին ապահովել ֆինանսավորման նոր աղբյուրներով և միջոցներով: Մասնավորապես, կատարելագործել ՀՀ օրենսդրությունը՝ պետական հարկերից համայնքների բյուջեներին մասհանումներ կատարելու և համայնքներին կապիտալի շուկա ներգրավելու ուղղություններով (անհրաժեշտ է մշակել և ընդունել համապատասխան կարգեր՝ համայնքների կողմից առևտրային բանկերից և ֆինանսական հաստատություններից փոխառու միջոցներ վերցնելու մասին, համայնքային պարտատուներ թողարկելու մասին, մշակել և կիրառության մեջ դնել համայնքների վարկունակության գնահատման համակարգեր և գործիքներ), զարգացնել պետական բյուջեից համայնքներին նպատակային միջոցների հատկացման պայմաններն ու կառուցակարգերը:

ՏԻՄ-երի ընտրությունների առումով կարևոր է համայնքի ավագանու ընտրությունների անցկացումը, միաժամանակ կիրառելով թե համամասնական և թե մեծամասնական ընտրակարգերը: Շարունակում է արդիական մնալ ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման կարգերի հստակեցման խնդիրը: Անհրաժեշտ է ընդլայնել ՏԻՄ-երի հրապարակայնությունն ապահովող գործիքների կազմն ու նման գործիքներ ունեցող համայնքների ցանկը: Կարևոր է հետևողական լինել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցությունն ապահովող օրենսդրական դրույթները կյանքի կոչելու հարցում՝ ակտիվացնելով բնակչությանն ու քաղաքացիական հասարակությանը, մասնավոր հատվածի կազմակերպություններին, ընդլայնելով մասնակցայնությունն ապահովող տարբեր գործիքների (օրինակ, կարճ հաղորդագրություններ) կիրառումը:

Հիմնվելով Հայաստանում ընթացող համայնքների խոշորացման բարեփոխումների փուլային արդյունքների և միջազգային փորձի վրա մի շարք բնագավառներում ծրագրել և աստիճանաբար իրականացնել պետական կառավարման մարմինների լիազորությունների ապակենտրոնացում (համապատասխան ֆինանսավորմամբ) դեպի ՏԻՄ-եր՝ բարձրացնելով Հայաստանում իշխանության ապակենտրոնացման աստիճանը:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ բարելավման և հետագա զարգացման կարիք ունեն մատուցվող բոլոր համայնքային ծառայությունները, որոնք շատ համայնքներում հեռու են բավարար լինելուց:

## Գրականություն

- 1 ՀՀ Սահմանադրություն
- 2 Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
- 3 ՀՀ Ընտրական օրենսգիրք
- 4 «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 26 փետրվարի 2015թ.
- 5 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 26 փետրվարի 2015 թ.
- 6 «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 24 նոյեմբերի 2015թ.
- 7 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 19 հունիսի 2015 թ.
- 8 «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 19 հունիսի 2015թ.
- 9 «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 29 ապրիլի 2015թ.
- 10 «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը
- 11 «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը
- 12 ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2015թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն
- 13 Ամփոփ տեղեկանքներ 2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության վերաբերյալ
- 14 Տարեկան հաղորդում 2015թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան 2016
- 15 «Բարեփոխումների երկար ճանապարհին. ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը քաղաքացիների աչքերով» զեկույց, Երևան 2016, Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ
- 16 ԲԿԳ Հայաստան. Քաղհասարակության զեկույց, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Երևան 2015
- 17 Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.), գիրք 2, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2008, էջ 62-85

- 18 Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007 և 2008թթ.), գիրք 3, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2009, էջ 26-31, 95-99
- 19 Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009 և 2010թթ.), գիրք 4, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2011, էջ 33-47, 127-138
- 20 Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011թ.), գիրք 5, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2012, էջ 32-46
- 21 Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2012թ. և 2013թ.), գիրք 6, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, 2015
- 22 Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2014թ.), գիրք 7, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, 2015
- 23 Nations in Transit 2016
- 24 Subnational public finance in the European Union, Dexia, January, 2013
- 25 [www.mta.gov.am](http://www.mta.gov.am)
- 26 [www.ypc.am](http://www.ypc.am)
- 27 [www.cfoa.am](http://www.cfoa.am)
- 28 [www.elections.am](http://www.elections.am)
- 29 [www.ombuds.am](http://www.ombuds.am)
- 30 [www.freedomhouse.org](http://www.freedomhouse.org)
- 31 [www.foi.am](http://www.foi.am)
- 32 [www.e-gov.am](http://www.e-gov.am)
- 33 [www.armstat.am](http://www.armstat.am)
- 34 [www.mta.gov.am](http://www.mta.gov.am)
- 35 [www.armstat.am](http://www.armstat.am)
- 36 [www.minfin.am](http://www.minfin.am)
- 37 [www.yerevan.am](http://www.yerevan.am)
- 38 [www.cfoa.am](http://www.cfoa.am)

Հավելված 1. ՀՀ մարզերում համայնքի ղեկավարների և ավագանու կողմից 2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում կազմակերպված ընդունելությունները<sup>141</sup>

Հ/հ	ՀՀ Մարզ		Ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը			Համայնքի ղեկավարի մոտ		Համայնքի ավագանու մոտ	
	Մարզ	Համայնքների թիվը	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	Ընդունելություններին դիմած քաղաքացիների թիվը	Ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը	Ընդունելություններին դիմած քաղաքացիների թիվը	Ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը
1	Արագածոտն	114	97	114	114	16979	16024	6473	5907
2	Արարատ	97	97	96	97	19321	19625	1198	1148
3	Արմավիր	97	97	97	97	10146	10115	1860	1859
4	Գեղարքունիք	92	88	91	91	7732	7477	1958	1770
5	Կոտայք	67	67	67	67	7017	6938	508	491
6	Լոռի	113	92	96	96	2858	2850	3042	3027
7	Շիրակ	119	119	119	119	14422	14422	2498	2498
8	Սյունիք	109	39	22	16	1497	1462	244	224
9	Վայոց ձոր	44	44	44	44	3859	3677	317	274
10	Տավուշ	62	57	62	62	1865	1583	471	258
	<b>Ընդամենը</b>	<b>914</b>	<b>814</b>	<b>808</b>	<b>803</b>	<b>85696</b>	<b>84173</b>	<b>18569</b>	<b>17456</b>

<sup>141</sup> Աղբյուրը՝ [www.mta.gov.am](http://www.mta.gov.am), 2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում ՀՀ համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը:

Հավելված 2. 2015 թ. ՀՀ մարզերում համայնքների բյուջեների հրապարակայնությունը<sup>142</sup>  
(1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների տվյալներով)

Հ/հ	Մարզ	Համայնքների թիվը	Տեղադրում ցուցատախտակներին և տեսանելի այլ վայրերում			Հեռարձակում հեռուստատեսությամբ			Հրապարակում թերթերում			Հրապարակում Ինտերնետային կայք էջում		
			1-ին համայնք	2-րդ համայնք	3-րդ համայնք	1-ին համայնք	2-րդ համայնք	3-րդ համայնք	1-ին համայնք	2-րդ համայնք	3-րդ համայնք	1-ին համայնք	2-րդ համայնք	3-րդ համայնք
1	Արագածոտն	114	114	114	114	0	0	0	2	2	2	55	55	55
2	Արարատ	97	97	97	97	1	1	1	4	4	4	90	90	90
3	Արմավիր	97	97	97	97	97	27	27	27	39	39	39	97	97
4	Գեղարքունիք	92	89	89	89	4	4	4	41	46	48	29	29	29
5	Կոտայք	67	67	67	67	2	1	1	0	1	0	67	67	67
6	Լոռի	113	113	113	113	4	3	3	4	4	4	25	25	25
7	Շիրակ	119	119	119	119	6	6	6	4	3	5	119	119	119
8	Սյունիք	109	109	109	109	0	0	0	1	1	1	9	9	9
9	Վայոց ձոր	44	44	44	44	0	0	0	0	0	0	44	44	44
10	Տավուշ	62	62	62	62	15	15	15	4	4	4	62	62	62
	<i>Ընդամենը</i>	<i>914</i>	<i>911</i>	<i>911</i>	<i>911</i>	<i>129</i>	<i>57</i>	<i>57</i>	<i>87</i>	<i>104</i>	<i>107</i>	<i>539</i>	<i>597</i>	<i>597</i>

<sup>142</sup> Աղբյուրը՝ [www.mta.gov.am](http://www.mta.gov.am), Ասիլոյի տեղեկանքներ 2015թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության վերաբերյալ:



Համայնքների  
ֆինանսիստների միավորում



# LOCAL SELF-GOVERNMENT IN ARMENIA

(2015)

Book 8

Edited by David Tumanyan, Ph.D. Economics

Yerevan  
  
<Van Aryan>  
2016

This book is published by the support of American people through the United States Agency for International Development (USAID). The contents of this publication are the sole responsibility of the authors and do not necessarily reflect the views of USAID and U.S. Government.

**Local Self-government in Armenia (2015),**  
Book 8, edited by David Tumanyan – Yerevan, 2016, 232 p.

*This book contains 2015 Armenia local self-government monitoring report.*

*This book is intended for policy and decision makers in the area of decentralization and local self-government, representatives of local self-government bodies, international and non-government organizations and larger groups of readers interested in the field.*

© Communities Finance Officers Association  
© David Tumanyan

ISBN 978-9939-70-179-0

# CONTENT

<b>PREFACE</b> .....	<b>131</b>
----------------------	------------

## REPORT

<b>LOCAL SELF-GOVERNMENT IN ARMENIA (2015)</b> .....	<b>133</b>
--	------------

1. Legal and programmatic assessment of local self-government reforms.....	134
1.1 Legal assessment of local self-government reforms.....	134
1.2 Programmatic assessment of local self-government reforms .....	137
1.3. Performance under international commitments .....	138
2. Administrative territorial division and inter-municipal cooperation .....	140
2.1 Administrative territorial division.....	140
2.2 Inter-municipal cooperation.....	147
3. Formation, powers, authorities and activities of LSGs, participation of civil society in local governance .....	148
3.1 Formation, powers, authorities and activities of LSGs.....	148
3.2 Participation of civil society in the local governance .....	156
4. Property of municipalities, development programs and financial autonomy .....	159
4.1 Municipal property .....	159
4.2 Municipal development plans and budgeting .....	162
4.3 Municipal budget revenues .....	163
4.4 Debt management .....	169
4.5 Financial accountability .....	169
5. Relevance of LSG powers and municipal finances .....	170
6. Relevance of administrative structure, human and information resources to municipal issues and international support .....	185
6.1 General capacities of LSGs and municipal staff.....	185
6.2 Municipal service.....	192
6.3. Training of municipal servants .....	196
6.4 International support .....	199
7. Delivery of public services .....	205
7.1 Public services delivered by municipalities.....	205
7.2 Management of municipal services .....	217
Conclusions and recommendations .....	219
Bibliography .....	224



## LIST OF ACRONYMS

**ARF** -Armenian Revolutionary Federation  
**CELoG** -Civic Engagement in Local Governance  
**CFOA** -Communities Finance Officers Association  
**CoE-Council of Europe**  
**CORLEAP** - Conference of Regional and Local Authorities for the Eastern Partnership  
**CPA** -Communist Party of Armenia  
**CRRC** -Caucuses Research Resource Center  
**DLP** - Democracy and Labor Party  
**ENP** -European Neighborhood Policy  
**EU** -European Union  
**FYMDP** -four-year municipal development plan  
**GDP** -gross domestic product  
**GIZ** - German Agency for International Cooperation  
**ISDTC** -Information Systems Development and Training Center  
**LS** -Legal State (party)  
**LSG** -local self-governmnet  
**MMIS** –municipal management information systems  
**MNCO** -municipal non-commercial organization  
**NGO** -non-government organization  
**NPO** -non-profit organization  
**OGP** -Open Government Partnership  
**PAP** -Prosperous Armenia Party  
**RA-Republic of Armenia**  
**RPA** -Republican Party of Armenia  
**USAID** -United States Agency for International Development

## PREFACE

